

Ժ. ՏԱՐԻ

ԹԻԻ 6

ՅՈՒՆԻՍ 1973

by R.A.R.@

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ



Բ. ԿՌԱՆՆԱՆ . . . . .	Տպաւորութիւններ
Ա. ՆՈՒՐԵԱՆ . . . . .	Ցայտադրիւր
Ն. ՎԻՐԱՊԵԱՆ . . . . .	Պիտի գայ ազգիկս, պիտի գայ...
Գ. ՊԸԼՏԵԱՆ . . . . .	**
Ա. ՇԻՐԱԿԵԱՆ . . . . .	«Կտակն էր նահատակներուն»
Կ. ՍԱՍՈՒՆԻ . . . . .	Արշաւիր Շիրակեան
Ա. ԵՐԿԱԹ . . . . .	Վրիժառու
Բ. ՓԱՓԱԶԵԱՆ . . . . .	Կտակն էր Արշաւիրին
«ՏԸ ԲԵՔԸՐՏ» . . . . .	Ա. Շիրակեան թուրքերը ահաբեկեց...
Պ. ՄՆԱՊԵԱՆ . . . . .	Ատրճանակը...
Ն. ԶԱՐԽՈՒՏԵԱՆ . . . . .	Արդարութեան աջը
Յ. ՄԱՆՈՒԿԵԱՆ . . . . .	Ի համբայ արութեան
Տ. ԹԵՐԼԷՄԷՋԵԱՆ . . . . .	Ասիւծասիրտն Արշաւիրի մասին
Ա. ՆՈՒՐԵԱՆ . . . . .	Վերջին ձեռքը...
ՓԻԷՒ ՏԷ . . . . .	Ինչ որ գիտեմ Սուլթանիցի մասին
Մ. ՆՇԱՆՆԱՆ . . . . .	Վէպ, սեռականութիւն և ժամանակ
Մ. ԷՍԼԻՆ . . . . .	Սամուէլ Պէքէր
Ս. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ . . . . .	Նշմարներ արաբ գրողներու համագումարին առիթով

# Բազմը

## ԱՆՍԱԳԻՐ ԳՐԱԿԱՆՈՒՐԵԱՆ ԵՎ ԱՐՈՒԵՍՏԻ

Ժ.Ր. ՏԱՐԻ. ԹԻԻ Ե

Յ Ո Ւ Ն Ի Ս 1 9 7 2

ՊԵՏՐՈՒՐ

Բ. ԿՈՒՆԵԱՆ

### ՏՊԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Մեր քաղաքակրթության դժայիկ սովորութիւններէն մէկն է արձա-  
հուրդը: Հակառակ ժողովրդավարութեան եւ մարդկային իրաւունքներու  
յաղթանակներուն, մեր ընկերային կառոյցին եւ թեքնագիտութեան գերին  
դարձած ենք: Մարդկային էակը թէեւ հասած է մասնումի եւ խօսքի ազա-  
տութեան, եւ սակայն, խորհելու, զգալու եւ արտայայտուելու ո՛չ ժամա-  
նակ ունի, ոչ ալ ունակութիւնը: Պայմանները, վաղուան վախը զինք կաշ-  
կանդած են: Սոկրատ բաժ է, որ երջանկութիւնը կը կայանայ քիչ բանի  
պահանջ ունենալուն մէջ: Մենք պատմութեան ամէնէն շատ պահանջ ունե-  
ցող մարդկութիւնն ենք: Եւ դժբախտ ենք:

Ուստի՝ արձակուրդը միակ փախուստի էլքն է: Նոյն ճամբէն չբալիւ,  
նոյն դէմքերը շտանել, նոյն գործերով չզբաղիլ, ընկերային ամէնօրեայ  
պարտադրանքներէն եւ պատասխանատուութիւններէն ազատուիլ, կարճ՝  
պարզապէս ինքզինքդ ըլլալ: Ենչեւ ազատօրէն, մտածել, զգալ եւ ստեղծա-  
գործել թերեւս: Վերագտնել անձդ:

Թուրքն կ'ըսէր. «Ժողովրդավարութիւնն ալ իր հիւանդութիւնները ու-  
նի»: Ժողովրդավարութեան նուաճումներէն են ճարտարարուեստականացու-



մը եւ զանգուածային մտածողութիւնը: Այսօր Միացեալ Նահանգներու մէջ, ուր կ'ապրիմ, ժարդիկ նոյն ոճով կը հագուին, նոյն ձեւով կը շարժին, նոյն կերպով կը սրամաքանեն եւ նոյն բառամթերքը կը գործածեն: Ձեռն հանդուրժեր մէկը, որ տարբեր կը մտածէ ու կ'արտայայտուի: Հիփիփերը եւ էիփիփերը հակազդեցութիւնն են: Ախտանշաններն են, որ բան մը հիւանդ է մեր քաղաքակրթութեան մէջ: Նոյնն է պարագան Հին Աշխարհի մէջ: Այս-ցեղեցէք, ո՛ր որ կ'ուզէք, սմերիկայացման ներթափանցումը աւելի քան բա-ցայայտ է:

Տարիներ առաջ, եկած եմ այս վայրերը եւ զբաժնուցուցիւք ինձնէրոս անհատ արուեստագէտներու եւ անոնց գործերուն մասին: Այժմ կ'ուզեմ վե-րազնահատումը ընել դատումներու: Ժամանակը յաճախ կը փոխէ մեր ըմ-բռնումները կամ, ընդհակառակն, նոր խորացումներու եւ յայտնութիւն-ներու կը տանի: Կը զբւժնուր տպագրութիւններս, առանց նախորդին հետ յաղդատելու, ի պին կարելի կրկնութիւններու:

Վերանորոգուելու եւ ներշնչուելու միակ ակերբ կը մնան մարդկային մշակոյթի ստեղծագործութիւնները: Եղիպտոս, Յունաստան, եւրոպական կեդրոնները: Մայրաքաղաքն Արեւելք: Այսօր մանաւանդ, անոնք միայն կրնան ցնցել եւ արթնցնել մեր էութիւնները: Բնութիւնը արդէն կորսնցուցած է իր կախարհանքը եւ չի ներշնչեր այլեւս: Տրամը, տաքնապը, զեղեցկութիւնը աւելի քան երբեք, փոխադրուած են ներսը: Միտքարանք է տեսնել, որ զարժ մը, արչաւ մը կայ զէպի Եւրոպայի թանգարանները եւ կոթողները: Մտազ-րութիւնները չեն էականը, այլ ծարաւը: Ոմանք կու գան հետաքրքրութեամբ, ուրիշներ՝ պարզապէս տեսած ըլլալու, քիչեր՝ վայելելու համար: Կու գան հարիւր հազարներով: Թանգարաններու մէջ անհնար է անարգել շարժել կամ կարենալ կենալ եւ դժայիլ արուեստի երկի մը:

Սպանիա միշտ կախարհանք մը ունեցած է ինծի համար: Աշխարհի եր-կու մշակոյթները բախած են Հոն եւ Հաշտուած: Արեւելք եւ Արեւմուտք: Մնած է ամէնէն աւինջնող արուեստներէն մէկը: Յաճախ մենք կը խօսինք մշակոյթի զտութեան մասին: Երաբերական եւ պայմանադրական հասկա-ցողութիւն: Հոն՝ ուր մշակոյթներ մտած են շիման մէջ, արդիւնքը եղած է բարեբար: Բացարձակ մշակոյթ զոյութիւն չունի: Հելլադան ներշնչուեցաւ Եղիպտոսէն եւ Արեւելքէն: Նոյնը՝ Հոտմ, Եղրուսկները հիմնեցին դայն: Բիւ-զանդիոն, Հայաստան, վերածնունդ: Մակրնթացութիւն եւ տեղատուութիւն: Մարդկային Հոգեկան կեանքը կը հպատակի նոյն բնութեան օրէնքներուն: Ի վերջոյ, Արեւելք-Արեւմուտք աշխարհագրական սահմաններ են: Ըստ էութեան՝ մարդկային մշակոյթը մէկ է:

Սպանիա ուսմանթիք է: Բարձր արտայայտութեան հասած է արուես-տի մէջ, աւելի քան մտածումի: Մթին, արիւմտարինդիւր եւ զգացումով խան-դավաւ: Արեւելքը մօտ է սրտին: Իր երաժշտութեան, պարին եւ նկարչու-թեան մէջ ջերմութիւն մը կայ, ջերմութիւնը էակին, որ հրայրքի մէջ է եւ կ'ապրին ներհուն կեանք մը: Ուժեղօրէն կը զգայ ժամանակը: Ծակատուգրա-պաշտ եւ գոյութեան հետ հաշտ: Վարկեանի մը մէջ ապրիլ գոյութեան բո-վանդակ հրաշքը եւ վայրկեանի մը մէջ ինչալ: Կնոջ նայուածքին, ճակատա-մարտին կամ ցուլին դիմաց: Պաշտ, գոյութիւնն ամբողջ պահին մէջ խտա-ցած: Այդ է պատճառը, որ մեղքը սիրած է Սպանիան: Կրօնական զգացումը հզոր է Հոն, ուր կայ մեղքը եւ մեղքի զգացումը: Զղջումէն կը ծնին սուրբերն

ու նահատակները: Հաւատաքննութիւնը ամէնէն աւելի զօրաւոր էր Սպանիոյ մէջ եւ հոն է, որ ամէնէն աւելի հանդուրժուած է:

Իր մեծ նկարիչներէն միայն եկուոր էլ Կրեթոն ձգտած է երկնքին: Վիլլառքէզ եւ Կոյա իրենց արժանները թաղած են հողին մէջ: Մինչեւ իսկ շտրունակ կրօնական հաճելի նկարներ նկարող Մուրիլլոն աշխարհիկ է:

Բրասո: Երկրորդ անգամ կու գամ: Անցիր թանգարանի սեմէն եւ մըտած ես ուրիշ աշխարհ մը: Տեւական եւ իսկական աշխարհ: Անցաւորին առջեւ փակուած է մուտքը: Հոս է, որ մարդ կը զգայ, թէ արժէք ունի գոյութիւնը: Կը զգայ, որ սպականութեան, կեղծիքի, ոճիւրի, ցաւի առօրեայէն վեր, անոնց ընդմէջէն, կը ցայտէ գեղեցկութիւնը: Առանց որուն անտանելի պիտի ըլլար կեանքը: Հոս է, որ մարդը Աստծոյ պատկերին համաձայն է: Մարդը ինք աստուած է եւ ստեղծագործ:

Իսկապէս որ «աղագային» է Բրասոն: Ամէնէն կարեւոր եւ կատարեալ հաստատութիւններէն մէկը: Սպանական նկարչութեան զգացումը լիակատար կերպով դասուորուած է: Ունի հոյակապ թիցիաններ, այլ իտալական ու Փլուման վարպետներ: Լուսավառութիւնը քշիկ մը բարելաւուած է: Աշխարհի մթնոլորտի թանգարաններէն մէկն էր: Ամբարիկացիները կրնան դառ տալ այս մարդին մէջ: Մեր դարը էլեկտրականութեան դարն է, եւ լոյսը միակ միջոցն է իրերուն, բնութեան եւ արուեստի երկերուն թափանցելու եւ վայելելու: Մարդ կ'ընդլզի, կը ըզայանայ, երբ կ'այցելէ Տոներու պալատը, եկեղեցիները, մանուսանդ Սքուոլա Ման Բոկկոն:

Իմ նպատակս արուեստի եւ արուեստագէտներու պատմութիւնը գրելը չէ: Կ'ուզեմ խօսիլ անոնց մասին, որոնք մտա են որսիս: Սպանիան ունի վարպետ նկարիչներ: Մորալէս, Բիոյերա, Չուրպարան, Մուրիլլո, եւ այլն: Չիս կը հետաքրքրեն երեքը:

Բրասո թանգարանը մեղուի վեթախի կը նմանի, հակառակ աշնան ե-դանակին: Մեծ մասով ամբարիկացիներ են: Լուսանկարի կամ շարժանկարի գործիչները կախած, արտառցօրէն դուռուր զգեստներ, միշտ բարձրախօս եւ ինքնագոհ, զամենագոր տոյրքի ներկայութիւնը զգացնող: Անհնար է Կրեթոնի մը առջեւ կարենալ կենալ եւ անարգել զմայլիլ: Աղմուկը անտանելի է: Առհասարակ «խումբ»ով կու գան եւ առաջնորդին ձայնը կը փրայկեռէ միջոցին: Երեւակայեցէք, որ միշտ քանի մը խումբ միաժամանակ կու գան ու անկրէնքը, գերմաներէնը, Ֆրանսերէնը եւ սպաներէնը միաժամանակ կ'արտասանուին ու իրարու խոսնուելով անձոնի ժխոր մը կը ստեղծեն: Կրնաք ըմբռնել տառապանքը: Այնուամենայնիւ, արուեստի երկը հոն է, թէ-կուզ ցեխի մէջ, միշտ կը ճառագայթէ: Դժուար է երեւակայել աւելի տա-փակ արարածներ, քան այս «առաջնորդները»: Կը խօսին թուականներու, նիւթի, շափի, — գեղեցկութեան եւ արուեստի հետ բոլորովին անկապ թա-ներու — մասին: ՈւՓֆիցիի մէջ մարդուկը կը խօսէր առաստաղի զարդար-ման, մարմար սեղանի մը մարմարի տեսակներու մասին, անտեսելով Ռա-Փայլէտները: Ուրիշ օր, Ս. Պետրոսի մէջ, միայն արձաններու բնականէն զա-նի անգամ աւելի խոշոր ըլլալու մասին կը ճառէր: Պարզապէս: Ուրիշ ոչինչ: Արագ ակնարկ մը եւ դուրս: Եւ զրօսաշրջիկները կը վերադառնան տուն, ի-րենց բարեկամները կը հրաւիրեն «քոթէձի»ի մը եւ կը պատմեն իրենց այ-ցելած թանգարաններու եւ տեսած գլուխ-գործոցներու մասին:

Էլ Կրեթո: Տոներէն թէթոքոփուլու: Երջանիկ դիւտեր են մակդիր-ները ու ծածկանունները: Երեւակայեցէք.— Չպուքքեարեան (Դանիէլ Վա-

րութան), Քիւֆլենեան (Ոչական), մեղք որ Թէքէեանը բացառութիւն կազմեց:

Կրեւոցին իր արուեստին նման անծանօթ ու խորհրդաւոր բան մը ունի: Չես գիտեր ինչու, Հեռաւոր Հայրենի կողիէն, ապա՝ Իտալիայէն, գաղթած է Սպանիա: Թառած Թուրքոյի բարձունքին, թագելու համար իր արձանները հոն: Կենսադուրբիւնը սահմանափակ է, ինչպէս Լէոնարոտո տա Վինչիի: Իր մասին պատահական եւ թերի ծանօթութիւններ միայն կան: Ոչ իսկ տա Վինչիի նման, իր դրաւոր վիպութիւնները: Իր երկերը կը յայտնաբերեն մարդը: Թերեւս բարեբախտութիւն մը: Ոչ մէկ նախապաշարում, դրական ազդեցութիւն: Իր ստեղծագործութիւնը եւ անոր մէջէն՝ արուեստագէտը:

Հաճոյքը վարակիչ է: Տուայտանքը՝ աւինքնող եւ մնայուն: Ներքին կեանքը, բուն կեանքն է: Ինտրայի ներաշխարհը: Ներքին լոյսը, որ Կրեւէն գողցաւ Արեւելքէն, էլ Կրեւոն բերաւ Սպանիա: Բիւզանդական Բթոնները եւ Վերածնունդի անընթիւ տպաւորութիւնները: Թիջիանայէն աւելի Թինդորեզոն: Մարդիկ յաւիտեան իրենց ուսուցիչներու աղօթքութեան տակ են:

Բաշեքոն կը գրէ. «Մի քանի քանի քանի կամ ցարիչներ ո՛ր միայն վարպետ իրենց արուեստին մէջ, այլեւ հմուտ մարդագիտութեան (humanities), ինչպէս Միքիլանձելոն, որ հոյնպէս բանաստեղծ էր, Լէոնարոտո տա Վինչի... վասարի եւ Տալմիֆո Կրեֆո, որ մեծ փիլիսոփայ մըն էր, սուր իր դիտողութիւններուն մէջ եւ որ գրեց ցարիչութեան, արձանագործութեան եւ ճարտարապետութեան մասին»:

Որքան գիտեմ, էլ Կրեւոյի յիշեալ գրութիւնները կորսուած են: Կուգեմ վերհանել իր փիլիսոփայութեան պարագան: Յոյնին արեան մէջ էր:

Բաշեքո կը շարունակէ նշել էլ Կրեւոյի անձնական տեսակէտը, — հասկապէր Արիստոտէլի եւ դասական հեղինակներու, — որ նկարիչը անպայման պէտք չէ հետեւի նախորդուած եւ հաստատուած կանոններու:

Առաջին արդիական կեցուածքը:

1500ական թուականներուն: Գահափէտ Հրեշտակ մը: Արուեստի մէջ դժուարագոյն արարքներէն մէկը՝ կարենալ անցեալէն ամբողջովին խցուելն է: Մեծ աւանդութեան, երկնային պատգամի բնոյթ առած օրէնքներէն: Ուրանալ անցեալը եւ բանալ իր ճամբուն: Նոր տարրեր եւ կերպեր ստեղծել: Պէտք է հզօր անհատականութիւն, երեւակայութիւն եւ տեսիլ: Մեծ ըմբոստ մը: Մաշող կրակը: Չքնաղ միտքը, որ տեսիլներու մէջ կը յածի:

Առաջին նկարիչն է, որ ձեւերը կը ձեւադեղծէ՝ իր զգացումին եւ նկարչական կատարչին համապատասխան: Առաջինն է՝ իր վրձինը ազատորէն եւ լայնօրէն գործածելու: Երանդապնակը տարբեր եւ անհատական: Նիւթին եւ գրացումին Հեռ հարուստ են գոյները կամ պարզացուած սեւի, արծաթի եւ տոնյն դեղիներու: Մթնոլորտը, հողերանական պահը, արամին կլիման:

Քննադատներ կ'ըսեն, թէ Հեռուորդներ շունեցաւ: Մեծերը միշտ առանձինն կը մնան: Հեռուորդներ չեն սեննար, այլ ազդեցութիւն: էլ Կրեւոն դարերու վրայէն կ'երկարի մինչեւ Սեզան եւ նոր շարժումը: էլ Կրեւոյի «Ս. Յովնաննու Յայտնութիւնը» եւ «Լակուըն» եւ Սեզանի լողորդներու շարքը: Մարմիններու ձեւազեղծումը, միջոցին մէջ ձուլուելը, ծաւալի, կոտուցման, շարժման եւ գոյնի բմբուսումները:

էլ Կրեւո կ'ապրի քսանըջորս սենեակնոց տան մէջ: Նիւթապէս պա-

հանդիպում է, Իր սեղանին նուազածուններ կը վարձէ: Բանաստեղծներու եւ մտաւորականներու հետ կը նստի: Համահունչի կը պահէ: Իր արժատները հողի մէջ են, բայց երկրային ձգողականութիւնը զինք չի քաշեր. անսահմանը կը կախարդէ զինք: Ոչ մէկ հակասութիւն: Ներշնչումը, վերելքը, ուղեղինացումը մեղքէն (թերեւս աւելի ճիշդ պիտի ըլլար ըսել՝ ցանկութեան յայտնումէն) կը ծնին: Ածուխն է, որ այրելով կրակի կը վերածուի: Գէպի վեր: Մարմինները կ'երկարին, սրունքները կը բարձրանան, նայուածքները վեր կը յառին: Տրամը երկրին վրայ կը կատարուի եւ երկինքի մէջ կը շարունակուի: Երկինքը միշտ կը միջամտի: Երկու աշխարհները կը միանան տեղ մը անթրպոսին մէջ. «Ս. Մօրիսի եւ իր Լեզուններուն Մարտիրոսացուսն», «Քրիստոսի Անուան Պաշտամուսներ», «Աւետարան», «Անարատ Յղուսիւն»-ը, «Կուսն Օրկագի Քաղաւմը»...

Միշտ արամաթիք մթնոլորտ մը: Պայտար տեսանելի, յունախ անտեսանելի, — բայց ներկայ — պատահարին միջեւ: Երկինքները մոայլ են եւ ամպրոպներով յղի: Մարմիններուն՝ երկնային մեթաֆորային ցուրբը: Արեւը գրեթէ բացակայ է Կրեքոյի աշխարհէն: Յաճախ կը ներկայացնէ իր սիրած, բնիկ Թուրան: «Թուրք» բնանկարը հրաշալիք մըն է: Կը նկատուի տափին իսկական բնանկարը: Քաղաքին վերարտադրութիւնը չէ անշուշտ, այլ խորհրդանշական տպաւորութիւն մը: Նոյն ամպոտ երկինքը, որ կը կտրատուի արծաթ, ելեկտրական լոյսերով, որոնց ստուերներն ու ցուրբը կ'իջնան բնանկարին: Լարուածութիւն մը, պայթելիք որոտման եւ ամպրոպներու սպառնալիքը, աղէտէն աւելի՝ խորհուրդի մը յայտնութեան սպասումը եւ... այս արամաթիք մթնոլորտին մէջ, կանաչներուն խաղաղութիւնը, Ալկազարին, կաթողիկէին եւ տուներուն ապաւնը: Կեանքը կը տեսէ:

Վիրասքէզ արքայական է: Աւանդապաշտ, ազնուական, իր վիճակէն դուրս: Հաշտ շրջապատին, իրերուն, անձին ու տիեզերքին հետ: Տեսանելի աշխարհը կը գոհացնէ զինք կարծես: Արդեօ՞ք: Ընտանեկան միջավայր, դաստիարակութիւն, կեանքի պայմաններ՝ կապանքներ են, որոնցմէ դժուար է ձեռքազատուիլ: Վիրասքէզ մօր կողմէ ազնուական տոհմէ կը սերէր, Կանուխէն կը զգայ նկարիչը իր մէջ եւ կանուխէն կը ջանայ ապահով ու բարձր պաշտօնի մը տիրանալ մայրաքաղաքին մէջ: Նախ կը ծախողի: Երիտասարդ է: Կը խառնուի արկածախնդիր տղոց, կը նկարէ սամիկ մարդիկ: Բայց աչքը միշտ վերն է եւ ի վերջոյ կը յաջողի կոչուիլ պալատական նկարիչի պաշտօնին, ուր կը մնայ մինչեւ մահը, մօտ երեսունեօթ տարիներ, որոնց միօրինակութիւնը կ'ընդմիջուի երկու ճամբորդութիւններով զէպի Բոտալիս: Սպանիան զայն նկատած է իր մեծագոյն նկարիչը: Իր դարուն կը վայելէր նկարչական արուեստի մեծագոյն վարպետներէն ըլլալու համբաւը: 1907ին, Մէլէր Կրաֆէ այցելեց Սպանիա եւ գրեց իր «Սպանական ճանապարհորդութիւնը» եւ էլ Կրեքոն հռչակեց մեծագոյն նկարիչը (Ուիլ Տիւրանդ):

Արդեօք տեսանելի աշխարհը կը գոհացնէ՞ր զինք:  
 Երկար գրուած է եւ պիտի գրուի արուեստի սահմանումի եւ արուեստի դպրոցներու մասին: Բոլոր մեկնաբանութիւնները, որքան ալ հակասական, հետաքրքրական են եւ ճիշդ ըստ էութեան: Որովհետեւ արուեստը անհուն է եւ անսահմանելի, ինչպէս կեանքը, որմէ կը բխի եւ որուն խտացումն է: Արուեստի դպրոցները, — զասական, վիպապաշտ, իրապաշտ, խորհրդապաշտ, տպաւորապաշտ, եւայլն, կեանքը դիտելու, զգալու եւ արտայայտելու կերպեր են: Նախնականները եւ տաղանգները տարբեր են: Նախասիրութիւնները պէտք չէ մոռնալ: Արուեստագէտները, որոնք կը դիտեն կեանքը,

և քննադատները, որոնք կը դիտեն անոնց երկը: Գպրոցը չէ հակահնը, այլ երկը և տաղանդին ուժը: Բոլորը կ'անցնին, երկը կը մնայ: Յաճախ արուեստագէտին կենսագրութիւնը, տեսութիւններն ու ըմբռնումները, մինչև իսկ անունը, կորսուած են, — երկը մնացած է:

Յետոյ, ամէն ժամանակաշրջան Հակազդեցութիւն մըն է և նոր ըմբռնումի կը ձգտի: Կեանքը զգալու և իր զգացումը արտայայտելու նոր կերպ մը կը փնտռէ: Հոգեբանութիւն: Ժամանակ մը Լամարթինը, Միւսէն էին մեծ բանաստեղծները, յաջորդ դարը զանոնք մոռցաւ և պատուանդանի վրայ դրաւ Պօլէրը: Պօլէրը աւելի Հարազատ էր մեզի: Էլ Կրեքոն դարեր անտեսուած էր և ահա մոռացութենէն դուրս եկաւ և դարձաւ մեր հոգիներուն թարգմանը: (Միտքս կու գայ մեր Ինտրային «Ներշնչարար»): Արուեստի երկի զնահատումը յարաբերական է և փոփոխական իսկ: Եւ սակայն, պատմական լայն Հեռանկարի վրայ, արժեւորումը վերջնական է և կայուն:

Այս խորհրդածութիւններէն ետք.— նկարչութիւնը տեսողական արուեստ է, ինչպէս արձանագործութիւնը: Ոմանք կը մերժեն ամէն գաղափարական, փիլիսոփայական կամ գրական միջամտութիւն: Ինչպէս մտքու երաժշտութիւնը: Եզրայտական արձաններն ու որմնանկարները իրենց կրօնական բովանդակութեամբ չէ, որ կը հաղորդուին մեզի Հետ, այլ իրենց զուտ գեղարուեստական արժէքով: Կեանքը ինչպէս որ է, իրապաշտներու հանդահանին էր: Վիլսաքէզ բնութիւնը, էտկներն ու իրերը կը դիտէ իբրև նկարիչ: Իր նիւթը կը վերարտադրէ «ինչպէս» ինչպէս գայն կը տեսնէ (տեսներ ինչնին ամէնէն ենթակայական երեւոյթն է և բացարձակօրէն անհատական): Աւելորդ է բնուի, մեր խօսքը Փիլիքա-մեքենական տեսողութեան մասին չէ, որովհետև դիտողին աչքը և ներքին աշխարհը անբաժանելի են: Ոչ մէկ երկու հակ նոյն ձեւով կը տեսնեն ու կը գգան, այլ իրենց պատկերին Համաձայն:

Ինծի կը թուի, թէ Վիլսաքէզ կը հուստար, որ բնութիւնը պէտք չունէր սրբագրութեան և թէ՛ ինք չէր ուզեր իր անձնական նախընտրութիւնը պարտադրել բնութեան: Կրնանք վիճել, բայց մեկնարանութիւն մըն է: Վիլսաքէզ իր անձին և տիեզերքին Հետ հաշտ, հասած էր հաւասարակշռութեան մը: Ներքին և արտաքին: Էլ Կրեքօ, Թէմպրանա, Միքելանճելօ կը տուապէին ընդհարումէն: Վիլսաքէզ դէպքերէն և մարդերէն վեր էր, կլանուած ամբողջովին իր արուեստի աշխարհին մէջ: Ամէն իր և էակ կը պարփակեն կեանքի և տիեզերքի խորհուրդը: Տժգոյն, իրարու մէջ երկար ամուսնութիւններէ յոգնած արիւնը, այլասերման մօտալուս հեռքերը, իմացականութեան և ստեղծագործութեան պակասը, Հտպիտները, թզուկները, կը նկարէր առանց շոգուրթելու, կեղծելու կամ իտէալականացնելու: Նիւթին Հետ կը փոխուէր իր խորքը և ուժը.— «Անմեղ 10րդ» պապի դիմանկարը, «ԾՊՊԱ Վնաս»ը, «Պրեստոյի յանձնումը», «Լաս Մոնիմաս», և այլն: Ոչ ոքի հանոյք չէր պատճառեր, բացի իր արուեստագէտի հոգիէն: Նիւթին առջև կը նստէր իբրև նկարիչ և ոչ մէկ նախապաշարում: Լոյսը և ստուերը, գոյներու Հակադրութիւնը, իրար լրացնելը, ենթակային Հարազատ նկարագիրը, առանց իր միջամտութեան, առանց ձեւագեղծումի: Այնպէս որ՝ ենթական է և ոչ այնպէս ինք պիտի ցանկար որ ըլլար: Կանուխէն թափանցած է միջոցին և խորութեան: Ուղիղ լոյսի և լուսադէմի նրբութիւններուն և հակադրութիւններուն: Գոյնի արժէքին: Իր Հոռոմ այցելութեան, կը նկարէ «Վիլլա Մէտիչիի պարտէզը», ու կը նախազգայ Գորոն և տպաւորապատկերները: Իր մօտ կը նկատուի զգացումի և հոգեբանական բովանդակութեան պակաս: Իր



դիմանկարներէն ոմանք զանհոգիք են, պարզապէս կը նային: Կը յիշեմ Սե-  
զանի դիմանկարները: Ոչ մէկ խարութիւն անկենդան եւ կենդանի բնութեան  
միջեւ: Բնութիւնը, կ'ըսէք, պէտք է դիտել իբրեւ կոն, դրան եւ գունտ: Իր  
փնտառածը հոգեբանական տարրը չէր: Եւայլն:

Ատիկա պաշտպանութիւն մը չէ, այլ մեկնաբանութիւն մը: Արուեստա-  
դէտը պաշտպանութեան պէտք չունի: Տարակարծութիւնը միշտ զննադատ-  
ներու միջեւ է: Ինչ որ կը ջունամ ընել, ինչպէս ամերիկացին կ'ըսէ. «I am  
trying to make a point»:

Ես խոսնումքով կը սիրեմ էլ Կրեքոն, Ռէմպրանտը, սա Վինչին,  
Սեզանը: Այս ալ խնդիր է: Ամէն արուեստագէտ ունի իր սեփական լեզուն եւ  
պատգամը: Մեղի կը մնայ զինք հասկնալ, գտնել իր լեզուն եւ վայելքը: Յա-  
ճախ կը նմանցնեմ ըմպելիի: Ծրարեր ունին հաստատ նախափրութիւն: Ին-  
ձէ համար ամէն ըմպելի, — դինի, գարեջուր, ուիսքի, — ունի իր հմայքը,  
գոյնի, համի, թեյաղրութիւններու զգայնութիւնները: Փորձել, թափանցել,  
ըմբռնել:

Վիլյամքէյի մահուանէն 86 տարի անցած, շարք մը միջակութիւններէ  
ետք, աշխարհ կու գայ Սպանիոյ երրորդ մեծ նկարիչը, Յրանսիսկօ Կոյա:  
Մօր կողմէ ազնուական գիծ մը, բայց ինք ժողովուրդի զաւակ, մինչեւ ծու-  
ծը: Խոսով, արկածախնդիր, կռուազան: Ամէն օրէնքի թշնամի: Փորձած է  
ամէն ինչ. եղած է ցլամարտիկ իսկ: Իտալիա, պատէն ցատկած ու ջանացած  
է մայրապետ մը առեւանգել: Տարփոտ, զոռ շատ երեստասարդ, ցանկալարոյց  
մերկութիւններ կը նկարէ, հակառակ Հուստաւաքնութեան սպանալիքնե-  
րուն: Երկու անգամ կը ջանայ մտնել Արքայական Ակադեմի, երկու անգա-  
մուն ալ կը ձախողի, բարերարտարար: Հանճարը պէտք չէ միջակութիւնը  
ունենայ իբրեւ ուսուցիչ: Ատիկա աղիտարներ կ'ըլլայ: Ինք պիտի բանայ իր  
ուղին: Իր ուսուցիչները միւս հանճարներն են: 1776ին, կը ստանայ իր առա-  
ջին մեծ ապսպրանքը՝ նկարել հսկայ յղացումներ Արքայական Որմնագործի  
Գործարանին համար: Աւելի ուշ, կը զարդանկարէ Սան Անդոնիօ Տէ Լա Տիո-  
րիտա Եկեղեցւոյ գմբէթը, երկու պարագային ալ փոխանակ դիցարանական,  
այլաբանական դեղեցկուհիներու, շաքարոտ հրեշտակներու եւ հանելի եւ օ-  
ղային տեսարաններու, — ինչպէս ըրած էր Թիեպոլոն, — յանդիմութիւնը  
կ'ունենայ իր ժողովուրդի կենդանի եւ ամէնօրեայ կեանքը նկարելու, իր  
դաշտահանդէսներով, ցլամարտներով, պարերով եւ տիրութեամբ: Արուես-  
տը կը վերագրանէ կեանքին: Եւ նիւթին հետ, գոյնի, վրձինի, յղացման եւ  
ոճի հզօր ու անհատական իր դրոշմը եւ նորութիւնները: Տպաւորապաշտե-  
րը պիտի դիմեն իրեն տամամեակներ հոք: Յիշել մանուակը՝ «Լա Բրատե-  
րա տէ Սան Իդիաքօ»:

Համաւը հաստատուած, Արքայական Ակադեմիի տնօրէն, պալատա-  
կան նկարիչ եւ այս տիտղոսներուն ընկերացող նիւթական միջոցներ: Յան-  
կարծ առողջութիւնը լուրջ խանգարումի կ'ենթարկուի: Ուել Տիւրանդ կը  
դրէ, որ վարակուած էր վեներական տիտով: Աւելի ուշ, այլ պատճառնե-  
րով, կը կորսնցնէ իր լսողութիւնը ամբողջովին: 87 տարեկան է:

Ըմբոստ, յախուռն, նախապաշարուածներէ ձերբազատուած: Արդիա-  
կան՝ իբրեւ արուեստագէտ եւ ժողովրդավար՝ իբրեւ մարդ: Թշնամի կեղծի-  
քի, անարդարութեան, բռնութեան: Վիլյամքէյի հակառակը, կը մասնակցի  
իր ժողովուրդի կեանքին: Կ'ատէ հիմա Փրանսացին, որ կէքը նստեր է իր  
երկրին վրայ: Երբեք պիտի չմոռնայ Մայիս 2ի եւ Յի պատահարները: Սպա-  
նացիները կը յարձակին Փրանսացիներու եւ անոնց բերած մէջուղներու

մրայ : Հերոսական կռիւ եւ ջարդ : Յաջողութիւն օրը, բանտարկեալները կը շար-  
 ւին եւ կը գնդակահարուին : Կոյան ականատես է : Եւ կ'անմահացնէ զէպօե-  
 րը . «Մայիսի 2ը» եւ «Մայիսի 3ը», իր երկու զլուխ գործոցնէն են : Ազատու-  
 թեան համար պայքարը կը շարունակուի, բարբարոս արարքներ կը գործը-  
 ւին : Իր կրակոտ երեւակայութիւնը կը փոթորկի պատկերներէն, որոնք մին-  
 չեւ մահ սինք պիտի գայարեն : Կը մասնակցի ճակատամարտին, կը պոռթկայ  
 միակ լեզուով, որ գիտէ — նկարչութիւնը : Այլեւս հեղեղ մըն է, գոյներու  
 իսկ շի դիմեր, կը նկարէ սեւով, կը փորագրէ, կ'ուրուագծէ, պատերուն կը  
 նետէ իր մզմաւանջները :

Տարիներ առաջ, Ալլայի դքսուհիին հետ իր վիպային սէրերու տարի-  
 ներուն, նկարած էր երջանիկ պատատներ : Դքսուհին, երկու մայրները,  
 «Տագուստով» եւ «Տերիկ» : Սպանիայ մէջ օրէնքով արգելուած էր մերկ կին  
 նկարելը : Սպանական հարուստ գայրոցը երկու պատտու ունի . Վիլտուէզի  
 Ատորիկը եւ Կոյայի «Մերկ Մայան» : Վերջինը, զասական-գիցարանական  
 դիրքաւորումէ մերթադատուած, զողորմիկ, միս ու սակոր, մեր գիտցած զգա-  
 յուն եւ զգայապաշտ, իր համեմատութիւններով մեր դարուն աւելի հարա-  
 գատ, յաւիտենական կիներ է : Այնպէս՝ ինչպէս ստեղծեց Ատտուած : Բանաս-  
 տեղծօրէն, խեփորի մէջէն ճառագայթող անարատ մարգրիտը :

Վերջին տարիներուն մղձաւանջներ, բարբարոս ու վայրագ սեռերներ  
 անդադար կը յաճախեն իր երեւակայութիւնը : Աւելինբու վրայ թուշող վհուկ-  
 ներ, սատանաներ, գերերկրային կակներ, բացուող դերեկմաններ, երեխա-  
 ներ զեւ փակած իրենց մեռած մօր ստինքին, կոյսերու բռնաբարում, Հա-  
 աաաքննութեան զոհերու անասելի շարշարանքներ, եւայլն : Ամէնէն առեւե-  
 ին, «Կոսմոս, որ կը լափէ իր գաւակը» : Խոսովայի այս նկարներուն կու տայ  
 մակդիրներ . «Ատր համար է, որ աշխարհ եկար», «Այս, տեսայ», «Այսպէս  
 պատահեցաւ», «Թաղիլ մեռելները եւ լաւ մնայ» : Քահանաներու եւ մեռե-  
 լութեան մէջ մեռնող կնոջ նկարին տակ . «Ճշմարտութիւնը կը մոռնի» եւ  
 թիւ 80, աւելի երջանիկ պատկերի մը տակ . «Արդեօք պիտի վերածնի» կըր-  
 կին» : Յո՞յս, հաւատք : Տեղ մը կը զոչէ . «Երկնային տապալիւն» :

Կը մեռնի Պորտո, Տրանսա եւ տարիներ ետք, մարմինը կը բերուի  
 հայրենիք եւ կը թաղուի իր իսկ զարդանկարած Սան Անտոնիօ տէ լա Ֆլո-  
 րիտա եկեղեցիին մէջ :

Տարիներ առաջ նկարած էր արքայական ընտանիքը : Այլատերած, իմա-  
 գականութենէ պարպուած, հուպտներու եւ անբաններու զէմքեր, հագուած  
 վարպետի մը վրձինով ներկայացուած չեղ զգեստներու եւ զոհարներու  
 մէջ : Քաղաքավար ծաղրանկար մը : Կր նախագայ միապետութեան վերջը :  
 Նախապաշարումը, ընկերային անհաւասարութիւնն ու անարդարութիւնը,  
 բռնութիւնը — ոճիւրներ են, որոնց զէմ կ'ըմբոստանայ Կոյան, իր կարելի  
 բոլոր միջոցներով : Պատմութեան ընթացքին եւ զէպօեիւ զարգացման ոչին-  
 չով կ'ազգէ, բայց արուեստի աշխարհին մէջ կը բանայ նոր հորիզոններ,  
 կ'արձակուի արագային մէջ, ինչպէս ամէն մեծ արուեստագէտ :

Բ. ԿՈՒՆԵԱՆ

(Շար. 1)

### ՑԱՅՏԱՂԹԻԻՐ

Լուսինն ինչպէս, իր այցով, կը մարէ բոցն արեւին  
Ու հարսնացած՝ կը սանի զգուանքն արծաթ շողերու,  
Ծաղկոզ ամէն ցայտադրիւր՝ մեր այրեցեալ կարօտին  
Ու ծարաւին ալ սակայն՝ կ'իջնէ իբրեւ... ճրագու:

Երեւանի լոյսերէն, օճապտոյտ ու կարմիր  
Հառագայք մը, սողալով, կը կտայէ տար Լեռնին  
Արձանը մայր աղբիւրին, որ ան ըլլայ... ունկնդիր՝  
Իր օրուան ժանգը այնտեղ անագոզ մաշ բանուորին:

Ցայտադրիւրի փրփուրին մէջ կայ ճա՛յնը անցեալի,  
Մեր լեռներուն կայ շղթան, որ կիսախուփ աչիդ տակ,  
Անցորդի հակ վզին շուրջ համբոյր, համբոյր կը փակուի  
Եւ յոյսի նոր թելերով՝ կ'ըլլայ մանեակ լուսագանգ:

Իր մատուռին միշտ առջեւ, երեւանցի ամէն մարդ  
Ու այցելուն ալ նոյնպէս՝ կորափամակ կ'աղօթեն...  
Ցայտադրիւրէն ի՞նչ խոստում կ'առնեն արդեօք, որ գուարք՝  
Կը շտկուին թարմացած եւ նոյնիսկ խա՛չ կը հանեն:

Ալիք-ալիք, օրն ի բուն եւ կրկնուող ծարաւով,  
Ցայտադրիւրին շուրջ այսպէս, կու գան անվերջ ու կ'երթան-  
Փուռ-փուռ շրջած ու ալ խոնջ՝ կու գան աննէք խումբերով  
Ու աղբիւրի մեղրէն յագ՝ կը փաղցրանան, կը... մոռնան:

Ցայտադրիւրին փոփոխէն ով որ անցնի՝ կը կենայ,  
Ով վերք ունի ու գաղտնիք՝ հեղանամբոյր կը սպասէ.  
Ցայտադրիւրէն ով համբոյր կ'առնէ համբոյր եւ կու տայ՝  
Մարգարիտով բեռնաւոր՝ իր... երագին կը վազէ:

Լեռնը հո՛ն է սակայն, խաւարաբիր՝ եւ *Զեկան*,  
Անոնց միջեւ կայ աղբիւր, որուն համար՝ ոչ մէկ ձեռք  
Զօր է կտրել իր լեզուն եւ նոյնիսկ շիլ *Միլիցիան*՝  
Պարտաւոր է գինի լսել ու ստանալ... լոռչէֆ:

Ե՛ս ալ բախտիդ տիրացայ, սպառումիդ մէջ անգամ  
Ցաւերժանա՛րս ցայտադրիւր, երբ համբոյրիդ փոխարէն՝  
Առիւր ինձմէ այն, որուն կ'ըսեն արցունք դառնահամ,  
Որովհետեւ արցունքէն՝ հոն... ադամանգ կը շինեն:

ԱՇՈՏ ՆՈՒԲԵԱՆ

(«Լսէ՛, Երեւա՛ն»)

Ն Ե Ր Ս Է Ս Վ Ի Բ Ա Պ Ե Ա Ն

**Պ Ի Տ Ի Գ Ա Յ Ա Ղ Զ Ի Կ Ս,  
Պ Ի Տ Ի Գ Ա Յ...**



— Օ՛, ազուր հասակ առեր է ձեր դուստրը, — խօսեցաւ դրացուհին, տիկին Հէլէնին, երբ մխտօն պարտէզն էին: Պահը իրիկուան ժօտ էր ու աղջիկը եկած էր դպրոցէն. երբ ան ներս կը մըտնէր, դրացուհին տեսաւ անոր հասակը, մարմինը: Դեռ քանի մը տարի տաջ, պզտիկ բան մըն էր, իսկ հիմա ուղղակի կերպարանափոխուած էր: Դրացուհին աւելցուց.

— Երանի թէ ասոր ալ յարմար փեսացու մը գտնուէր:

— Ձէ՛, — ըսաւ տիկին Հէլէն, — աղջիկս այդ օրուան պիտի չհասնի ու ա՛լ ասոր պէտք պիտի չունենայ:

— Ինչո՞ւ, — հարցուց դրացուհին զարմացած:

— Քանի որ մինչեւ այդ ատեն աշխարհիս վերջը եկած պիտի ըլլայ ու ամէն ինչ պիտի լմննայ:

— Ե՞րբ պիտի դայ, — անակնկալի եկած, — հարցուց տիկինը, — արդեօ՞ք իրաւ է:

— Այո, փաստուած, հաստատուած ու վերջացած ինչիւր է ոյլեւս աշխարհիս վերջը, — ըսաւ տիկին Հէլէն ու կանչեց ամուսինը, որ ներսը նստած Ս. Գիրք կը կարդար:

Սկուռ մարդը, ձեռնուեցաւ կնիշ հեա, որ առաջնորդեց զայն հերասենեակ, որուն պատերուն վրայ զանազան տեսակի թուանշաններով աշխարհի վերջը ցոյց տուող պատատուներ կային:

— Քոյրս, — սկսաւ մարդը, — իրապէ՛ս պիտի գայ աշխարհիս վերջը, — ու աւելցուց.

— Հայրս կուչ ստանալով, թէ աշխարհի վերջը ժօտ է, Ամերիկա եկաւ ու սկսաւ քարոզել ու ժողովուրդին բացատրել, թէ ժօտ է աշխարհիս վերջը, բայց տակաւին ճիշդ թուականը չէր գիտեր, այլ միայն կը քարոզէր անոր ժօտալուտ ըլլալը ու ինչպէս որ մէկու մը ականջը հեռամային կ'ըլլայ, այնպէս ալ Հօրս ականջը միշտ Աստուծոյ կ'ըլլայ, թէ ե՞րբ Աստուած իրեն պիտի պատգամէ վերջին

օրը՝ ու ահա այսպէս, օր մըն ալ Աստուծոյ պատգամը կը հասնի առտուն կանուխ:

— Հայրս, — շարունակեց երէցը, — երբ պատգամը ստացաւ, այդ պահուն չէր քնանար, այլ կէս քուն կէս արթուն էր: Աստուան ժամը չորսին տասնը՛հինգ վայրկեան մնացած՝ տեսիլը կը տեսնէ ու անմիջապէս կ'արձանագրէ, դարձեալ կ'ըսեմ, որ տարիկա երազ չէր, այլ տեսիլ՝ Աստուծոյ ձեռքով դրուած, ահա՛ այս դիմացի պատին վրայ: Հայրս հոս պտուկած էր, այն ատեն հոս էր իր մահճակալը ու ան կը տեսնէ տեսիլքը, թուանշանները կը դուժարէ ու արգիւնքը հազար ինն հարիւր քառասունը՛հինգ կ'ելլէ: Կարթնցնէ տնեցիները ու կ'ըսէ. «Աշխարհս վերջը պիտի դայ հազար ինն հարիւր քառասունը՛հինգին» ՎՍՈՎ գիփուքին օրը: Տնեցիները կը սկսին աղօթել ու կը հաւատացնեն իրենց ազգականները, ու ամէնն ալ անհամբեր այդ օրուան կը սպասեն աղօթելով ու ծոմապահութիւն ընելով: Հայրս այդ պզտիկ հօտին երէցը կ'ըլլայ, ու կը սկսի քարոզել, թէ աշխարհի վերջը կու գայ 1945ին, ՎՍՈՎ գիփուքին օրը: Ուրեմն ճիշդ էր տեսիլքը, քանի որ այն ատեն ազգերը իրարու դէմ ելած՝ կը պատերազմէին. վերջին օրերու փաստեր չէին՝ ատոնք, ու Հայրս փողոցները իջած կը քարոզէր:

— Ահա կու գայ աշխարհի վերջը, եկէ՛ք հօտիս միացէ՛ք, որ փրկուիք:

Ոչ ոք եկած էր փրկուելու ու Հայրս կը խորհէր, որ ինք ու իր փոքրիկ հօտը, իբր նոր օրերու Նոյի ընտանիք, պիտի ըլլային միակ փրկուողները:

Եկած էր 1945ը ու հօտը սրտատրոփ՝ ՎՍՈՎ գիփուքին կը սպասէր: Մօտեցաւ ՎՍՈՎ գիփուքը: Իրենց բնակած քաղաքը, որքան որ չեմ հաւատացած, այդ շարաթ գաղբեցաւ դողութիւն ընելէ ու ոճիրի պատմութիւն մը իսկ չարձանագրուեցաւ ոստիկանական տոմարներու մէջ: Մարդիկ որքան որ ալ չէին հաւատացած, վախով էին այդ օրերուն: Անհամբեր էին, կ'ուզէին, որ շուտ դայ ու անցնի այդ օրը:

Սակայն, հօրս պզտիկ հօտը գօտեպնդուած կ'աղօթէր: Այդ դիւերներուն, տէր եւ տիկիներ ժխտին չեն պառկած՝ ինչ կ'ըլլայ ինչ շըլլար ըսելով:

Եկաւ, հասաւ ՎՍՈՎ գիփուքը: Խումբը ամբողջ դիւերը աղօթքով անցուց ու կէս դիւերին ճերմակ հազած ելան մօտակայ բլուրին դադաթը՝ ժամը չորսին սպասելու, որովհետեւ այդ ժամուն պիտի դար աշխարհի վերջը, այդպէս ժամագրուած էին, անանկ կարգադրուած էր: Բայց հայկական ժամադրութեան պէս ժամը հինգ եղած էր ու եկող-գացող չկար, ու դեռ խումբը աղօթելով կը սպասէր: Արեւելքը սկսաւ շառաղուտիլ, խումբը ուղեց թանկեր մը տեսնել այդ բունկող արեւին ճաճանչներուն մէջ. մէկը նոյնիսկ բան մը տեսաւ, բայց այդ չէր, արեւը հլաւ: Կ'երեւայ որոշուած յետաձգուած էր որոշ ժամանակով մը, այո՛, յետաձգուած էր ցնոր տնօրնութիւն: Խումբը վերադարձաւ դիւսահալ:

Հայրս ալ անկէ ետքը շատ չապրեցաւ: Մեռնելէն առաջ երազ մը տեսած է՝ — աշխարհը իբրեւ բաժակ, որուն երկու ծայրերէն երկու մարդիկ բռնած են, կ'արթննայ ու երազը կը պատմէ, մայրս կը մեկնաբանէ եւ կ'ըսէ.

— Մարդոցմէն մէկը դուն ես, միւսը՝ որդիս, կարապետը, այլեւս քու գործըդ վերջացաւ, ալ ինչի՛ր կը սպասես, օձէ՛ կարապետը, որ յիբախի կարապետ մը ըլլայ եւ առջնորդէ Հայրդ:

Հայրս մարդէք կու գայ, ուր ես կ'աշխատէի, զիս տուն կը կանչէ ու զըլխուս իւր թափելով՝ կ'ըսէ.

— Ուրեմակ, ես պիտի մեկնիմ, դուն իմ յաջորդս պիտի ըլլաս, այս պզտիկ հօտս դուն պիտի հովուես, ահա այսօր կ'օձեմ քեզ իբր իմ յաջորդս: Երբ նոր ծնած էիր, Աստուած ինձի պատուիրեց, որ անունդ կարապետ դնեմ ու Հիմա կ'օձեմ քեզ, որպէսզի դուն կարապետես այս պզտիկ հօտը:

Հոգեպարար արարողութենէն ետք, մարդէք գացի ըսելու, որ այլեւս Նոր

պաշտօնս թոյլ չի տար ինծի, այս կարգի գործեր ընելու, ու մեկնեցայ:

Երբ տուն վերադարձայ, հայրս մեռած գտայ, Աստուծոյ կարգադրութիւնն էր, այլեւս ես պիտի շարունակէի Հօրս ձգած գործը: Այդ պահուն ստոյգ աղբիւրներէ իմացայ, թէ աշխարհի վերջը ոչ թէ 1945ին պիտի գար, այլ այդ թըւականով պիտի սկսէր վերջին շրջանը: Ուրեմն աշխարհի ամէնէն վերջին թուականը երկու հազարն է. բայց անոր ալ պիտի չհասնինք: Անիկա կրնայ զալ կա՛մ 1961ին, կա՛մ 1971ին, կա՛մ 1973ին, կա՛մ 1975ին, կա՛մ, կա՛մ...

— Հապա՞, — միջամտեց կինը.— Յիսուս կ'ըսէր, թէ նոյնիսկ ես չեմ գիտեր երբ պիտի գայ աշխարհի վերջը:

— Յիսուս չէր գիտեր, քոյրս, — բացատրեց երէցը, — Ս. Գիրքը սխալ գրուած է, գուն ինծի հարցուր, ես բուլբուլ գիտեմ:

Կինը պիտի գայթակղէր, բայց կըրկին դստեց ինքզինքը եւ հարցուց.

— Այդ դէպքերէն առաջ, Հրեշտակապետ մը պիտի գար, Գարբէլը, կամ Միքայէլը, կամ այլ Հրեշտակապետներէն մէկը. ո՞ւր է, եկա՞ւ:

— Ծն եմ այդ Հրեշտակապետը, քոյրս, — ըսաւ երէցը ու աւելցուց, — ես ատոր ձայնն եմ, արձագանգը:

Փախաւ կինը, վերջին նայուածք մը նետելով երէցին, որուն դէմքին խոշոր ու կլորցած աչքերը դեռեւս աւելի վախցուցած էին զինք:

Դրացուհին այդ դէպքերուն պատմութեան տեղեակ չէր, այս տունը փոխադրուած էին չորս կամ հինգ տարի առաջ, ու այդ տարիներուն ընթացքին հաղիւ բարեւ մը կը փոխանակէին իրարու: Վերջին տարիներուն էր, որ երբեմն մայր թին գրայ կը խօսակցէին եւ այդ ալ ընդհանրապէս կեանքի սրտի թեւս կամ Ծաղիկներուն շուրջ միայն:

Իրենք ալ դուրսը այդ մասին չէին խօսեր, որովհետեւ անպամ մը խայտառակուած էին հրապարակաւ, միայն երէցը կը սպասէր վերջին պատգամին, որպէսզի հօրը նման փողոցները իյնար:

Այդ օր, տիկին Հէլէն իր ունեցած մեխակները ցոյց կու տար շրացուհիին, երբ անոր աղջիկը իր մօտ կը գտնուէր:

Այո՛, աղջիկը առաջուանը չէր, ան մեծցած էր, ազուրցած, տասնութ տարեքը պիտի թեւակոխէր, ընկերները իր շուրջը կը գառնային, իրեն ուղղելով դեղեցիկ խօսքեր, բայց աղջիկը կրկին լուռ կը մնար, առանց սեւէ մէկուն մօտիկութիւն ցոյց տալու: Փոքր տարեքին աշխարհի վերջաւորութեան մասին բաներ մը լսեր էր: Այդքան միայն: Եւ այդպէս ալ մեծցած: Ան դիտէր, որ կա՛մ այս տարի կամ ալ յաջորդ տարի պիտի պատահէր անխուսափելին, որուն անձկութեամբ կը սպասէր: Հօրմով, մօրմով, մեծ մամայով, մօրաքոյրերով, հօրաքոյրերով, որոնց մէջ կային նաեւ ազատ միտքով քանի մը ծերացած ամերիկացիներ: Իրենց զպզտիկ հօտանի թիւը երեսուներ չէր անցնէր, եւ ատոնց մէջ ամէնէն ինչացին երէցին փեսան էր, որուն համար յաճախ կ'ըսէին.

— Եթէ սխալած ենք, ինչո՞ւ ուրեմն Սեդրակ մեր կրօնքին դարձաւ:

Ունկնդիրները չէին պատասխաներ, բայց իրենց մտքին կ'ըսէին.

— Թող աղջիկը չըլլար ալ ինքն ալ թող դառնար:

Հօտին մէջ ամուսնանալիք տղաք ու աղջիկներ կային, բայց ոչ ոք կը մօտենար անոնց, քանի որ երէցը պայման կը դնէր, որ նոր եկողները իր կրօնը դաւանէին: Հետեւաբար ոչ ոք կը յարէր իրենց ու անոնք ալ ամուրի կը մնային, բայց չէին տրտմեր, քանի որ իրենց պիտի երթային:

Հիմա կարգը երէցին երկրորդ աղջիկանն էր, սակայն անոր պէտք պիտի չունենային:

Բայց աղջիկը օրրատօրէ հասակ կ'առնէր, վարդի նման կը բացուէր: Տղայ մը հետը դուրս ելլել առաջարկեց. մերժուեցաւ. աշխարհի վերջը պիտի գար, անոր պէտք չունէր. ուրիշ տղայ մը նոյնպէս առաջարկ ներկայացուց. անոր ալ նոյն պատասխանը տուաւ: Տարիները կը ստակէին:

Աղջիկը գոչեճը վերջացնելու համար դեռ տարի մը ունէր ու անհամբեր՝ այդ տարուան կը սպասէր: Վերամուտին դընսաց զպրոց: Ուրախութեամբ սկսաւ դասերուն: Դպրոցիները սկսեցին երկու կամ երեք օր ետքն էր, երբ տղայ մը երեւցաւ աղջկան դասարանը. նստաւ աթոռի մը ու սկսաւ դասերով դրաշխիլ: աղջիկը դիտեց զայն. չհրցաւ ակնարկը անտիճապէս հեռացնել անոր դէմքէն, ինչպէս ուրիշ անգամներ կ'ընէր ուրիշներուն նայած ժամանակը: Ի՞նչ դէմք էր. աչքերն ալ դրաւիչ էին. չա՛տ. բան մը թփրտաց աղջկան հոգիին մէջ. սկսաւ միշտ տղուն կողմը նայիլ: Տղան նայեցաւ իրեն ու ժպտեցաւ, աղջկան սիրտը սկսաւ խլրրտիլ: Ի՞նչ պատահած էր հոգիին մէջ: Դառարին չուղեց ընկերուհիներուն հետ խաղալ. լռու քաշուեցաւ պատի մը տակ ու սկսաւ դիւրք կարդալ. բայց նոյնիսկ տող մը չհասկցաւ, գոցեց ետ. անդդալարս քաշեց աղուն մօտերը. տղան ուսուցիչի մը հետ կը խօսէր. վերջացնելէն ետք, աղջկան կողմը դարձաւ ու քարեւեց: Մանօթացան իրարու. յետոյ, դասի ատեն, տղան աթոռը փոխեց եւ աղջիկան աթոռին մօտը նստաւ: Երբեմն կը նայէին իրարու, կը ժպտէին. աղու՛ր էր տղան. ինչպէ՛ս սիրտը կ'ապուեցաւ. կ'ուրախանար ամէն անգամ, որ տղան պատրուակով մը հետը խօսէր. կը դգար, թէ տղան ալ իրեն համակրած էր:

Իրիկունը, տուն դնաց տարբեր արտայայտութիւններով. հայրը խորատուգւած Ս. Գիբրէին մէջ՝ կը կարդար. մայրը կերակուր կը պատրաստէր. աղջիկը իր սենեակը անցաւ, չհրցաւ դասերուն վրայէն անցնիլ: Ինչո՞ւ աշխարհիս վերջը պիտի գար. հոգիին վրայ ծանրութիւն մը կար. տառնապով անցուց զիշերը. սկսաւ օրըստօրէ աւելի տրտմիլ, կը վախնար հօրմէն: Օր մը հարցուց.

— Հայր, ե՞րբ պիտի գայ աշխարհիս վերջը:

— Քարոզներս մտիկ չե՞ս ընէր, աղջիկս, թէ ինչ կը խօսիմ:

Այս՛, գիտէր աղջիկը, ամէն շաբաթ եւ Կիրակի օրերը, տարիներէ ի վեր հայրը

ըն նոյն խօսքերը կ'ընէր, որ տնպատեաւ պիտի գայ Վերջը. ու այդ ալ այնքան մօտ էր, որ կ'ա՛մ այս տարի կ'ամ դալ տարի պիտի գար:

Աղջիկը գիտէր այդ ամէնը, սակայն հոգին կը տառապէր, ոչ ոք կը հասկնար իր տառապանքը ու ամէն օր տան մէջ նոյն պատմութիւնն էր: Ամէն իրիկունը դպրոցէն դարձին՝ հայրը տունը նստած Ս. Գիբրէ կարդալով դրադած կ'ըլլար. աղջիկը ալ կը զգուէր, տունը բանտի մը տպաւորութիւնը կը ժդէր. կարծես դուրսի աշխարհէն լուր չունէր հայրը: Այլեւս կը ջղայնանար ամէն անգամ, որ խօսքը ըլլար, թէ աշխարհիս վերջը պիտի գայ. ջղայնութեամբ ներսը, սենեակը կ'անցնէր:

Ուրբաթ օր մը, տղան առաջարկեց ճաշարան մը երթալ. աղջիկը այլայլեցաւ. տղան պատճառը հարցուց. աղջիկը բացատրեց. այս անգամ տղան սկսաւ այլայլել: Կը սիրէին զիրար. կայտուած էին մաքուր սիրով, բայց աղջիկը կը վախնար հօրմէն:

Իրիկունը, աղջիկը վախով մօտեցաւ մօրը ու պատմեց իր երազը...

— Աէ՛, աղջիկս, դուն այդ օրուան պիտի չհասնիս. մինչեւ այն ատեն աշխարհիս վերջը պիտի գայ ու մենք երկինք պիտի երթանք՝ փառաց պսակը ընդունելու:

Մինչ մայրը այդպէս կ'ըսէր, յանկարծ հայրը ուրախ-ուրախ եկաւ խոհանոց մատր մարգարէութեան գրեթեմէն մէկուն մէկ էջին վրայ դրած՝ ըսաւ կընոջը.

— Կարգա՛, կարգա՛ այս տողերը, ճիշդ իմ մատիս գրուած է:

Կինը գործը ձգեց, կարդաց ու բացազանչեց.

— Օ՛, ճիշդ ու ճիշդ մեզի համար գրուած է:

Աղջիկը ջղայնացած՝ դուրս ելաւ խոհանոցէն, դնաց սենեակը ու սկսաւ լալ ու հեկեկանքի մէջ ըսաւ.

— Կրնայ նոյնիսկ վաղը գալ աշխարհիս վերջը, բայց ես կ'ուզեմ ամուսնանալ:

Հեռաձայն եկաւ. մայրը վերցուց ընկալուչը: Հեռաձայնէն Լենան կ'ուզէին. կանչեց սղջկան: Լենան եկաւ: Վոյթըն էր, որ հարցուց.

— Պիտի գա՞ս:

— Այո՛, — պատասխանեց:

Պիտի երթալին կէսօրէ ետք, որպէսզի կասկած չարթնցնեն:

Այ ամբողջովին սիրտը կապուած էր Վոյթըրին ու գաղտնօրէն սէր կը բացատրէր. տղուն բազուկներուն մէջ, կը մտնար այն բոլոր խօսքերը, գորս հայրը կ'ըսէր: Իր աշխարհը սղան էր այլեւս բուն, իրական աշխարհը. ազատ, անկաշկանդ: Մեծ հօրը հիմնած պղտիկ հօտին քնակիչները կողապարուտ մարդիկ էին. աղօթքով կ'արթննային, աղօթքով կը քնանային ու աստուծոյ մինչեւ իրիկուն նստած աշխարհին վախճանին մասին բուերու պէս կը վայէին. միտքերնին տասնրկնցերորդ զարբ կը յիշեցնէր. մինչդեռ աշխարհ քսանըմէկերորդ զարբ գիմաւորելու կը պատրաստուէր:

Վոյթըր ինդրեց Լենային ձեռքը, աղջիկը լալով փաթթուեցաւ տղուն ու դառնապէս հեկեկաց. պատմեց հօրը ուրուսմներ իր կրօնքին յարեղու ու մկրտուելու մասին. ըստ հօրը, միայն իր ձեռքով մկրտուածները դրախտի պիտի արժանանային, իսկ միւսները, նոյնի՛սկ քրիստոնէականքը հեթանոսներ էին: Ա. Միսունդը շէին տօներ, ոչ ալ Ա. Յարուսթեան տօնին կը հաւատային բայց «Սօլ զիվուր» կը պահէին, ա՛յդ էր իրենց սրբազան օրը, այդ օր նոյնի՛սկ հեռաձայններու շէին պատասխանելու:

Տղան մերժեց. այդ բաները յիմարութիւններ էին պարզապէս. ինքը կ'ընդունէր, որ աշխարհին վերջը պիտի գայ, բայց ոչ թէ այսօր կամ մաղր, այլ շորս կամ հինգ պիլիոն տարի ետք. տղան այդպէս կը հաւատար ու չէր ուզեր ինքնակող իրենցի մը կողմէն մկրտուիլ. ատիկա բանտարկութիւն էր իրեն համար:

— Փոխէ, դո՛ւն փոխէ կրօնքդ, — ըսաւ տղան սղջկան, — միլիոնաւոր մար-

դոց պէս ապրէ իրր քրիստոնէայ, — ու մէջբերեց Յիսուսի խօսքը, որ ըսած էր.

«Սթէ մէկը ինձմէ Սերս չմտնէ, հասցա ուրիշ տեղէ մտնէ գոյ եւ աւագակ է»:

— Հայրս գող եւ աւագա՞կ, — հարցուց աղջիկը ու լալով բաժնուեցաւ տղայէն:

Տղան սկսած էր պաղիլ աղջիկէն. ուրիշ աղջիկներ ալ կային, դեղեցիկ, ներկայանալի, որոնք ատոր պէս բարոյքներ չուէին. կը մեղքնար միայն Լենային. ան բանտարկեալ մըն էր պարզապէս:

Աղջիկը սկսաւ տխուր կեանք մը ապրիլ: Ձէր խօսեր ու ասանձին եղած պահերուն կուլար. կը մտածէր. օրօրոցէն ի վեր լսած էր այդ պատմութիւնները, մեծ հօրը տեսիլքը, մահը. ասոնք խորհրդաւոր բաներ էին, բայց միւս կողմէ ալ կը սիրէր Վոյթըրը. դայն կորսնցնելու վախը կը տառապեցնէր դինք. ա՛ր, կը խորհէր աղջիկը, ինչո՞ւ եկեղեցիներ կան, որոնց մէջ սահմաններ կային, ու իրարու թշնամի երկիրներ էին կարծես. ինչո՞ւ չեն քանդեր մարդոց կողմէ գրուած սահմանները, ինչո՞ւ հայրը անդրաշուք էր. ե՞ս կարեւոր էի, թէ մկրտութիւնը. ա՛յս էր հարցը, ու հայրը կը պնդէր ատոր վրայ: Այսպէս կը խորհրդաւոր աղջիկը ու չէր կրնար ելք մը դուստնել. կը զգար, թէ անցօր էր: Իր արցունքներն իսկ չկրցան փոխել հօրը որու շուտները. մայրը երբեմն կը խրատէր աղջիկը, որ մոռնայ Վոյթըրը, այդ հեթանոս տղան, որ երբեք իրենց բնտանիքին վայել չէր, մնաց որ, աշխարհին վերջն ալ մօտ էր ու այդ տարի կամ դալ տարի անսպասման պիտի գար, ու արն ատն միայն իրենք զրախտին պիտի արժանանային:

Օրեր կ'ացնէին. աղջիկը կը մտածէր. քանի՞-քանի՞ անդամներ սիրու եղած էր ու չէր եկած աշխարհի վերջը: Գիտցաւ, որ սուտ էին ամէնքն ալ: Կրօնաւորները ամէնքն ալ, իրենք զիրենք կը



խաբէին պարպուպէս ու կը մտորեցնէին ժողովուրդը իրենց հանդիստին համար. միայն Յիսուսը կը բուէր, ան ամէն ինչ էր:

Օր մըն ալ աղջիկը որոշում տուաւ. ինք պիտի երթար Վուլթըրին ետեւէն. պիտի փնտռէր զայն ու պիտի իյնար անոր ոտքերուն ու ըսէր.

— Քուկդ եմ, առ զիս. ես ա՛լ չեմ հաւատար հօրս քարոզներուն. տար զիս ո՛ւր որ կ'ուզես:

Սկսաւ փնտռել Վուլթըրը. գնաց անոր հետքերով. տղան զործի բերումով ուրիշ աշխարհ փոխադրուած էր, բայց դուռ հանցէն ու հեռաձայնի թիւը, սրտի յուզումով բացաւ թիւերը. տունը չէր. յաջորդ օրը նորէն փորձեց խօսիլ, բայց չկար տղան. սիրտը կը տրոփէր, ամէն անդամուն տարբեր ժամերուն կը փորձէր. կ'ուզէր գտնել անպայման: Իրիկուն մը նորէն բացաւ հեռաձայնը. ամէն մէկ

զարկին սիրտը կարծես պիտի փրթէր. ահա բացուեցաւ հեռաձայնը:

— Այո, — կին մըն էր պատասխանողը, բարակ, նուրբ ձայն մըն էր. յայտնի էր, որ երէտասարդ էր:

— Վուլթը՞րը կ'ուզէք, հոս չէ, — կրկնեց կինը:

Կասկած մը կայծակի արագութեամբ եկաւ Լենայի մտքին, ու հարցուց.

— Դուք իր քո՞յրն էք:

— Ո՛չ, տիկինն եմ, — պատասխանեց ձայնը:

Լենա ինչպէ՞ս գոցեց հեռաձայնը, չգիտցաւ: Փլաւ բաղձոցին վրայ ու սիրտաւ բարձրաձայն լալ: Մայրը վաղեց, հասկցաւ եղելութիւնը, առաւ աղջկան դուռը թեւերուն մէջ ու սկսաւ մխիթարել:

— Մի լար, աղջիկս, մի լար. շուտով աշխարհի վերջը պիտի գայ. անպայման պիտի գայ:

ՆԵՐՍԷՍ ՎԻՐԱՊԵԱՆ



## Գ. Պ Ը Լ Տ Ե Ա Ն

Այս գրութիւնը շունի վերնագիրը եւ կը թուի որ չի կրնար ունենալ վերնագիր, որը կենար անոր գլխուն վրայ, բարձր, զիջ թը անմատչելի, սուկաիեալ, բայց գրուած եւ այսպէս բերէր մնացեալը: Այդ գմնացեալը ինչպէ՞ս կրնայ սմուն ժը առնել, այսինքն դառնայ երկուսի՞ եւ զէժք մինչ պէտք է մեայ ան-անուն, չնկող եւ կարծես շըուած:

Ա.ԻԱ

վերելքն ի վեր վիհին  
 ժայռը գոց, ոչ  
 Սիգիֆի, ոչ  
 Պրոմէթէոսի ախարուած լերան վրայ ծայրագոյն, ոչ ալ  
 քերթուած նարեկայ վանականին  
 ծովին միջեւ ծիծաղախիտ ու երկնքին  
 յայտնուած  
 ժայռաբանդակ վերընծայում ազօքէի. երկիր խոչերու  
 պարգուող կարմիր լեռներն ի վեր, երկիր  
 աւետեաց կազմուող շիւղին մէջ ձիթենի  
 հեղեղէն ետք կրակին  
 եւ արեան, լիութեամբ երկիր  
 քերթուածին. ծառը թաւ  
 կը բարձրանար բաց ձորին վրայ եւ քերթի լոյսերուն  
 ծանրը կապոյտ շարժումով աստղերու շրջումին, Իգիս  
 արձանացեալ լռութեան. բայց  
 ըլլալ հոս, միայն  
 հոս պարզութեան վրայ քերթն կտրտուած  
 հասեալ կեդրոնէն. ո՞վ  
 կը խօսի հոս, գիտնար ինքզինք ու ճամբան եւ ըսէր  
 բոյրին պէս

տուող քառ ներկայութիւնը վարդի՞ն բացակայ .  
 ի՞նչ նամբայ  
 փռռող  
 հեռացնող բեզ ծմակներէն ծնունդի  
 ուր եռար մէկ ծառերուն հետ շշիւններուն,  
 մետող բեզ  
 բեզմէ դուրս հովուն  
 պատուածքին ոյ կը բանայ ամէն հարցում .  
 օ բազմաթիւ  
 կապուած հողերուն բազմաթիւ  
 եւ այսպէս  
 անկապ, ձգում դէմքերու . ճայնին մէջ կը մնայ միայն  
 լուսինն եւ մութ եւ բացակայ  
 հող ստարագիր  
 լիութիւնը հողերուն այլադարձ, գիրը ուր  
 պիտի ապրիւ . եղբրամայրեր լացող  
 լուացող մարմինը մարդուն մեռած ջուրերուն մօտ  
 սեմին մեկնումի, եւ դուն  
 սրնգահար Տիտիրոս ծառերուն տակ պուրակին  
 եղբրերգող  
 տիբրութիւնը մանկութեան երգին,  
 մեռար  
 անբաժան . անվերադարձ էլք  
 եւ նամբուն վրայ ծանրացող քայլը ճամբորդին  
 վերջնական, ամբողջական  
 հատում  
 որ ան կը կրկնէ կշռոյթին մէջ բացուող հորիզոնին  
 լեռներն ի վար եւ ամէն  
 շարժումին բառի . խորունկ  
 գետը ծանր ծառայող կը բերէ սիկերն ալգաւանդ  
 հուններուն վրայ . կը տեղանին  
 դեղին հանդարտութեան մէջ աշխատող հասունութեան . օ  
 մեռած ստուած բաժանման մէջ հողերուն  
 պատուած  
 ծայրագոյն եւ ծնող ցորեններէն խոնաւ լոյսի խաղին,  
 անցար սահմանէն մահուան, բայց  
 անկարելի ինձի, լեզուին, տնգանցելի . մարմինը կապոյտ  
 զոտսուած կ'երկարի բարէ քանակումն ի վար  
 գետին ծիւռն  
 մտնող յանրժութեան մէջ անշարժ .  
 բարերուն վրայ՝  
 նշաններ անհանաչ լեզուէն, արշիպեղագոս

հետհերու  
 պահող անցքը համբարդին ջուրերէն. սուրբեր Ռավեննայի  
 խնանկար եւ մեռած ոսկեգօծ, եւ մատներ աւրիկի  
 կանգնող կլոր կաթողիկէն հողին  
 թափանցիկ, համբող  
 ոսկին, լուսամբ ձեռքեր երկարող մութն ի վեր  
 ի՞նչ մտազուլ ու քանդակեալ  
 քերթուած յայտնուած երեւոյթին. շունկ դի՛ր  
 պահուող տրուող կանչին խորացող հուններուն վրայ լուսեան, գետ  
 հեռացող ծագումէն  
 եւ յաստում. մաւտ  
 մաւտ արտաքի մետաղ քաղաքներուն կոտորակուող ծովուն վրայ  
 եւ ճիւղներու ձգարկ լիաբանան մտուլ  
 եւ հովին. նամբան քերթուն  
 վրայ. դժուար  
 լինելութիւն, դժուար  
 կշռոյթ  
 հասարակակշիռ սրտին միջեւ ու նայուածքին  
 պահելով  
 դէմքը թափանցիկ՝ հովուն. հող օ մայր  
 եւ արտար եւ յ  
 խաղաղական ազատտան լայնալին ծոցի  
 ծովուն դէմ, ուր նստէի, միայն  
 արտար  
 եւ գիշերը արտարին  
 եւ փորձը արտարին ուր էի եւ ըլլալ  
 բնակիլ, դուրս  
 քերթուածէն. ծայրագոյն  
 վտանգ եւ ծայրագոյն լայն  
 ուր կ'ըլլայ խօսքը ինքզինք  
 մտերմութեան մէջ հողին, կը դառնայ, երկու  
 միութեան. օտարութիւն  
 օ վաւերական դէմք շարժող շողին միջեւ ու աստղին  
 հանչող ինքզինք ու մտազուլ  
 ցաւին մէջ,  
 հիացիկ  
 որորներու սլացիկ կապոյտ թռիչքին կտրատուող. յայտնարար  
 խօսք արտարի ուր կ'աջարակի խօսքը հին  
 ու կ'ըլլայ.

Գ. ՊԸԼՏԵԱՆ

ԱՐՇԱԿԻՐ ՇԻՐԱԿԵԱՆ

«ԿՏԱԿՆ ԷՐ  
ՆԱՀԱՏԱԿՆԵՐՈՒՆ»

ԱՀԱԲԵԿՈՒՄ...



5 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1921

Եւ յանկարծ վերէն, լուռեցաւ կառքի մը զզրոյիւնը: Մէկէն մարմնէս անձանօթ սարսուռ մը անցաւ, երբ անսայ հսկայ ձիերը, որոնց բաշերը հովէն կ'ալեծըփէին: Կառքին մէջն էր Սայտո Հալիմ փաշան՝ իր թիկնապահին հետ: Վտարկեանապէս «ցտեսութիւն» ըսի Հեյննային, պատուիրելով որ շուտ ներս մտնէ, քանի որ «Տայր» կու գար...

Անմիջապէս քաշեցի միւս մայրը, որպէսզի լաւագոյն զիրքով մը անարեկումը կատարեմ. բայց քանի մը ակընթարթ ուշացած ըլլաւուս, զիչ մնաց ձիերուն տակ մնայի. ձեռքս վերցուցի, բառնցքս ցցած. ձիերը խրաշեցան եւ

ծառայան: Այդ իրարանցումին մէջ, արագ ոտուածով մը անցայ եւ ցատկեցի կառքին վրայ, կոխելով ոտնատեղին: Մէկ ձեռքով բռնեցի կառքին յենարանը, զիչ մը երեքացի, բայց հուսատրակչուութիւնս կրցայ պահել: Մինչ թիկնապահը կառապանին կը նայէր ու բաներ մը կ'ըսէր, երեւի հասկնալու համար ձիերու խրաշիւը, Սայտո Հալիմ փաշային աչքերը հանդիպեցան աչքերուս: «Յրէն» ըսաւ թիկնապահին: Այս եղաւ Սատրապումին վերջին բառը: Աչքերը սարսափով լեցուն էին՝ երբ ատրճանակիս փողը ուղղեցի աջ քունքին եւ կրակեցի: Երկրորդ փամփուշտի մը հարկ չմնաց: Խապոս



ՍԱՅԻՏ ԷԱԼԻՊ ՓՈՇԱ

ձայն մը եւ Փաշան նստած տեղէն տապալեցաւ կառքին մէջ, դուրսը իմ կողմս, գրեթէ ոտքերուս տակ: Կառքը դեռ կ'արշաւէր:

Թէ՛վֆիք Ալմիհն, առաջին շփոթէն սթափած, ատրճանակ մը հանեց ու կը պատրաստուէր կրակել, երբ ատրճանակէն փողը անոր ալ ճակտին ուղղելով, դոտացի թուրքերէնով:

— Աք աշաղը, կեպերք իբրըմ. — նեաէ՛ դէնքդ, կը սատկեցնեմ...

Հնարանդեցաւ եւ ատրճանակը կառքէն դուրս նետեց, ահարկի դէմքով: Ատրճանակիս կոթովը այս անգամ սկսայ հարուածել կոտապանին կունակին, պոռալով, իտայերէն. «Ասրիքթա, ասրեքթա». «կեցի՛ր, կեցի՛ր»: Սեղծ կոտապանը վախէն կը դողար եւ յուսահատական ճիւղերով դիս վկայութեան կը կանչէր, ըսել ուզելով. — Տե՛ս, կեցնել կ'ուզեմ, բայց ձիերը չեն կենար:

Կը վերջիչեմ տակաւին. տարօրինակ ու անհաւատալի տեսարան մըն էր: Զինուորու խելակորոյս վաղբը, Փաշային կախ ինկած դուրսը, որ կը ճօճուէր կառքէն դուրս, սարսափահար թիկնապահը, որ ձեռքերը վեր՛ նստած կը մնար մոմի պէս, խուճապահար կառապանը. եւ ես, մէկ ոտքս կոխելիք տեղին վրայ եւ միւսը ներս ու ատրճանակը ձեռքս: Ուժգին հոյզն վերարկուս կը ծածանէր կունակիս վրայ, հակայ թռչունի մը ձեւը տայով ինձի: Այս պատկերը, որ կ'ամբողջացնէր դէմքիս իմած սեւ գլխարկս, անցորդներէն ոմանց երեւակայութիւնը գրգռած էր եւ հետագային ստոխկանական հարցաքննութեան ընթացքին, առիթ տուած էր անոնց ըսելու թէ սպաննորդ ուրուական մըն էր. — Փանթօմա:

17 Ա Պ Ր Ի Լ 1922

Երէկ, ամբողջ օրս անցուցի Սաք ընտանիքին հետ: Առաւօտուն եկեղեցի դացինք, յետոյ տան մէջ հացկերոյթ մը տուին, որուն մասնակցեցան նաեւ երեւոյրս բարձրատղան ստոխկաններ, ընտանիքներով միասին: Ճոխ էր սեղանը եւ համեղ ուտելիքներ ու պտուղներ՝ առաւ խմիչքներով: Կը շաղակրատէինք, խնդալով, ծիծաղելով եւ ըսեմ, որ ծիծաղներու պատճառը մասնաւորաբար իմ կոտորած գերմաներէնս էր եւ անբաժանելի բառարանս: Եթէ դիտնային, թէ ես

ով եմ եւ ինչո՞ւ հոն կը գտնուիմ, արդեօք ի՞նչ աչքերով պիտի նայէին ինձի. եւ եթէ դիտնային ուսմանահայ մեծահարուստի տղուս կեանքը ինչ բարակ թեւէ մը կախուած էր, այդ օրերուն կամ ժամերուն ի՞նչ պիտի ըսէին արդեօք: Մեզի արգիլուած էր սասնկ բաներու վըրայ խորհիլ. սրբազան նպատակի մը կը դիմէինք եւ ամէն գնով պէտք էր հասնիլ անոր: Բաժակները կը պարպուէին ամէնուս կենացը, երջանիկ եւ երկար տարիներու համար բարեմաղթութիւններ կը

տեղային եւ մենք չէին զիտեր, թէ քանի օր եւս պիտի ապրինք...

Հիւրերը մեկնելէ ետք՝ բաւական մը հանդիստ ըրինք եւ իրիկուան դէմ, իմ աղնիւ ու գուրգուրոտ ընտանիքիս անդամները հրահրեցի դարեջրատուն-ճաշարան մը, ուր շարունակեցինք մեր «Քէյֆը»։ Գիշերը բաւական հանդիստ քնացայ։

Այս առտու, երբ աչքերս բացի, Յրից բարեկամս հօկայ թաթերով դուռս կը հարուածէր. ելայ բացի։ Թեյադարի նման ամբողջ ուժովը նետուեցաւ վրաս եւ քիչ մնաց տապալիք զիս։ Յետոյ փրուեցաւ անկողնիս վրայ եւ սպասեց, որ դիմը հիւրասիրեմ, ըստ սովորութեանս։ Սեղանիս վրայէն շոքոբայի խոշոր կտոր մը վերցուցի եւ առջեւը ձգեցի։ Ախորժակով լափեց։ Կտոր մը եւս տուի։ Քիչ մը խաղաց ու ան ալ կլլեց. յետոյ նրստու ու սկսաւ հետեւիլ շարժումներու։

Նախ անժիրուեցայ, ապա՝ եղունգնեցաւ յարդարեցի, քանի մը մարմնամարզական շարժումներ ըրի, լաւ մը լուացուեցայ ու մաս-մաշուր ճերմակեղէններս փոխեցի ու հազայ Պերլինի մէջ իմ կարելի տուած նոր ու շիճ հազուսար։ Կոչիկներս բծախնդրութեամբ ներկեցի ու փայլեցուցի։ Հայելիին մէջ նայեցայ ու հաւնեցայ արդուզարդիս։

Ճեփ-ճերմակ շապիկիս տակ հագած էի քալիսմանս. շոշափեցի եւ ազահոփութեամբ լայն շունչ մը առի։ Ի՞նչ է քալիսմանս։

Առանց օձիքի ճերմակ շապիկ մը, զոր հագած էի մատնիշ-խաֆիէ Վաչէ Իհսանը ահաբեկած օրս։ Վրայէս չէի հանած Մետեխի բանտին մէջն ալ, մեր շարչարանքի օրերուն։ Մարմնէս անբաժան պահեցի նաեւ Մարտ Հալիմ փաշայի գանկը տաղած օրս։ Անկէ ետք՝ քանի մը անգամ հագած էի, վճռական որոշումներ տուած օրերուս։ Ոչ ոքի վստահած եմ դայն, ոչ ոքի յանձնած եմ։ Ես կը լուայի ու առանց արդուկի կը հոգնէի, քանի որ անբաժան ստորճանախի ժանդը վրան խոշոր խալ մը շինած էր։ Զրահ մը ըլլար կարծես, որ զիս գերծ կը պա-

հէր շար աչքէ, շար արկածներէ եւ վըտանդներէ։ Եւ մինչեւ այսօր ալ, այս շապիկս հոգածութեամբ կը պահեմ։

Յրից բարեկամս զարմանալի ուշադրութեամբ կը հետեւէր շարժումներուս. ամէն անգամ որ իր կողմը դառնամ, անասունի մեծ ու փայլուն աչքերը աչքերուս յառած՝ կարծես կ'ուզէր ըմբռնել, թէ ինչո՞ւ այս առտու այդ պատրաստութիւնները կը տեսնեմ եւ որո՞ւ համար։ Երբեմն տխուր բան մը կ'անցնէր աչքերէն, մտահոգութեան պէս բան մը. կամ գոնէ ես այդպէս կը տեսնէի։ Բարեկամս կը զգա՞ր արզեօք, թէ այդ պահուն ինչ փոթորիկ մը ներսս կ'ալեկոծէր...

Իուրս ելլելու վրայ էի, երբ Պերլինն ներս մտաւ։ Առանց սպասելու, որ ինձի գալուն պատճառը պարզէ, սա հարցումը ըրի գերմաներէնով.

— Շունը դուրս հանե՞նք։

— Ես, ես, — ըսաւ ու անմիջապէս գնաց հազուեցաւ-շքուեցաւ ու եկաւ։

Պտոյս մը ըրինք առդին-առդին, կենդանաբանական պարտէզին կողմերը։ Շունը հանդարտեցնելու նպատակով այդ պտոյտը առաջարկած էի. գոնէ ինձի այնպէս կու գար, որ անհրաժեշտ էր. օղը ամպոտ էր, Մեռելոցի վայել օդ, ձմաբան խումբ-խումբ ընտանիքներ, ծաղիկներով բոռեաւոր, իրենց սիրելիներու գերեզմանները զարդարելու կ'երթային։ Իսկ անդին, կը խորհէի, մեր ամալացած հայրենիքին դաշտերուն եւ արտերուն մէջ, յետներուն եւ բլուրներուն վրայ, ձորերուն եւ հովիտներուն խորը, հազար-հազար անյայտ գերեզմաններ կը մնային ո՛չ միայն առանց ծաղիկի կամ շիւղ մը կանաչի, այլեւ տաանց այցելուի...

Վերագարձանք տուն եւ դրան առջեւէն բաժնուեցայ Պերլինն ու Յրից բարեկամէս եւ ուղղակի գացի մեր 176 թիւ սրճարանը, ուր կարկանդակով սուրճ մը ապսպրեցի։ Ոչ գոնեաք, ոչ ալ սուրիլ որեւէ խմիչք։ Ինչո՞ւ պատրաստուեցայ, ինչո՞ւ քալիսմանս հազայ. յստակ հաշիւ մը չէի կրնար ընել եւ հաւանակաւորութիւններ նկատի առած էի։ Եթէ այս

զիշեր առիթը ներկայանար, արդարութեան հարուածը պիտի իջնէր այդ անօրէն աշխարհին եւ մարդակեր զազաններուն վրայ, հոգ չէ թէ փայլակի մը արագութեամբ: Բայց կը հաւատայի, որ մեր անթիւ անշիրիմ նահատակները անգամ մը եւս սփոփանքի զոջ մը պիտի ունենային Մեռելոցի այս օրով:

Միտքս ուրիշ բաներով ալ զրազած էր. կարելի չէր մտաւորութիւն չունենալ: Հապա՞ եթէ բռնուէինք. դաս-դասստանէ՞ ետք կրնային մահուան դատապարտել մեզ կամ տաժմենակիր աշխատանքի եւ կամ տեղւոյն վրայ իսկ կրնային սպաննել: Հայրենիքի վրէժ-խնդրութեան կիրքը սակայն կը կարտէր այդ սեւ թելերը: Ազատ ու ապահով ապագայի մը պատկերը հոս ալ ներկայացաւ եւ նշանածս իր մշտաժպիտ աչքերով եւ իր հիւսած դեղիցիկ երազներով: Բայց ասոնց ատենը չէր ու զանոնք ալ կը ջլնջի: Կեանքը քաղցր է այս թարմ տարիքիս մէջ, երբ կը յորդիմ զուարթութեամբ, ուժով ու եռանդով: Ճանչցած էի սէրը եւ ինքզինքս բաւական փորձառու եւ հասունցած կը գտնէի լաւազոյն կեանքի մը համար: Եւ ամէն ինչ կրնար կորսուիլ ու փճանալ մէկ ակնթարթի մէջ, մէկ հարուածով: Որքան ալ լաւ պատրաստուած ըլլայինք ու հաւանականութիւնները հաշուած, անակնկալը կամ աննախատեսելին կրնար ամէն ինչ սակ-նուժբայ ընել:

Աստուգանիմ, որ Հոռոմի մէջ ասանկ մտքերով շատ շէի տարուած եւ մը-տաւհուութիւններս ուրիշ տեսակ էին. շատ էինք տեսնացեր եւ թանկագին ժամանակ վատնած: Հոս ալ նոյն պատմութիւնը կրկնուած էր եւ համբերութեանս բաժանը յորդեյու վրայ էր: Այսօր ջիզերս պրկուած են եւ անհամբեր դարձած եմ: Այ պէտք է շարժիլ արագ ու կրաբուկ: Մինչեւ ե՞րբ պիտի փնտռենք յարմար առիթը. ինչո՞ւ մենք չտեսնուէինք: Պատասխանատու Մարմինէն 16 օրուան պայմանաժամ ուզած էինք եւ լրտնալու մօտ էր: Եթէ մեզ ետ կանչէին, կատարեալ խայտառակութիւն եւ անպատու-

թիւն պիտի ըլլար: Նեղացուցիչ մէկ պարագան ալ սա էր, որ ներսէն ԷՌՔՐԻԿԱՆԵՐ կը զարձնէին եւ անոնց ալ հեղնանքին նիւթ պիտի դառնայինք: Արամը գտնեմ ու համոզեմ, ըսի ինքնիրենս:

Կէսօրէ ետք, ժամը երեքի ատենները Պեհաէտտին Շաքիրը անցաւ Երուսաղիմ մը ընկերակցութեամբ դէպի Ճեմալ Ազմիի տան կողմերը: Սուբճիս զրամը վըճարեցի ու կը պատրաստուէի զուրս ելլել, երբ Արամը երեսուն ելաւ:

— Քիչ մը ինծի սպասէ, — ըսի ու զուրս ելայ՝ հետեւելով Պեհաէտտին Շաքիրին, որ ուղղակի մտաւ Ճեմալ Ազմիի տունը: Մեր դօրծին չէր դար աշխտեղ դօրծել: Մէկը զուրան էր, միւսը՝ ներսը: Կ'ուզէինք, որ հաւաքուած ըլլան թիւ 80 տունը, Ձէզոք տունը, ուր կը նստէր Ազմի անուն նախկին կուսակալ մը կարծեմ, որ մեր ցանկին մէջ չկար:

Վերադարձայ եւ Արամին յայտնեցի, թէ այսօր պէտք է պատրաստ ըլլանք: Արդէն միշտ պիտուած էինք: Հոն մինչեւ ժամը ութ սպասեցինք. մարդը մէջտեղ չեկաւ. անգամ մը եւս այդ կողմերը դեպքերիլը կասկածներու տեղի կրնար առլ եւ մենք ծայրայեղ զգուշութեան պէտք ունէինք, քանի որ վճռած էինք այդ դիչերն իսկ հարուածել: Աւելի ուշ, ավելի ապահով կերպով կրնայինք այդ կողմերը շրջիլ: Բաւական հեռու ճաշարան մը գացինք ու լաւ ճաշ մը ըրինք: Գրեթէ լուռ էինք: Պահ մը ըսի.

— Արամ, կրնայ ըլլալ որ մեր վերջին ճաշն է...

Ժպտեցաւ. այտուկրները զիշ մը եւս ցցուեցան, ինչ որ կատաղութեան նշան էր եւ գլուխը շարժեց ինքնայատուկ ձեւով մը, որ սա իմաստը ունէր. — Ատանկ բան չ'ըլլար... Հոգ մի ըներ...:

Ժամը իննին Ճեմալ Ազմիին կողմը հասանք. տունը մութի մէջ էր: Արամ զիշ մը անդին սպասեց, իսկ ես դացի Պեհաէտտին Շաքիրի տունը: Հոն ալ լոյս չկար: Աւրեմն ուրիշ տեղ մը հաւաքուած են: Գացինք մեր համբաւաւոր Ձէզոք թիւ 80 տունը. բնակարանը արտակարգօրէն լուսաւորուած էր: Ապա ուրեմն բարրն



ալ հոս հաւաքուած են. վերջապէս, հաղ-  
ապիւտ էր առիթը:

Այլեւս ո՛չ միայն ապիկարութիւն,  
այլեւ վատութիւն էր այս առիթը փախ-  
ցընելի Այնպիսի Մեռելոց մը սարքէինք,  
որ անգամ մը՝ եւս մեր սողը ուրախու-  
թեամբ մասնակցէր անոր:

Այնպիսի խանդավառութեամբ մը  
լեցուած էի, որ կեցած անդս կ'եփէի: Ա-  
րամին ըսի, թէ ինչ հոգեկան վիճակի մէջ  
եմ: Ժպտեցաւ. ինքն ալ ուրախ էր,  
բայց լուռ կը մնար. միայն այտուկընե-  
րը աւելի ցոլեցան եւ նշածեւ աչքերը  
վայրազ ու կատաղի փայլ մը առած էին.  
ըսա սովորութեան՝ դուրսը կ'երեքցնէր  
շարունակ:

— Արամ, — ըսի, — դուն հոս սպա-  
սէ, երթնա՛մ Երանը գտնեմ եւ մեր որո-  
շումը յայտնեմ:

Ինկիլէէ Քաֆէին մէջ Երանն պիլար-  
առ կը խաղար ճակոնցիի մը հետ: Կա-  
ցութիւնը պարզեցի:

— Հիմա կու գամ, — ըսաւ:

Առանց իրեն սպասելու՝ վերադար-  
ձայ Արամին մօտ. չէի ուզեր առանձին  
թողուլ: Օղբ ցուրտ էր եւ կը մտէր. դը-  
նաց գոնեաք մը պարպելու եւ վերադար-  
ձաւ: Արագ երթեւեկէ քրտնած էի. ժա-  
մը տասն էր. կը ճեմէինք փողոցին մէջ  
եւ երբեմն դիմացը անցնելով տաղին-ան-  
դին կը զննէի:

Աւրանի վրայ անսովոր բան մը  
չկար եւ ժողովուրդը խուճ-խուճ սի-  
նեմաները կ'երթար: Մինեմայի մը առ-  
ջեւ պահ մը կեցայ ու աչք մը նետեցի  
հսկայ ճանուցումին վրայ: Կը ներկայա-  
ցընէին այդ շրջանին հռչակաւոր գար-  
ձած Փիլի մը, — Տաք՝ Մապիւս: Առ-  
դին-անդին աչք մը եւս պտտցնելէ հոք,  
Արամին քով գացի: Երանը հասաւ.  
յայտնեցինք իրեն մեր որոշումը եւ մեր  
տրտազարութիւնը. Ֆիդիքոսպէս եւ հո-  
ղեպէս պատրաստ էինք եւ ամէն վտանգ  
աչք առած էինք այդ դիշերն իսկ գործը  
դուրս հանելու համար: Մեկնեցաւ: Ալ  
պէտք չունէինք իրեն: Հետագային իմա-  
ցանք, որ գէպէին վայրը դացած էր ու  
կը սպասէր անկիւն մը:

Այնտեղ գամուած սպասեցինք: Ժա-  
մերը չէին սահեր եւ վայրկեանները ժամ  
էին դարձած: Կեանքիս մէջ այդքան եր-  
կար եւ շարժարալից սպասում չէի ունե-  
ցած: Գրեթէ ջղայնացած էի. Արամը կը  
տեսնէր ու կը զդար եւ զիս հանդարտե-  
ցընելու համար ըսաւ.

— Եղբայ՛ր, ինչո՞ւ այդքան ինքզին-  
քրդ կ'ուտես... Եթէ այսօր չյաջողինք,  
էդուց կը փորձենք... ձեռքերնէս շնն  
կրնար փախչիլ...

Այդ խօսքին վրայ պաղ քրտինք մը  
անցաւ կոնակէս:

— Արամ, — ըսի, — ասանկ առիթի  
մը կը սպասէինք երկար ատենէ ի վեր:  
Այս մարդիկը յաճախ հաւաքոյթներ կամ  
ժողովներ կ'ունենան առհասարակ ձեւով  
Ազմիլին եւ Պեհալտոն Եաքիլին տունե-  
րը: Արդ՝ երբ ձեւով Ազմիլին տունը հա-  
ւաքուելէ հոք մեկնին, բնականաբար  
տանտէրը տունը կը մնայ, նոյն է պա-  
րագան Պեհալտոն Եաքիլին: Մինչդեռ  
հիմա բոլորն ալ Ձէզոք տունը հաւաք-  
ուած են եւ մեր երկու հրէշները այս դի-  
շեր միայն միասին կը գտնենք, նայինք  
ուրիշ ասանկ լաւ առիթ մը պիտի կարե-  
նա՞նք գտնել: Այսօր է մեր օրը:

Եւ անեցուցի:

— Արամ, լաւ միտքդ դիր, բառա-  
բանիս մէջ էդուց չկայ, այսօր պէտք է  
վերջացնենք...

Այդ պահուն ցաւեցայ Երանին լուս  
մեկնելուն հոմար: Վստահ էի, որ ան ալ  
էզուցը պիտի շփրէր: Յետոյ՝ Պատաս-  
խանաւու Մարմինը մէկ վայրկեանէն  
միւսը կրնար մեզ ետ կանչել կամ գործը  
զադրեցնելու հրահանգը դրկել: Անդիի  
Էնթրիկներն ալ տարբեր: Եթէ դրական  
զոր՝ մը շտեմէինք, Պատասխանաւու  
Մարմինը անոնց բոլորովին իրաւունք  
պիտի տար: Կարծես սթափեցայ եւ կրկն-  
եցի.

— Այս գիշեր պէտք է վերջացնել...

Փողոցին մէջ անցորդներուն թիւը կը  
չտանար. աչք մը պտտցուցի եւ ընկե-  
րովս ըսի.

— Եթէ նոյնիսկ բանակ մը ունենան

գիրենք պաշտպանող՝ եւ պիտի յարձա-  
կիմ...

Արամը լուռ էր եւ Մետեիի օրերէն  
դիտէր, որ ես յամառ եմ:

ՓԱՄԸ 11.15.— Երբ սինեմաներէն  
խուռն բազմութիւնը դուրս կը խուժէր  
եւ կը սահէր պողոտաներու վրայ, ալիք-  
ալիք իրարու ետեւէ, ելեկտրական լայ-  
տերներու յորդ լոյսերու տակէն, 80 թիւ  
ափարթըմանին դուռը բացուեցաւ:

Նախ դուրս եկաւ Բուհնի պէյ, կար-  
ճահասակ մօրուաւոր թուրք մը, մօա  
յիսուն տարեկան, որ միշտ շուարած մէ-  
կու մը կերպարանք ունէր. շատ անգամ  
սեռած էի գինք՝ ծրարներ ձեռքին. կար-  
ծեմ բուրդին առեւտուրը ան կ'ընէր եւ  
միշտ ալ ձեռքը գրպանն էր:

Պէյին ձեռքը դարձեալ գրպանն էր,  
դուցէ տարճանակի մը վրայ. քանի մը  
քայլ առաւ, առդին նայեցաւ, յետոյ ետ  
դնաց, կրկին դարձաւ, ապին-անդին նա-  
յեցաւ ու նորէն տուն մտաւ: Արամին  
հետ դիմացի անկիւնէն կը դիտէինք:  
Բուհնի պէյ դուրս ելաւ նորէն, բայց այս  
անգամ բազմութիւն մը ետեւէն: Ճեմալ  
Ազմիտին կինը, աղջիկը, մայրը եւ մեծ  
աղուն Նշանածը: Անոնց ետեւէն Պեհա-  
հատին Եաքիբ եւ Ճեմալ Ազմի, թեւ թե-  
ւի, ու կը խօսակցէին, երեւի վերի խոր-  
հորդակցութիւնը շարունակելով: Ամէնէն  
ետեւը Թալաթիին եւ Պեհահատին Եա-  
քիբին կիները: Հանդարտ, հանդարտ կը  
յառաջանային դէպի ձեմալ Ազմիին բնա-  
կարանը, Ուրանտի վրայով դէպի Քուր-  
Քուրսթիմնոս: Անոնց բռնած փողոցին  
դիմացը՝ անկիւն մը, ծառի մը տակ  
կանգնած, շարուած եւ անթարթ ալքե-  
րով գիրենք կը դիտէինք: Բազմութիւնը  
շատցած էր փողոցին մէջ:

Մեքենաբար դէմքս խաչակնքեցի:  
Տասը վայրկեան ետք ի՞նչ պիտի պատա-  
հէր. ի՞նչ պիտի ըլլար, չէի ուզեր մտա-  
ծել անգամ: Մէկ բան դիտէի. պէ՛տք էր  
վերջացնել: Արամը դարձեալ յայտնեց,  
որ այդ գիշեր չենք կրնար յաջողիլ. նախ  
փողոցը շատ մարդ կտր, եւ յետոյ՝ չէկ  
մարդ մըն ալ վերի անկիւնէն գալով կը  
հետեւէր թուրքերու խումբին եւ քիչ ետք

առաջ պիտի անցնէր ու նոր ետ պիտի  
գար: Յայտնի էր, որ այդ մարդը վար-  
ձըւած մէկն էր: Խումբը տասի բարձրա-  
ցաւ:

Հակառակ ասոր, աւելի յարմար ու  
գեղեցիկ սոթթ մը չէր կրնար ըլլալ մե-  
զի համար: Արդէն ամէն գիշեր այդ ժա-  
մերուն բազմութիւն կար հոն, ինչպէս  
դիտած էի գիշերային պատշտներու ըն-  
թացքին Հեր Սաքին եւ Տրիցին հետ:  
Այդ երկու հրէշները մէյ մըն ալ ե՛րբ  
միասին պիտի դանկինք. ժամանակ չու-  
նէինք. կարճ էր մեր ժամանակը: Եթէ  
այս սոթթը փայցնէինք, ամբողջ ազգ մը  
մահուան դատապարտած ճիւղները ա-  
զատած պիտի ըլլային: Այս միտքը այն-  
քան զիս դրդեց, որ նկատեցի, թէ ձեռ-  
քըս բարկութենէս զոցուած է: Լայն  
շունչ մը քաշեցի եւ ասանց շարժումի  
թուքերու մէջ պահեցի. ընկերոջը ըն-  
թացքը անակնկալ էր՝ եւ թուրքերուն  
խումբը կը յառաջանար. ա՛լ ժամանակ  
չկար. քանի մը վայրկեանէն հասած պի-  
տի ըլլային Տրապիզոնի Չարաբարին  
տունը... սարսափելի էր գիճակս. մար-  
մինէս դող մը անցաւ, իրա՛ւ սոթթը պի-  
տի փայցնէինք:

— Արամ, — ըսի, — եթէ չգաս՝  
մինակս կ'երթամ: Եւ քալելու պէս շար-  
ժում մը ըրի:

Ջարդարներու խումբը բաւական  
առաջացած էր եւ իրենց հասնելու համար  
պէտք է կռնակէն քալէինք, ինչ որ մեր  
գործին չէր դար. անոնց հետեւելով հա-  
ւանաբար կասկածի ենթարկուէինք, մինչ  
ճակատէն իրենց վրայ խուժելու եւ հար-  
ւածելու պատեհութիւնը կորսնցուցած  
էինք: Ե՛կ մարդը անոնց ետեւէն կ'եր-  
թար միշտ: Պէտք էր, ուրեմն, գիրենք  
յանկարծակիի բերել, առջեւնին ելլելով:  
Այդ յայտնումը փոխեց մեր կանխաւ  
գծած փլանը: Հետեւաբար որոշում մը  
տուինք: Ես խումբին վրայ պիտի յար-  
ձակէի, իսկ Արամ չէկ մարդը պինթափ  
պիտի ընէր, գործն ու զիս շփոթեցնելու  
համար: Անթիջապէս շարժման անցանք  
ու մայթը կտրելով անցանք դիմացի փո-  
ղոցը. մեր որոշումն էր վարի փողոցէն

խումբին առջևը կտրել վազելով: Բայց Արամին ոտքերը կը ցաւէին եւ ստիպուած կը բռնուէր կրկնայինք, ինչ որ ժամանակի կորուստ էր: Պահ մը շնչասպառ զիս կեցուց ու ըսաւ.

— Այ շեմ կրնար վազել... ոտքերս կը կոտորին... ուրիշ առիթի մը ձգենք: Մետեխի բանտէն ի վեր առաջին անգամն էր, որ կծու վիճարանութիւն մը ունեցանք: Հետացայ եւ գէպի ջարդարանները վաղեցի:

Հասայ Ուլյանաշթրասէ, ձեմալ Աղմիին տան անկիւնը. ուշ էր արդէն, անոնք անցած էին մեր նշանակած կէտը. վայրկեան մը եւս ու իրարմէ բաժնուած պիտի ըլլային. խումբը կանգ առած էր, բայց խօսակցութիւնը կը շարունակէին տակաւին: Չորս դիս անհարկ մը պարտացուցի. չէկ մարդը բաւական անդին էր եւ առջեւները կը նայէր, փոխանակ մեր կողմը՝ նայելու:

Սնվէյն ատրճանակը ձեռքիս՝ նետուեցայ. խումբին յետասպահ՝ Թալատթին կիներ զիս տեսաւ. ամբողջ կատարութեամբ խոյացայ եւ ձախ ձեռքով ճուռօ ձեռով ուժգին հարուած մը տուի Թալատթին կիներ, որ ճիշ մը արձակելով գետին ինկաւ: Այդ ճիշին վրայ ձեմալ Աղմիին ինծի դարձաւ: Այնքան մօտ էր, որ ատրճանակիս խողովակը գէպի աջ կողմ ուղղելով կրակեցի: Ծիւտողը տապալեցաւ: Խողովակը դարձուցի Պեհաէտին Եաթերին. մէկ ձեռքը գրպանն էր եւ լեզուն բռնուած էր. երբ ատրճանակիս խողովակը տեսաւ զահ, ահ, արձ, ըսաւ. — «Ա՛, ետ՛», գոչեցի եւ գնդակ մը տուի ճակտին. բայց գնդակը վրիպեցաւ եւ մտաւ ձախ այտը: Դեռ ոտքի էր. արդէն Արամը հասած էր եւ իր մտուղէր ատրճանակով գնդակ մը պարպեց ճիշի ճակտին ու գետին փոկեց զայն: Պեհաէտտին Եաթերը երկու գնդակ կերած էր, մէկը Արամէն եւ միւսը ինձմէ. եւ տապալեցաւ իր ընկերոջ՝ ձեմալ Աղմիի դիտակին վրայ, արտառոց խաչ մը ձեւացնելով:

Լուսազարդ փողոցին վրայ, գերմանացիներու բազմութիւնը, քարացած,

կարծեա անծանօթ ողիներու սարսափին տակ, խոր լուսութեամբ կը դիտէր աչքին առջեւ. պարզուած արտակարգ տեսարանը. իսկ հրէշներուն ընկերացող կիները, դետին պակաս էին բոլորն ալ: Միայն Բուհսի պէյ կը փորձէր ատրճանակը հասնել. նեաուեցայ վրան եւ ջանացի ձեռքը գրպանէն հանել. չէկ մարդէն վախ չուներէնք, քանի որ Արամ պաշտօն ունէր զայն զինաթափ ընելու: Բայց այն պահուն, երբ Բուհսի պէյ յաջողած էր մէկ ձեռքս բռնել եւ շատ դիւրութեամբ կըրնայի զայն մէկգի նետել, ահաւոր պարթիւն մը թնդացուց օդը: Արամն էր. մեր ուղղութեամբ երկու գնդակ պարպած էր: Յայտնի էր, որ աչքը դարձած էր: Գնդակները սուլելով անցան մեր դիտաներուն վրայէն: Օղին ճնշումէն երկուքս ալ գետին ինկանք, պէյը՝ կռնակիս վերայ. բարեբախտաբար նուազած էր, անշուշտ սարսափէն: Իսկ Սնվէյն ատրճանակս թուած էր ձեռքէս ու քանի մը քայլ անդին լոյսերուն տակ կը փայլէր: Կրակիս զարնուած էր սալախտակին եւ բերնիս մէջ արիւնի համ զգացի. արդե՞ք վերաւորուած եմ. չօւսափեցի մարմինս. ո՛չ մէկ ցաւի նշան:

Արամ տեսնելով, որ ատրճանակս անդին ինկած է, մօտեցաւ ինծի եւ խալաքարի աչքերով նայեցաւ: Աչքիս պոչով վեր նայեցայ. խիստ տխուր էր եւ լալը պակաս, վախնարով, որ զիս սպաննած է:

Անմիջապէս պէյը վրայէս նետեցի, մէկ ակնթարթի մէջ ոտքի ցաւակեցի եւ փախչելու ազդանշանը տուի, օրհնած բերանս ալ բանալով, քանի որ թաղմութիւնը սկսած էր շարժիլ մեր կողմը եւ վայրկեան մը անգամ պէտք չէ կորսնցնէինք:

Առկապուրկէր փողոցէն վաթ կը վազէինք, մինչ մեր ետեւէն պոռչաւորներն ու գոռում պոռչումները ծայր աուած էին.

— Բռնեցէ՛ք, բռնեցէ՛ք...

— So ասոնք ի՞նչ կը պոռան, — ըսաւ Արամ զայրացած այդ ժխորէն, ու սկսաւ աջ ու ձախ կրակել, փողոցին լոյսերը մարելու համար:

— Աւշարուժիւն, Արամ, — պո-  
նացի, — մարդ շապանուի... :

Գժբախտաբար յուզումին եւ անս-  
պօրանքին մէջ չէր յարողած լոյսերը  
մարել :

Փողոցին կէսը կարած էինք արդէն,  
կըբ համազգեստաւոր զինուորական մը  
ճամբան կտրեց ու հրամայեց կանդ առ-  
նել եւ սպառնաց սպաննել մեզ : Ատրճա-  
նակ չունէի, բայց կար բազուկս . առանց  
չարժելու ատեն ձգելու իրեն, ուժով մը  
քայի հրեցի եւ յաջողեցայ սպրդիլ : Ա-  
րամ տեսնելով, որ զինուորականը իր վը-  
րայ պիտի նետուի, ակնթարթի մը մէջ  
երկու գնդակ պարպեց անոր ոտքերուն  
ստոյն : Մարտը ճնշումէն զետին ինկաւ  
ու այդպէս ալ անլարժ մնաց՝ չեմ զի-  
տեր մինչեւ երբ... :

Երջակայքի տուներն ալ շարժման  
անցած էին եւ պատուհաններէն ալ դո-  
սում-գոշում փութած էր . զնդակի սոյլեր  
կը յսուէին . երեւի չէի մարգն էր, որ  
չատ ուշ մնացած էր բարեբախտաբար :  
Մեր անջնեւ ալ բազմութիւն մը ելած էր,  
ինչ որ մասամբ բարեբախտութիւն էր .  
անընդհատ բազմութեան կողմը կը վա-  
զէի, Արամը՝ ետեւէս . կրակոցը պիտի  
չհամարձակէր կրակել ամբոխին վրայ :  
Փողոցը անցած էինք եւ հետքերնիս կոր-  
սընցնելու նպատակով քովնտի փողոցը  
պիտի զարնէինք, երբ ուրիշ բազմութիւն  
մը մեր դէմ ելաւ, խուճապի մատնուած,  
սակայն յարձակողական ոչ մէկ շարժում  
տակաւին : Արամ մագըը դադրեցուց, չա-  
փազանց յոգնած էր եւ շունչը կը կըտ-  
րէր . յանկարծ պտտաց .

— Դու զնա՛, զնա՛, ալ չեմ կրնար  
վազել... դու զնա՛, զնա՛... :

Վայրկեան մը իրեն նայեցայ . կը  
հեւար, կարծես հրաժեշտ կ'առնէի եւ  
մագըս շարունակեցի Փարիսէր փողոցին  
ուղղութեամբ : Արամին այդ սխալ հար-  
ւածը մեր փախուստի ծրարէրը տակնու-  
վրայ բրած էր : Որոշած էինք ղէպքէն  
ետք Ուլանտէն ղէպի ձախ դառնալ, ուր  
փողոցը կարճ էր եւ ղիւրութեամբ կըր-  
նայինք մեր հետքը կորսնցնել : Մինչդեռ,

ստիպուած դարձած էինք ղէպի ալ, ուր  
փողոցը երկար էր եւ մեզ յոգնեցուց .  
հաշուի մէջ չկար առ, բայց սրբագրելու  
ատեն ալ չունէինք . պէտք էր ամէն զը-  
նով խոյս տալ ամբոխէն, ինչ որ ղիւրին  
չէր :

Երբ Արամէն բաժնուեցայ մտահո-  
գութեամբ, ան կեցած էր ատն մը դրան  
քով, շնչասպառ գրեթէ : Մեզ հետապնե-  
ղող բազմութիւնը կը հասնի իրեն եւ  
կարծելով, որ ան ալ դիս հալածողներէն  
է ու յոգնած, ատանց զայն հարցոյփոր-  
ձելու, ուղղակի ետեւէս կ'իյնայ՝ «բռնե-  
ցէ՛ք, բռնեցէ՛ք» պոռայով շարունակ :  
Պահ մը կանդ առի եւ զարմանալի է, ամ-  
բոխն ալ կանդ առաւ : Առջեւս զստուող  
բազմութեան շղթան ճեղքելու գաղափա-  
րը ունեցայ եւ արդէն ուրիշ ճար չկար :  
Եթէ միայն զնչքս քովս ըլլա՞ր... բայց  
ունէի մէջքիս փայլուն երկաթադաս զը-  
լուխով դօտիս : Բակեցի . խենթ կարած  
էի եւ յարձակելու պատրաստուեցայ :

Յանկարծ թաթ մը իջաւ ուխիս .  
մարդ մը խուճապին պատճառը կը հար-  
ցնէր. — «նի՞Ֆըլթէն» (չեմ ղիւրեր) պա-  
տասխանեցի : Մարդը աւելի ուժով սեղ-  
մեց ուս ու սպառնաց, մխայցայ, որ ոս-  
տիկան է եւ դող մը ունեցայ . բայց փա-  
րանումի ատեն չկար . անակնկալ ուժ-  
գին հարուած մը իջեցուցի մարդուն, որ  
տապալիեցաւ : Եւ կոշիկ դօտիովս խեղա-  
գարի նման նետուեցայ բազմութեան վը-  
րայ ու սկսայ աջ ու ձախ հարստաներ  
տեղացնել : Ոմանք կը փախչէին եւ ու-  
րիշներ բաներ մը կը պոռային, բառ մը,  
միակ բառ մը երբեմն, հաւանաբար զա-  
շոյն բառը ըլլար, քանի որ դօտիս եր-  
կաթէ ծայրը կը փայլէր լոյսերուն տակ :  
Այլեւս ես էի հալածողը : Մտայ Փարի-  
սէր փողոցը՝ հետքս կորսնցնելով : Կրո-  
նակս ամայութիւն էր եւ առջեւս դեռ  
բան չկար : Միայն անարկու ծխոք մը լի-  
ցուցած էր քաղաքը . ոստիկանական օ-  
թոներու եւ մօթօսիքիլթներու, ճշակնե-  
րու եւ սուլիշներու ձայներն էին :

Ազատած էի, դեռ վստահ չէի : Ա-  
մայի փողոցներէն տուն դառնալ վստա-  
ղաւոր էր, հասցա եթէ անհատ անցորդ-



Անսրեկուսմէն ետք, Պեհաւոտան Եախիթի եւ Ճեմալ Ազմիի դիակները, Պերլինի դիպակներու մէջ:

նե՞րը բռնեն, խորհեցայ: Ետտ հաւանաբար: Մէկ բան կը մնար ինձի.— Վերագառնայ բազմութեան մը, որ կը խուժէր զէպօքին վայրը: Գոտիս մէջքիս անցուցի եւ ծառի մը տակ նետեցի ատրճանակիս երկրորդ ժեշտը — մակազին, — որ աւելորդ էր այլեւս ու զբազանս մնացած: Վերագործայ Ուլանուլթրասէ, զէպօքին վայրը: Հետաքրքիր բազմութիւն մը շրջապատած էր զիակաները: Երրորդ մըն ալ դեռ պռակած կը մնար. ուշադրութեամբ նայեցայ եւ ներսէս խնդուք մը փրթաւ: Բուհտի պէյն էր, որ դեռ նուազած կը մնար եւ երեսին անընդհատ ջուր կը սրովէին՝ դայն սթափեցնելու համար: Ենէկ մարդը մէջտեղ չկար: Իսկ կիներէն ոմանք մարած էին եւ ոմանք ալ լացուկո՛ծ փրցնելով մազ կը փետտէին: Քրքուհուհի մը, որ ինձի անձածօթ էր, միսթարական շեշտով մը անընդհատ կը կրկնէր.

— Մի վախնաք, դեռ չեն մեռած...  
Դող մը անցաւ մարմնէս եւ կատկած մը արթնցուցին այդ բառերը: Քայլ մը եւս մօտեցայ եւ երկար-երկար նայեցայ դիակներուն: Անկարելի էր. թրքուհիին բաձը պարզ միսթարութենէն անդին չէր տնցներ: Հաղարուտը հայ անձեղներու գահիճները նողկալի սատակներու վերածուած էին:  
Ճեմալ Ազմի, Տրապիզոնի ճիւղ կուտակալը եւ Իթթիհատի առաջնակարգ ոճրածին ուղեղներէն, հայ երկսեռ երեսաները կողովներով ու սնտուկներով Սեւ ծով թափող դաղանը, եւ Պեհաւոտանի Եաքիթը, համալսարանի դասախօս, Իթթիհատի ամենալոյս դեկավարներէն, որուն մտաւորականի ամբողջ եւ միակ դաղափարականը Լիւալ բնաջնջել Արեւելեան նահանգներու բոլոր հայութիւնը, մասնակցութեամբ թուրք կառավարական անդամներուն, թուրք տարտուտ

և զազանացած ժողովուրդին ու տեղական ցեղախումբերուն :

Երկուքն ալ նոր ոճերներ կը յղանային, արդարադատութեան սրբազան Հարաւածին տակ Հիմա փռուած էին եւրոպական քաղաքի մը սայալատակին վրայ, իրենց արիւնովը պզծելով զայն : Եւ աւարով ու կողոպուտով դիզած Հարստութիւնները կը ձգէին լաւան կիներու, որոնք Հիմա ողբ ու կոծ կ'արձակէին, երբ այնքան անզգամ ու քար կտրած էին Հայ Հազարաւոր կին ու երեխաներու լաց ու սղբերուն առջեւ : Եւ կը ճշային, Հակած՝ սատակներու արիւնաներկ ճակատներուն վերել : Իսկ այդ ճակատներուն ետին ուղեղները այլեւս չէին գործեր եւ նոր ոճերներ ու նոր ժեթոտներ պիտի չկարենային յղանալ, Հայութեան ամբողջական ընայնջման համար :

Յաւիտենական զերի նկատուած Հայը զրկած էր իր գաւազները, որոնք արժանի պատիժը տուած էին այդ արիւնհարու զազաններուն :

Երկու զիսկներուն առջեւ այս խորհրդածութիւններով տարուած էի, երբ կին մը յանկարծ վիզս պլուեցաւ ու գոչեց .

— Քեմա՛լ, պապանքն հալի՞նէ պագ (Քեմալ, Հօրդ վիճակին նայէ) :

Երիտասարդ կին մըն էր, որ զիս նըմանցուցած էր Ալմիին տղուն : Նախ վարացայ, կարծելով, որ զիս ճանչցած է ու Հիմա պիտի պոռայ, թէ տս է սպաննիչը : Բայց «Քեմալ» անունը լսելով՝ պարարունս դտայ եւ գերմաներէնով ըսի .

— վա՞ս իս տաս ֆրոյլայն... (Ի՞նչ է այս, օրիորդ) :

Կինը ներողութիւն խնդրեց եւ քաշուեցաւ :

Ոստիկանութիւնը Հասած էր դէպքին վայրը եւ խիստ վտանգաւոր էր մնալ այլեւս : Ո՞ր կողմէն եւ ինչպէ՞ս : Ոստիկանները պաշարման օղակ մը կազմած էին եւ առանձին մարդիկ կասկածելի կը գտնէին : Անհամբեր էի հեռանալու : Հասա՞ պա՞ եթէ յանկարծ չէր Սաք զար Ֆրի-

ցին հետ : Աչքիս առջեւ երկու հոգի կառք մը դրին ու տարին, բնականաբար Հարստութեան համար : Շուրջս ուշադրութեամբ նայեցայ՝ ճար մը փնտռելով : Այր ու կին մը դիտեցին ու հեռանալու վրայ էին, երբ մօտեցայ աղջիկներէն մէկուն եւ գերմաներէնով Հարցուցի .

— Ձերայն, վե՛ր վայս էս իսք (օրիորդ, ի՞նչ պատահած է) :

Աղջիկը պատասխանեց եւ դէպքին վայրը լսած բաները Հազարդեց ինծի :

Կարեւորը խօսքի բռնուիլն էր. անոնց ընկերացայ իրեւ գերմանացի ընտանիքի մը ինքնակոչ անդամ մը եւ անցայ ոստիկանութեան շրջայէն : Ո՞ր ոստիկանը կրնար կասկածիլ վրաս . Հայրիկիս, մայրիկիս եւ քոյրերուս հետ տուն կ'երթայի վերջապէս . նոյնիսկ մայիթը իջնելու առնէ մէկ աղջկան թեւը բռնեցի, մտերմի կամ եղբոր պէս անոր օգնելու համար : Մումբը հասաւ Ղուրթիւթեանամ . բաժնուեցայ ընտանիքէն եւ ինքնաշարժ մը առնելով՝ զացի դէպի Լայքցիկէր ճւայ, անկէ ալ ուրիշ ինքնաշարժով մը Հասայ կենդանաբանական պարտէզին կողմը, որ շատ մօտիկ էր մէր տան :

Ուլանալթրասէէն Հեռանալէս ետք՝ աստիկ անձրեւ մը տեղաց, այնպէս որ՝ ժողովուրդը կը վազվզէր վայրկեան առաջ ապաստան մը կամ տուն մը հասնելու համար : Առանց թրջուելու տուն Հասայ եւ կամացուկ մը դուռը բանալով ստգիս ծայրերուն վրայ սենեակ մտայ : Կերակուրս Հոն դրուած էր . յայտնի էր, որ ժամը Ղէն ի վեր ոչ ոք սենեակս մընաւած էր, այլապէս կը վերցնէին կերակուրս : Ի Հարկին կրնայի ըսել, թէ ամբողջ գիշերը տունն էի : Ախորժակ չունէի, բայց մէկ մասը դժուարութեամբ կերայ, միւս մասն ալ թափեցի եւ պնակները մէկ կողմ դնելով, Հանուեցայ ու անկողին մտայ, քանի մը դիրք ասդին-անդին ցրուելէ ետք : Անդրադարձայ, որ ատրճանակս մաքրելու փոքր վրձինը եւ վազիլիին սրուակը սենեակիս մէկ անկիւնն են : Վրձինը պատուհանէն Հեռու շարտեցի եւ վազիլիին ալ լուացարան թափեցի :

Տան մէջ խոր լուսթիւն կը տիրէր։  
 Լոյսը մարեցի եւ անկողին մտայ «օխ»  
 մը քաշելով եւ ինքզինքս թեթեւցած դը-  
 տայ։ Սրտհատեմունքերու, յոգնութիւն-  
 ներու, վազվզուքներու եւ շարաշար աշ-  
 խատունքներու վարձքս ստացած էի, ինչ-  
 պէս եւ հոգեկան խորունկ գոհունակու-  
 թիւն մը, որ այդ պահուն կը բաժնէին  
 հազարաւոր արեւնակիցներս։ Նահատակ-  
 ներու վրէժը լուծուած էր։

Միակ մտահոգութիւնս Արամն էր։  
 Ի՞նչ կզաւ տրտեօք. եթէ ազատած է,  
 ինչպէ՞ս. եթէ բռնուած է՝ շատ զէչ նահւ-  
 ինծի համար։ Երանի թէ Հեր Սաքին ծա-  
 նօթացած չլլար եւ գերձակին ալ գացած  
 չլլար։ Ձերբակալուելու պարագային,  
 նոյնիսկ Հեր Սաք, առանց այլեւայլի գիտ  
 ալ պիտի ձերբակալէր, դիտնալով որ ի-

րարու ծանօթ ենք եւ հարցուփորձի պիտի  
 ենթարկէր։

Ուրիշ մտահոգիչ մտածում մըն ալ  
 ունեցայ։ Հապա՞ եթէ Հեր Սաք սենեակս  
 եկած եւ ստուգած է, որ հոն չեմ. հա-  
 տանական չէ՞, որ գիտմամբ կերակուրս  
 չէ վերցուցած, որպէ՞սզի գիտ հակասու-  
 թեան մէջ բռնէ։ Ի՞նչ պիտի պատահա-  
 նէի, եթէ զար եւ հարցնէր, թէ ես ո՛ւր  
 էի։ Այս մտմտուքը պիտի շունենայի, ե-  
 թէ Արամ Հեր Սաքին հետ ծանօթացած  
 չլլար, կամ երկրորդ անգամ մեզի մօ-  
 տեցած չլլար։

Անկողնիս մէջ, այս մտահոգութիւն-  
 ներով թէեւ կը տանջուէի, բայց բան մը  
 կար, որ աւելի քան ստոյգ էր եւ միակ  
 մխիթարութիւնս էր։ Մահալճիոք զոր-  
 ծադրուած էր. ո՛յս էր կարեւորը։

«Կտակն էր Նահառակներուն»

ԱՐՇԱԽԻՐ ՇԻՐԱԿԵԱՆ

#### Կ. Ս Ա Ս Ո Ւ Ն Ի

## ԱՐՇԱԻԻՐ ՇԻՐԱԿԵԱՆ

«Կտակն էր նահատակներուն» գիրքին հեղինակը եւ արտակարգ իրական վեպին հերոսը մոյմ մարդն է, — Արշաիր Շիրակեան:

Բացառիկ տեղ մը կը գրաւէ պատմահասոյդ այս բազուկը Հ. Յ. Դաշնակցութեան արդարադատ ահաբեկիչներու շարքին:

Արտակարգ, բայց ամբողջովին իրական եւ վաւերական են այն բոլոր արարքները, որոնք կը տողանցեն Շիրակեանի այս յուշագրութեան մէջ, վրեժնական եւ զգեստնոյ հարուածներ, որոնք սփռուածն ու մոխրարութիւնը կը մնան մէկ միլիոն մահատակներու սուգն ապրող հայ ժողովուրդին:

Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան մէջ սահաբեկիչը արդարադատ բազուկ մըն էր, ամենաւրաց եւ սրբազան ուխտով մը իր կեանքը դրած դատավճիռ նժարին մէջ:

Արշաիր Շիրակեանը այդ նախնականներէն մէկն էր, աշխատի՝ իր արարքներով, ուշագրաւ՝ իր տաղանդով եւ հնարքներով:

Այս բացառիկ սահաբեկիչը արտակարգ արթնամտութիւն, քաջութիւն, անկրկնելի վճռակամութիւն շնորհ իր հարուածողական արարքներուն ընթացքին, ինչ որ ինքնաշարժակ նկարագիր մը կու տան իրեն:

Այս վկայութիւնը կ'արձանագրեմ հաս, յայտնելով միաժամանակ, թէ Արշաիրի մանկութիւնը մեծցաւ իմ աչներու տոջն, պատանեկութիւնը գարգացաւ Համաշխարհային Առաջին պատերազմի դաժան պայմաններուն մէջ:

Մանկութենէն մինչեւ պատանեկութիւնը, մեր ամէնօրեայ հանդիպումներուն, — որովհետեւ նոյն տունը կը բնակէինք, — լուր ու խոստովանակ այս տղեկին աչներուն մէջ մտածում եւ հնարամտութիւն կը տեսնէի: Լուրջ ու պաղարիւն երիտասարդի մը տպաւորութիւնը կ'առնէիք այս տասնամեայ աշակերտէն, որ իր փոքրիկ մարմնով աննշմար կը մտար եւ սակայն քաղի պատանեկներուն վարիչն էր, հնարամիտ առաջնորդը եւ արարքին առաջին շեղակատարը:

Համաշխարհային Առաջին պատերազմի դաժան տարիներուն կազմաւորուեցաւ Արշաիրի պատանեկութիւնը, ու երբ պատերազմը վերջացաւ, ան



արդէն քրժուած երկասարդ մըն էր իր նկարագրով, միշտ մնալով փռփրիկ պատանի մը, որ ուշադրութենէ կը վրիպէր, բայց ամէն տեղ կը մտնէր ու կ'ելլէր, խորհրդաւոր բան մը որոնողի պէս:

Անա այդ օրերուն փորձուեցաւ այս տղան, որ պատրաստակամ էր կրակի մէջ նետուելու, հայոց անսահման արեան վրէժը լուծելու համար: Ու առաջին արարքին իսկ, այդ գործին իրական նկարագիրը ի յայտ բերաւ:

Հարուածէն կ'իյնար դաւաճանը, ու գործին պատասխանատուները ամէն կողմ Արշաւիրը կը փնտռէին, որ չկար: Ու երբ եկաւ գեկուցելու, իրմէ հարցուեցաւ, թէ ո՞ր կը գտնուէր մինչեւ հիմա: Արշաւիրին պաղարիւն պատասխանը կ'ըլլար.

— Ոստիկաններու եւ ժողովուրդին հետ կը փնտռէի՞մ հարուածին հեղինակը:

Ահաբեկիչի իսկական տիպարը գտնուած էր:

Տուցամուտքեմէ հետո, գաղտնապահ, պաղարիւն ու սնտարքեր անցորդ մըն էր բազմութեան մէջ եւ սակայն ամէն բան կը նշմարէր, արարքի մը հնարաւորութիւնը կը չափէր եւ վճռական նախաձեռնութեամբ, գործին մէջ կը նետուէր:

Այդպէս մնաց մինչեւ վերջը:

1920ին, օր մը կը մտնէր Շիրակի նահանգապետարանը՝ զարմանքի մատնելով զիս.

— Եկայ Հայաստանը տեսնելու:

Բնական է, ըմբռնեցի, թէ Հայաստան պտուտելու համար եկած չէր Արշաւիրը:

Ոչ ոքի ուշադրութիւնը զրուող այս անցորդը երեւանէն թիփլիս, թիփլիսէն Բագրու ճամբորդեց Ապրիլեան Եղեռնի դահիճները փնտռելու համար:

Յեղաշրջումները պատճառ դարձան, որ վերադառնայ Պոլիս եւ Անտաի այն մեծ արարքներուն մէջ, որոնք տեղի ունեցան Հոռովի եւ Պերլինի փողոցներուն մէջ:

Արդարագաստ բազուկը իր դերը կը կատարէր շրջանայ հարուածներով ու այդ բոլոր գործերուն մէջ առաւել չափով ի յայտ կու գար քաջ ու հնարամիտ ահաբեկիչի նկարագիրը, նախաձեռնող ու վճռական մարդը, պաղարիւն եւ աշաւարջ պատերազմիկը, որ միմակ էր վտանգներուն դիմաց ու ինք իր նախաձեռնութեամբ պիտի կարենար ազատիլ վտանգէն:

Արշաւիրի կատարած բոլոր գործերուն մէջ մեր մտնանշած յատկութիւնները աւելի չափով արձանագրուեցան իր հաշույն ու ինք դարձաւ հայ ժողովուրդին իր տարբեր սուսնայ երախտաւորը ու դասուեցաւ Սողոմոն Թեմալիւրեանի կողքին:

Քառասուն տարիներ ետք. կրնանք վկայել, թէ պարզ կեանքի ասպարէզին մէջ իսկ Արշաւիր եղաւ նախաձեռնող, հնարամիտ եւ իր նախաձեռնութիւնները յաջողութեամբ պատկուեցան:

Այսօր, սովորական կեանքին մէջ, Արշաւիր կողք կողքի կը քայլ անտարբեր ահաբեկիչի հետ, որ քանակաւ եղբայր մըն է կարծես, իրմէ անբաժան, որուն ներկայութիւնը իր սիրտը կը լեցնէ հպարտութեամբ:

Եւ իրաւունք ունի, խղճի սրբազան պարտէ մը կատարողի գահաւանդութեամբ:

Կ. ՍԱՍՈՒՆԻ

Ա Ր Ս Է Ն Ե Ր Կ Ա Թ

## Վ Ր Ի Ժ Ա Ռ Ո Ւ Ն



Փոթորկայոյց ծովի նրման էր հոգիս,  
Ո՛չ մէկ աստուած խաղաղութիւն կը բերէր  
Կահակներուն, որոնց դէմ  
Կը փշրուէր խարխուղ մառակը յոյսին:  
Շրջապատած էին զիս  
Գիշերական խաւարէն ծընունդ առած տեսիլներ,  
Մառնչին մէջ ալիքներուն փրփրադէզ  
Կը լսէի հեծեծանքներ որբերու-  
Եւ ափունքէն հեռաւոր  
Ձայներ, ձայներ կը կանչէին զիս անվերջ:

Ահեղ պայքար սրտիս մէջ կը վառէր  
Փրկութեան յոյսը հրդեղէն մոլուցեով,  
Աղկիռներն օձերու պէս պարուրած  
էին ձեռքերս, որոնց աղօթքը հիմա  
Արիւնաբորբ վարձերու պսակ մըն է մահաբոյր...

Եւ օգնութեան չէի կանչեր պապերուս  
Աստուածն անգոր, խաչուած Աստուածը տժգոյն,  
Դժոխքի աստուած մը միայն  
Պիտի փրկէր զիս, պիտի տար աչքերուս  
Ահեղ վայելքն արիւնին...

Երբ արշալոյսն իր բրնձմները թափեց  
Խարակներուն վրայ մռայլ,  
Հասած էի նոր հանգրուան մը պայծառ,  
Ուր գլխատուած անթիւ այրեր կու գային  
Բուրվառելու հին խորանի մը առջեւ...

Հոն բարձրացայ լերան մը կողմ եւ իջայ  
Գետի մ'եզերքն, ուր սպիտակ տեսիլքով  
Մայրքս ինծի կը սպասէր.  
Աստեղահեւ ուրու մ'էր ան, զիս առաւ  
Բազուկներուն մէջ, օրհնեց...



Կը փալէի առանց խոնջէնք գգալու...

Հասայ ոստան մը բազմամբոյս.  
 Հըրէշ մը գիտ կը հալածէր մղձաւանջով անվախեան.  
 Կը տեսնէի գայն բարձրացած պատուանդանի մը վրայ  
 Արիւնախոս դիակներու.  
 Կը լսէի ծիծաղն անոր ամէնուրեք,  
 Բայց մօտեցայ իրեն ահեղ նպատակին  
 Սեղմած ցառումը սրտիս դէմ  
 Եւ հըրեղէն փայլատակում մը շլացուց  
 Հըրէշին աչքերը, պայթեցաւ  
 Գանկը, որուն սեւ արիւնէ կուպրը մայրիկն  
 Աւելի սեւ ու մթագին կը թանձրանար...

Երբ որ վրէժի գեհեճակաւ անդունդին մէջ  
 Տապալեցաւ եղեռնագործը գագրելի,  
 Խաղաղեցաւ մըրկայոյզ ծովն իմ հոգւոյս...

ԱՐՄԷՆ ԵՐԿԱԹ

digitised by A.R.A.R.@

Բ. Փ Ա Փ Ա Ջ Ե Ա Ն

### ԿՏԱԿՆ ԼՐ ԱՐՇԱԻԻՐԻՆ

Հերոսներու պաշտամունքը յատուկ է բոլոր պատանհաններուն: Հերոսականը կը խանդավառ պատանհաններու միտքն ու հոգին, կու տայ թախչի, կուտայ ա՛յն համազումը, թէ կեանքի գծուարութիւններն ու անարդարութիւնները յազօթանարեւու համար կը բաւէ հերոս ըլլալ. կու տայ մահաւանդ ա՛յն միջիթարանքը, թէ կան հերոսներ, որոնք ի վիճակի են անարդարութեանց արատը սրբելու, մինչեւ անգամ երբ ամէնքը չեն, որ կրնան հերոսանալ:

Պատանհանութեան տարիներուն մեան խանդավառութեամբ ու ուրախուող կարգացած էի անունները թեկիւրեանի, Շիրակեանի եւ Հ. Յ. Գաշմակցութեան արդարագոյն վճռի այլ գործադրողներու, որոնք մի առ մի կը պատժէին մեծագոյն ռեպրտիները եւ կարելիութիւնը կ'ընծայէին հայուն հպարտութեամբ նայելու աշխարհի աչքերուն:

Հետագային, երբ պատանհանութիւնը բաւական մը ետեւ կը մնար արդէն, գիտնալով հանդերձ, թէ բոլոր մարդոց պէս մարդիկ պիտի ըլլային անոնք եւս, եթէ հանդիպելու ըլլայի անոնց, տարբեր մարդոց հանդիպելու սպասումը ունէի, երբ 1960 Ապրիլին Հիւսիսային Ամերիկա ոտք կը կռնէի, Հ. Յ. Գաշմակցութեան կեդրոնական կամիտէի քարտէրին ընդառաջելով, իրքեւ գարծիչ աշխատելու համար հոն, տարի մը ամբողջ: Գիտէի, թէ այնտեղ էին Սողոմոն թեկիւրեանը, Արշալիր Շիրակեանը, Միսաէ Թորլաքեանը: Ճիւղանշիր, Պլեհեւտին Ծափը, Ճեմալ Ազմի, Թալաթ, Սայիտ Հալիմ անլի ծանօթ անուններ էին հիմա, արարքին տարողութիւնը — անոնց, ռեպրտիներուն արարքին տարողութիւնը — հիմա անլի լայն սահմաններով ծանօթ էր ինձի. ու տարբեր հաւեմատութիւններ կ'առնէր արդէն Հ. Յ. Գաշմակցութեան դատարանի վնիդը, ու գայն գործադրողներուն արժէքը տարբեր, հերոսականներ տարբեր արժէք մը կը ստանար արդէն իմ աչքին, անլի կարեւոր, քան հերոսականը: Հերոսապաշտութիւնը չէր հիմա, որ կը մզէր զիս մօտէն տեսնելու թեկիւրեան մը, գոր չկրցայ տեսնել, քանի որ Ամերիկա հասնելու ատեն մը ետք կորսնցուցինք զինք. Արշալիր Շիրակեան մը, Թորլաքեան մը. այլ, անլի մարդկային, միաժամանակ անլի հիմնական գծերու փնտառում մը կար. գծեր, որոնք պիտի ամբողջացնէին տիպարը հայ յեղափոխական, նուիրեալ մարդուն:

Հակառակ գիտակցական մտեցումին սակայն, պատանհանութենէն եկող ու ներսը յամեցող ապրում մը կը շարունակէր մզել զիս համարուելու ձեռքը թեկիւրեանի, եթէ հանդիպէի իրեն, Արշալիրին՝ երբ եւ ո՛ր պ հանդիպէի իրեն առաջին անգամ: Թեկիւրեանը չհանչեցայ: Արշալիր Շիրակեանին հանդիպեցայ Նիւ Եորքի նաւահանգիստին մէջ:

Շոգեմուր կանգ առած էր Նիւ Եորքի քարափներէն մէկուն կտած, իջած էի անծանօթ քաղաքին նաւահանգիստը եւ կը յուսայի, թէ մէկը պիտի գտնուէր առաջերդիւու համար նորեկ գարծիչը, քանի որ առաջին անգամ

Արշաիր Շիրակեան  
ծաղկեփունջ կը դնէ  
միւս հերոսին՝  
Աբամ Երկամեանի  
անկման փոյ,  
Քորտուպայի մէջ  
(Արժանքին):



էր, որ ռոտ կը կոխէի Ամերիկա, այն ալ ծովու համրով ժամանելով: Ծանօթ չէմք չտեսնայ: «Բան մը կ'ըմենք», մտածեցի ու մահատան գործողութիւններն էր պայուսակը գոցելու համար ծռած էի վրան, երբ քիչ մը հեռուն կանգնած, ուշադրութեամբ իմ կողմս նայող փոքրամարմին մէկը տեսայ: Արշաիր Շիրակեան բարձրահասակ չէր անշուշտ, սակայն փոքրահասակ ալ չէր, փոքրամարմին էր սակայն, մարմնով փոքր կը թուէր իրեն բոլոր հանդիպողներուն, պատանի մը, երիտասարդութեան նոր մտած պատանի երիտասարդ մը թերեւս, ոչ անիկ: Մեր նայումսները իրարու հանդիպեցան: Երկուստեք փնտտուով մը կար արտայայտութեան մէջ, որով ընական էր, որ զբուժեինք զիրար: Մտեցայ:

- Բժիշկ Բ. Փափագեանը դա՞ւք էք, — հարցուց:
- Այո, — ըսի:
- Արշաիր Շիրակեան, — ըսաւ ու ձեռքը երկարեց:

Համարութեցի ձեռքը: Ժպտեցայ: Ետ քաշեց ձեռքը, պայուսակս առաւ, ելանք զուրս մահատունէն:

Եղայ իրենց ազուր տունը, ծռոնքով, ծառաստաններով շրջապատւած վիլլան: Կաղաղութիւն էր ամէն կողմ. սխալելի, հագեցաբար խաղաղութիւն մը: Կաղաղ չէր միայն ինքը, Արշաիրը: Մշտապէս եռացող հոգեկան աշխարհ մըն էր ինք: Հետագային անիկ յօտէն հանցնայու, անիկ իր կար ատեն միասին ըլլալու առիթներ ունեցայ ու միշտ, տեսալէս ան մնաց ներքնապէս փոքրեկամ Արշաիր Շիրակեանը:

1968 Մայիս 28ին, անկախութեան յանձնարարական առիթով, իրարու հանդիպեցանք Պուէնոս Այրեսի մէջ, երկուսն ալ կեդրոնական կոմիտէի կազմէ հրաւիրուած անկախութեան յանձնարարական տոնակատարութեանց առթիւ: Միասին եզանք գրեթէ ամենուրեք՝ Արժանքինի մայրաքաղաքը, ապա՝ Քորտուպայի մէջ, Ուրուկուէյի մայրաքաղաքը Մոնթեօրէտէյի եւ ապա Պրագիլիոյ հայաշատ Սան Փաւլոյի մէջ: Մայիս 28ի հանդիսութեանց, դպրոցական հաստատութեանց կամ պետական անձնատարութեանց տրուած այցելութիւններուն ընթացքին: Եզանք առանձնութեան մէջ, եզանք կուսակցական հուաբոյսներուն, եզանք օդանավ նամարդութեան ընթացքին կամ պանդոկի սպասման սրահներուն մէջ: Միշտ, ամենուր, Արշաիրը եռանդով լի, զեհարութեան սլաքաստակով ու նաեւ համեստ անձնատարութիւն մըն էր, որ կը կարմրէր, երբ իբրեւ «ազգային հերոս» կը ներկայացուէր կամ երբ, ընկերաբար, կա-

սակով ձեռք կ'առնէի զինք՝ «առաջ դուն պիտի անցնիս, հերոսը դուն ես» ըսելով:

— Ի՞նչ հերոս, Աստուած սիրես. անհամգիստ կը զգամ, երբ ամէն վայրկեան հերոս ըսելով կը մերկայացնեն զիս: Դեմքս ու մարմնս ալ հերոսական արտաքին չունին որ... ստիպուած կ'ըլլամ ինքզինքս քիչ մը ուռեցընել, որ շատ չհիասթափուին:

Հոնտոր մը չէր անշուշտ, բեմէն արտայայտուելու դերուքին ալ չունէր, հարկադրուած էր սակայն իր խօսքը ըսելու ու վախով բեմ կը բարձրացար, վախով վար կ'իջնէր:

— Ինչպէ՞ս էր, շատ գէշ չէ՞ր, — կը հարցնէր մեղմութեամբ:

— Ձե, — կ'ըսէի, — գէշ չէր: Եւ յետոյ, Արշալիր, դուն ինչո՞ւ կը մտածեցայ խօսածիդ ձգած տպաւորութեամբ: Այս ժողովուրդը բռն մէջ կը տեսնէ այն միւսը, եիմնականը, արդարութեան վնասին գործադրողը, Դաշնակցութեան կամքը մարմնացնողը: Մի ճտանագուծիր մնացեալով:

— Բայց խօսածս ալ շատ գէշ չէր, չէ՞, — կը կրկնէր. — մէկ երկու փամփուշտ պահած եմ, երբ բեմ ելլելու ստիպուիմ, անոնք կը կրակեմ, կը լմնայ. — կ'ըսէր ժպտելով:

Իր ըսելիքներն ալ փամփուշտի կրակոցներու կը մտնէին իրեն համար եւ իր ամբողջ գործելակերպը արագահարուած հրազենի մը արձակումին կը մտնէր:

Ազուար էր տեսնել, թէ այդ բոլորը զինք չէին գիտնուցուած ու խորունկ պատկառանք մը ունէր Հ. Յ. Դաշնակցութեան վերաբերմամբ, որուն պաշտամունքը կը կատարէր իր ներքին աշխարհին մէջ, գրեթէ ամէն օր, ամէն առիթով:

Հ. Յ. Դաշնակցութիւնը իրեն համար պարզ կուսակցութիւն մը չէր, պարզ կազմակերպութիւն մը չէր. անկա ժողովուրդի վնասկան *կամքն էր*, ու այդ կամքին դիմաց պէտք է ծառուէին բոլոր հետքը բոլոր անոնց, որոնք կուսակցութեան ծառայելու երդումը կատարած էին: Իրեն համար տարբեր մտեցում գոյութիւն չունէր: Անգիջող չէր, ըմբռնող էր, ներող էր, սակայն երբ հարցը հասցնելու ըլլային հո՛ն, ուր կուսակցութեան դիմաց անմեակամ հետք պիտի ցցուէին, Արշալիր Շիրակեան չլլար այդ պարագային, նմաներուն հետ չէր կրնար ըլլալ, կը սարսափէր նման մտածումէ:

Հ. Յ. Դաշնակցութիւնը իրմէ վեր, Սողոմոններէն վեր, բոլորէն վեր տառանդ բան մըն էր, որբութիւն մըն էր, որուն մերձեցաւու համար անհրաժեշտ էր սեփական բոլոր պահանջները մէկդի դնել, եսը ծալել ամբողջովին:

Այդպէս եկաւ ան Դաշնակցութեան գիրկը, գործեց այդ համոզումներէն մեկնելով, դարձաւ Դաշնակցութեան կամքին գործադրողը, որոշ պարագաներու՝ գայն մարմնաւորողը: Ապա վերագտաւ իր պարզ շարքային կուսակցականի նուիրումի ու ամբողջական գոհաբերութեան կարողութիւնը, մնացեալ կեանքը նուիրելով իր կազմակերպութեան, իր ընկերներուն, առանց խնայելու, առանց սակարկելու:

Գիքք մը գրեց, իբրեւ կտակ նահատակներու, ուր նկարագրած է իր կեանքի ամենափոքորկալից շրջանները, ու գայն կարելի է կարգալ իբրեւ կտակը Արշալիր Շիրակեանի:

Իր կեանքը ամբողջ կտակ մըն է, կտակ մը հաւատարմութեան, նուիրումի եւ գոհաբերութեան:

Բ. ՓԱՓԱՋԵԱՆ

# ԱՐԾԱԽԻՐ ԾԻՐԱԿԵԱՆ ԹՈՒՐՔԵՐԸ ԱՅԱԲԵԿԵՑ՝ ՀԱՅՈՑ ՎՐԵԺԸ ԼՈՒԾԵԼՈՒ Հ Ա Մ Ա Ր



— ...Եթե անասուններիք տարու էր ան. դեմք մը, որ մեծ դեր կատարած է Հայ ժողովուրդի պատմութեան մէջ, կէս դար առաջ: Իր անունը ծանօթ է աշխարհի բոլոր հայերուն:

Մենաւ Հինգաբլի օր, Ինկլիվուտի հիւանդանոցին մէջ: Մեծ էր Պոլիս, 1900ին, ու 15 տարեկան էր, երբ թուրք կառավարութեան կողմէ կատարուած 1915ի ջարդերուն ծօռ երկու միլիոն հայեր զոհ գացին:

1920ի սկիզբը, երբ զու Նիւրէնպէր-կի անունն իսկ գոյութիւն չունէր, Հայ Հայրենասէր դեկավարներու խումբ մը իր սեփական պատերազմական ատենար կողմէ կոստանդնուպոլսոյ մէջ (այժմ Իսթամպուլ) և ի քաղաքայութեան մահաւան դատապարտեց այն թուրք ղեկավարները, որոնք պատասխանատու էին հայոց վրայ պարծաղրուած ցեղասպանութեան համար: Պ. Երեւանի ան այդ օրերուն քսան տարեկան էր: Իրեն յանձնըւեցաւ վճիռները գործադրելու պարտականութիւնը:

Իր առաջին փորձը կատարեց 1920ին, Պոլսոյ մէջ ահաբեկելով թուրք զաղտնի ոստիկանութեան գործակից Հայ լրտես մը՝ Վահէ Իհսանը:

Յաջորդ նշանակէտը եղաւ Սայիտ Հայրէմ փաշան, թուրքիոյ նախկին վարչապետներէն, որ իրրեւ աքսորական կ'ապրէր Մալթա և պահանջեցաւ Երեւանի կողմէ Հոսով մէջ, այցելութեան մը ընթացքին, Ինկուտեմբեր 5, 1921ին:

Պերլինի մէջ, 17 Ապրիլ 1922ին, Ա.

Երեւանի ահաբեկեց Պէհաչտոն Եաքիբը, որ կազմակերպին ու ծրագրողն էր «Թուրքիան» Թուրքիային գաղափարին և ձևմալ Աղմի փաշան՝ նախկին կառավարիչը Տրապիզոնի, ուր նոյնպէս ջարդեր տեղի ունեցած էին:

Ա. Երեւանի իր առաջնութիւնը լրացնելէ ետք, քաշուած էր: Սակայն իր անունը կը շարունակէ մնալ Հայ ժողովուրդի համար խորհրդանիշ մը վրէժի, յանուն իրենց ջարդուած հայրենակիցներուն:

Միացեալ Նահանգներ եկաւ 1923ին, ապրեցաւ Նիւ Իորքի մէջ և արեւելեան դորգերու յատուկ առեւտրական ձեռնարկի մը լծուեցաւ Լոնկ Այլրնտի մէջ: Ատեն մը ընտանեօք ապրեցաւ Թինէք, ապա Լիոնա:

Կը վերապրին իր այրին՝ տիկին Գայանէ Երեւան-Ղաղարեան, աղջիկը՝ տիկին Ճրետրիկ Բ. Պլաքուէլ (Կէյթըսպըր, Մերիլինտ), որ նախկին Սոնա Երեւանին է և եղած է լրագրող ու նախկին շրջանային խմբագիր «Տը Բեքըրտ»ի, 1950ին:

«ՏԸ ԲԵՔՐՏ»

Պ . Ս Ն Ա Պ Ե Ա Ն

# Ա Տ Ր Ճ Ա Ն Ա Կ Ը . . .

10 ՆՈՅՆՄԱՐԵՐ 1972:

Նիւ Եորքի եւ Նիւ Ճըրզիի Մը-  
չակութային Միութիւնները Նիւ  
Ճըրզիի Ս. Վարդան եկեղեցւոյ  
ներքնատրահին մէջ ի միասին կազ-  
մակերպած էին զբազան Հայաս-  
տանի եւ Մփիւռքի գրականութեան  
երիտասարդ տարբերուն կատարած  
նորագոյն փորձերուն մասին եւ գը-  
րոյցը պիտի վարէի ինքս: Հասանք  
նշանակուած ժամուն: Մուտքին՝

— Ահա՛ փնտռած սնձղ, — ը-  
սաւ ընկերներէս մէկը աղմկարար  
ուրախութեամբ մը, — Արշաւիր  
Շիրահեան:

«Հոգիս ձեռքերուս մէջ» ամբո-  
րէն սեղմեցի ամենօրհնեալ իր ձեռ-  
քը եւ քանի մը բառով յայտնեցի  
հիացումս հրաշագործ իր անձին  
հանդէպ: Ձինք տեսած ըլլալու  
բախտիս վրայ աւելցուցի ինքնասի-  
րութիւնս շոյող ուրիշ ուրախու-  
թիւն մը: Յիշեց իր մատնանին մա-  
սին ստորագրած յօդուածս եւ «Ա-  
հաբեկչական օրհնութիւն» խորա-  
գրեալ ուրիշ գրութիւն մը ինձմէ:  
Յիշեց նոյնպէս մեր փոխանակած  
սակուածքի նամակներուն բովան-

դակած կարգ մը կէտերը: Մեր ա-  
հարեկիչներուն հանդէպ ունեցած  
երկիւզած պաշտամունքս հաճոյք  
կը պատճառէր իրեն:

— Հանդիպեցայ՝ բարեւ մը  
տալու համար, — ըսաւ նուազ  
ձայնով մը, — ինքզինքս քեզ մը  
անհանգիստ կը զգամ: Պիտի մեկ-  
նիմ անմիջապէս: Կերակի օր, հան-  
դիսութեան ընթացքին կը հանդի-  
պինք:

12 ՆՈՅՆՄԱՐԵՐ 1972:

Նիւ Եորք: Յորեւան՝ Արամ  
Հայկազի: Եուրջ եօթը հարիւր հո-  
դի խոնուած են Սթէյթլըր Հիլթըն  
պանդոկի սրահը, որուն բեմին  
ի պաշտօնէ կը գտնուիմ նաեւ ես,  
յարեւար Արամ Հայկազի կողքին,  
իսկ հանդիսականներու առաջին  
կարգին վրայ ի՛նքն է, ահաբեկիչ  
մեր փառքերուն առաջնակարգ դէմ-  
քերէն Արշաւիր Շիրահեան:

Հոն եմ ու հոն չեմ կարծես:  
Հեղ մը Արամ Հայկազի անցած  
ճամբաներուն վրայ կը թափառի  
հոգիս, կը բարձրանայ Ծաղին-Գա-  
րահարի բերդը, կը պրկուի,  
կ'անցնի մեռելներուն մէջէն, կը



ժորժօքի, կը մտնէ անապատ, կ'արիւնի, հրաւքին փրկած բեկորնեհուն հետ կը շարունակէ տառապանքը Բիւրստամանի լեռներուն մէջ, եւ հեղ մը մեծախոտով Շիրակեանի հետ կընկալիս կը հալածէ Արամին ու արամեան աղբին Գողգոթան սարքած մանր ու մեծ հրէշները, շահ ստտակ ընելով զանոնք, պաղլտկելով սուլթանական ժայրաբաղաբի արիւնտ զոհներուն մէջ, բացուելով Հոռոմի բաց պողոտաներուն վրայ ու արբենալով Պերլինի մէջ խնամքով յարզարուած որջերուն առջեւ:

Յորեկինական հանդիսութիւնէն ետք, երբ ժողովուրդը սկսած էր կաթաց-կամաց դուրս գալ սրահէն, բազմութեան մէջէն յայտնուեցաւ դարձեալ ու յայտնեց, որ իրեն հետ պիտի մեկնիմ: Հանդիսութեան անպաշտօն մասը հացկերոյթ-խըրտանանքով մը պիտի շարունակուէր նիւ ձըրգիի Մ. Վարդան եկեղեցոյ սրահը եւ սկսելու համար երկու ժամ կար դեռ:

Պանդուկին պերճաշուք մէկ նրբանցքի քովէն կը յառաջանայինք, երբ զուարթ բացազանութիւններով մեր դիմացը ելաւ ընկերներէս Գալուստը եւ քանի մը անգամ աշխատցուց ձեռքի լուսանկարչական մեքենան...

Երախտագիտութեամբ նայեցայ աչքերուն, ապա՝ Շիրակեանին դասնալով՝ ըսի.

— Այս վայրկեանին տէր հղայ թանկարժէք հարստութեան մը:

Քաղցրօրէն ժպտեցաւ:

Պանդուկի ելքին՝ միացանք տիկին Շիրակեանին եւ իրենց հետ միասին հանդիսութեան եկած զորքի մը: Բարձրացանք ինքնաշարժ: Հերոսին հրահանգով՝ ես տեղ զբաւեցի առջեւի աթոռին վրայ, իր մօտը: Մէկ փողոց անդին, կարժիւր լոյսը ստիպեց մեզի կանգ առնել:

— Պատուհանդ գոցէ, — ըսաւ Շիրակեան, — աւազակները սովորութիւն ըրած են այս վայրկեանը օդապարձել: Իրենց պահանջն ու հարուածը մէկ կ'ընեն:

— Եթէ հետք եղած ատենս ալ պիտի վախնամ մարդերէն, ալ ի՛նչ, — ըսի զուարթ տրամադրութեամբ:

— Հինգ տուարի համար մարդ կը մեռցնեն սրիկաները, չարժեր խնդիր ունենալ իրենց հետ, — ըսաւ՝ իմ ակնարկութեանս պայծառ անզբաղաբձը դէմքին:

Գեղեցիկ իր վիլլային մէջ գեղեցիկ եղաւ մեր ժամը: Անցեալ, ներկայ, երկիրներ, քաղաքներ, թերթեր, դիրքեր, դէմքեր, յուշեր՝ իրմէ, վարակիչ ապրումներ, նոր ճառագայթ մը՝ իմ հոգիիս:

Ու հետաքրքրական, անտիպ դրուագներ: Մէկը խիստ յատկանշական, Շիրակեանին պատմուած Ամենայն Հայոց Կաթողիկոսին կողմէ:—

Էջմիածնայ թեմի մայր տաճարին օծման համար նիւ Եւրօք գտնուած միջոցին, Վազգէն Վեհափառ բաղձանք կը յայտնէ Շիրակեանը տեսնելու ու տեղ կը հասցնէ բաղձանքը: Ահարեկիլը կը փութայ եկեղեցոյ կից դահլիճը ու դրանիկներէն մէկուն միջոցով կը հազորդէ Վեհափառին, որ եկած է: Վեհափառը շուրջիններէն կը խնդրէ ատեն մը առանձին ձգել զինք: Հիւրերէն մէկը, ութսուննոց ոսակափար մը, կը յամտի մնալ ու կը յայտնէ անպայման հոն մնալու տրամադրութիւնը Վեհափառին:

— Բայց ինչո՞ւ անպայման կ'ուզես մնալ:

— Վեհափառ, եկողը Դաշնակցական է, ձեր անձին պաշտպանութեան համար պէտք է մնամ, — կ'ըսէ հոգածու ծերունին:

— Ձիս առանձին ձգէ, — կը պոռայ Վեհափառը ու գէպի դուռը շտապող դողողուն օսակափարին

ետեւէն կը սկսի բարձրաձայն խըն-  
դալ, երբ ներս կը մտնէ Երբակ-  
եան:

Իր գուրգուրանքին վրայ այդ  
նոր զուարթութիւնը գումարած՝  
Վեհափառը զեղուն սիրով ժը կ'ող-  
ջագուրէ Հերոսը:

Իր անհանդարտութեան մէկ  
պահուն, կռահեցի իրեն զխնակից  
զէնքը:

— Դեռ կը կրե՞ս Հեադ, —  
Հարցուցի ժպտուն:

— Մի՛շտ, — ըսաւ, ու բաճկո-  
նը բանալով ցոյց տուաւ ամբող-  
ջութիւնը:

Չարիքներէն մէկը կամ միւսը  
զգնտնող զործիքներէն մէկը չէր  
անպայման իմ տեսածս, բայց չեմ  
զիտեր ինչու անոնցմէ մէկը թուե-  
ցաւ ինձի եւ չեմ զիտեր ի՞նչ եղայ  
այդ պահուն, մանկացայ կարծես,  
մեծցայ, լեցուեցայ, յորդեցայ՝ ի  
տես ակնթարթ մը ատրճանակին  
վրայ Հանգչած արարչադարձ, մե-  
ծագործ այդ բազուկին: Նոյն կա-  
ցութեամբ պիտի ողողուէի անպա-  
ման, եթէ Հրաշքով մը տեսնէի Ս.  
Մետրոպր՝ իր տեսնողորձ այր-  
բնարանին Հետ, Նարեկացիին՝ վե-  
տուր դրին ի ձեռին, Վարուժանը՝  
«Յեզին Սիրտ»ին Հետ, Օլականը՝  
«Մնացորդաց»ին, Չարեհըր՝ «Գիրք  
ճանապարհի»ին, Երբակեանի ա-  
տրճանակը ու անոր Հետ այս բո-  
լորք, նոյն աղբիւրներէն եկող այս  
խինդը, խոտլճը, Հիացումը, պա-  
կուցումը:

Երջանիկ էի:

Յաջորդ օր, Կարապետի Հետ  
Ուշիկիթին պիտի մեկնէի եւ վե-  
րագարձիս, Ուրբաթ 16 Նոյեմբե-  
րին, դարձեալ նման քաղցրազին  
պահեք պիտի ընծայուէին ինձի:  
Կէսօրին իրենց Հիւր պիտի ըլլայի,  
եւ երեկոյեան՝ միասին պիտի եր-  
թայինք Նիւ Եորքի Ս. Գրիգոր Լու-

սաւորիչ եկեղեցւոյ սրահը, ուր  
դասախօսութիւն մը պիտի կարգա-  
դայի Նարեկացիի մասին:

Վերագարձիս՝ անմիջապէս Հե-  
ռածայն բազի տունը: Պատասխա-  
նեց տիկինը:

— Անհանգստութեան մը Հե-  
տեւանքով՝ Արշալիրը քանի մը օր-  
ւան Համար Հիւանդանոց մտաւ:

— Հիւանդանոց: Արշալի՞րը:  
Մահահանցունքէս որո՞ւն մըտ-  
քէն կ'անցնէր, որ այդքան լուրջ է  
այդ անմահանուն Հերոսին տեղա-  
փոխութեան պատճառը: Չորս ամիս  
ետք միայն Հասկցանք կայութեան  
լրջութիւնը: Հիւանդութիւնը քանի  
մը օրուան Համար չէր եկած, եկած  
էր իրմէ չբաժնուելու, զինք մեզմէ  
բաժնելու անողոք վճիռով, ար-  
սո՞ւս...:

Առջի օր, նամակ մը Գալուս-  
տէն — «Երբակեանն ալ պատմու-  
թեան անցաւ, եւ ըսել, որ իր վեր-  
ջին հրապարակային երեսմը քեզի  
հետ եղած օրը եղաւ: Անկէ ետք  
հիւանդանոց մնաց: Գուրգուրա՛  
նկարին վրայ...»:

Գուրգուրալ միայն նկարի՛ն  
վրայ: Կրնամ միթէ իրմէ մնացած  
որեւէ յուշ գուրգուրանքէ Հետու  
պահել, չփայփայել զանոնք օրն ի  
բուն, վրիժառու սուրբի մը հպած  
ըլլալու բախտաւոր մարդու մը դե-  
ղումով: Արդէն ամէն ինչ սիրելի  
էր ու մահը աւելի՛ թանկարժէք  
դարձուց բոլորը, ակնարկին փայ-  
լը, ժպիտին երանգը, ձայնին թըր-  
թիւրը, շարժումներուն Հատու վա-  
յելլութիւնը, ատրճանակը դարձ-  
եալ, ու տարճանակին վրայ պահ  
մը Հանգչած այն բազմաբեղուն բա-  
ղուկը, զոր սեղմած ըլլալու խոռ-  
վիչ ու անհատնելի երջանկութեան  
մը տէր դարձայ բախտաւոր օր  
մը...:

9. ՄնԱԳԵԱՆ

Ն. Զ Ա Ր Խ Ո Ի Տ Ե Ա Ն

## ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ ԱԶԸ...



Ու տեսայ անծայրածիր տարածութիւն մը,  
 Որուն սահմաններուն վրայ վայրագ ալիքներ կ'ոռնային,  
 Եւ որուն վրայ, սեւ ամպեր՝ խիւսիկ ու սամարձակ  
 Շուրջօր մը կը պարէին՝ ծածկելու համար *գոտիաքներու* դէմքը:  
 Կոր թումբերու վրայ փաշեր ու տատակներ  
 Տառապանքի ազդակներով փամին կը բզկտէին:  
 Բորենիներն ու շնագայլերը սարսափած այս լուսքենէն  
 Ձէին խորտակեր իրենց դունչով աւագի այդ թումբերը,  
 Որանց մէջ ոչնչացած էին դիակներու ոսկորներ:

*Ձոտիաքներու* վրայ ամպերու շուրջօրը դանդաղեցաւ  
 Եւ հողաթումբերու մէջէն չոր արմատներու պէս *ցցուեցան*  
 Հագարաւոր բազուկներ, որոնց ձեռքերը կտրուած էին,  
 Յետոյ երեւցան գանկեր ու կմախքներ այլանդակ,  
 Ու թափօր մը կազմելով սկսան մագլցիլ  
 Երկնակամարին ազդանկային գառիվերը:  
 Ու լուսինը ճշալով ծածկեց երեսը ու հեռացաւ,  
 Մինչ մուրակները սարսափած միջտաններու պէս  
 Իրար կ'անցնէին՝ թափստոց մը գտնելու համար:

Ու հեռուն, յաւիտենականութեան սահմաններուն վրայ,  
 Համաստեղութիւններու հոյլերէն  
 Ու միգաստղերու թեթեւ շարշէն անդին  
 Երեւցաւ Լոյսի Ազրիւրը, որուն շուրջ,  
 Հարկ սուրերով սերովբէներ երկիւղածօրէն ծնրադրած էին:

Ու կմախքներու թափօրը, շրջանակ մը կազմելով,  
 Խոնարհութիւն մը բրաւ ու մէկ ճայնով ազդակեց.  
 «Ո՛վ Արդարութիւն, ալ ժամանակն է, լուծե՛ մեր վրէժը»:

«Ո՞վ էք դուք, որ կը յանդգնիք վրէժ խնդրել ինձմէ,  
 Ես՝ որ որդիներուն եւ թոռնիկներուն վնասել կու տամ  
 Հայրերուն գործած յանցանքները», գոռաց Ջայն մը.  
 Ու տիեզերքը գիհովի մը պէս սարսուաց իր առանցքին վրայ:

Այն ատեն մեռելայնորդ իրենց վրայէն մէկիկ-մէկիկ  
 Նետեցին պատանձներու ցնցատիները, որոնք թռչելով  
 Կախուեցան աստղերուն եւ խաւարով ծածկեցին  
 Անշրպետին զարմացած տարածութիւնը:  
 Ու մտնեալով լուսուորուած շրջանակին  
 Յուցադրեցին իրենց խաշտանգուած մարմինները՝  
 Անցլուխ դիակներ, անձեռք քազուկներ,  
 Կիներ, որոնց պատուուած արգանդներուն մէջ, հազր եզած էին:  
 Նորածինի սաղմեր ասի մը հողի վերածուած էին:  
 Ու յետոյ եկան տգամարգերը՝ այլանդակ վերքերով,  
 Անոնց ամէնէն տարեցը, սրուն գանկը,  
 Ջորցած մկանով մը կախուած էր ողնայարիմ՝ ըսաւ.  
 — Գիտե՞մ, որ անունդ Արդարութիւն է եւ զէնդ՝ վրէժ.  
 Անմեղներուն դէմ գործուած ոնիրները կը պատժես  
 Եօթանասուն եւ եօթը անգամ. եւ Դ՞ո՞ւն կ'որոշես վայրն ու պահը:  
 Հիմա եկած ե՞մք գահիդ առջեւ, որպէսզի կշռես մեր տառապանքը,  
 Որովհետեւ մեր գաւակներն իսկ մտցած են մեր անունները:  
 Մինչեւ որ վրէժի կարմիր փոքորիկը շանցնի  
 Մեր մարմիններուն վրայէն, մեր սուկորները պիտի ցաւին  
 Եւ մեր հոգիները պիտի օղբան անմխիթար այրիներու պէս:  
 — Ես հոգիներու դատարան եմ, եւ ձեր մահուան օրէն ի վեր  
 Լայն քացած եմ ձեր առջեւ երանութեան պայծառ դուռը:  
 — Բայց, ո՞վ Տէ՛ր, ինչպէ՞ս վայելինք բարիքներդ,  
 Երբ մեր դահիճները ծուարած իրենց դղեակներուն մէջ,  
 Կը շարունակեն ոսկի քածակներով խմել մեր անմեղ արիւնը:  
 Կ'ազաչե՞մք, երաման տո՛ւր հրեշտակներուդ,  
 Որպէսզի իրենց կրակէ սուրերով մեր վրէժը լուծեն:  
 Դարերով անպաշտպան մնացինք գայլերու վտանակին դէմ:

Ջայնը պահ մը լռեց, քայց յանկարծ անոր գռռումը  
 Կմախքներու բանակը սարսուացուց չորցած ճիւղերու պէս:  
 — Ապերախտե՞ր, դուք աչքեր ունէ՞իք եւ չէ՞իք տեսներ,  
 Ականջ ունէ՞իք եւ չէ՞իք լսեր, հոգի ունէ՞իք ու չէ՞իք զգար:  
 Դուք չէ՞իք գիտեր գանազանի մարզը հրեշտակներէն,  
 Այն ասպետներէն, որոնք կը մեռնէին ձեզի համար:  
 Ձեր պատմութեան էջերուն վրայ շարուած սուրբերու,  
 Հերասներու, մարտիրոսներու եւ քաջերու անունները,  
 Այնքան շատ են, որ մաս մը նուիրեցէ՛ք ուրիշ ազգերու...  
 — Բայց անոնք անցած են ու չկան ու չեն գար:  
 — Ականջ ունի՞ք ու չէ՞ք լսեր, աչքեր ունի՞ք ու չէ՞ք տեսներ, —  
 Գոռաց Ջայնը ահարկու, — տեսէ՛ք, ահա ձեր պահապան հրեշտակները:

... Այն ստեղծեց երկնակամարին վրայ երեւցաւ լուսաւոր նամբայ մը,  
 Որուն վրայ կը փայլէր լուս ու հպարտ խաւճ մը մարդկային :  
 — Ո՞վ էք դուք, — պոռաց կմախքներու խաւճին երեցը :  
 Ու լռյալ նամբուն վրայ փայտոյ թափօրէն մէկիկ-մէկիկ  
 Բաժնուեցան լռյալը հագած կերպարանքներ  
 Ու տուին իրենց անունները -  
 Բաժնուեցան բոցեր՝ հագած կերպարանքներ  
 Եւ գրողներ, մտածողներ, երագողներ, մարտիկներ, որոնք  
 Վերադառնալով իրենց շարքերուն՝ շրջանակին մէջտեղը  
 Զգեցին առանձին չար հոգիներ արի ու առնակամ,  
 Ինչպէս *սփոքարիփօտի* պատուհասող չարս ճիւղերները,  
 Ու անոնք դառնալով մեռելներուն՝ տուին իրենց անունները -  
 Միսաք, Սողոմոն, Արամ, Արշալիր...  
 Եւ անոնցմէ մէկը բաժնուելով իր ընկերներէն՝ ըսաւ -  
 — Եզրայրմե՛ր, դեռ երէկ մամուկ մըն էի մանկանց մէջ,  
 Ապա եղայ պատանի, հասայ սեմին այրութեան,  
 Բայց միշտ ձեր նակատագիրը սեւ գետի մը պէս  
 Կ'արգասաւորէր երագներուս դեռ չբացուած վարդաստանները :  
 Այն տարիքին, երբ շատեր կը հմայուին  
 Խարտեաշ ազդիկներու ճայտածքին հեշտանքէն,  
 Եւ զգացի կարմիր հուր մը, որ կը վագէր երակներէս,  
 Ու բազուկներս դարձան պողպատեայ լծակներ :  
 Եւ նուրբ մատներուս պրկումին տակ մետաղները կակուղացան :  
 Ահա՛ *աջու*, ձեռք մը՝ ուրիշ ձեռքերու պէս,  
 Զեռք մը, որուն ճկունութիւնը կըմար մեղեդիներ յօրինել  
 Դաշնակներու խուսափուկ ու քնքուշ ստեղծերուն վրայ :  
 Սակայն պեթեովէնեան համեմատագներէն գերադասեցի  
 Կրակոցներու գոռ երգը,  
 Փամփուշտներու մեներգը՝ խառնուած դահիճներու վայնասիւնին :  
 Եւ մարդ մըն էի մարդերու պէս, հայ մարդ մը արդարաւէր,  
 Որ հսկայ ոստաններու լուսաւոր պողոտաներուն վրայ,  
 Մէկիկ-մէկիկ, ինչպէս բազէն կը կտցանարէ հասուն պտուղները,  
 Մէկիկ-մէկիկ պատուհասեցի այն բոլոր մարդակները,  
 Որոնք մեր նակատագրի ներմակ թռչաթիւն վրայ  
 Իրենց սեւ մատներուն բարդ ու դարձադարձիկ հետքերը դրին :  
 Սեւ դաւանանքները աչքիս բացին առջեւ ծունկի ինկան,  
 Իսկ անոնք որ իրենց ձեռքները գործելէ ետք  
 Բաւ բարեմիներու պէս իրենց երկիրը լքելով՝  
 Ապաստան գտած էին մեղսակից Երոպայի ոստաններուն մէջ,  
 Անոնք էին խնձոյքիս լաւագոյն պատանները :  
 Ա՛հ, այն մէկը, որ խեղդամահ ըլլած էր  
 Տօսնեակ հագարաւոր մանուկներ, իմ տարեկից ընկերներս,  
 Եւ հիմա կ'ապրէր խաղաղ՝ անոնց արեան գինը մոխրելով -  
 Հաւատացէ՛ք, եզրայրներ, լա՛ւ բան է ներել իր թշնամիին,  
 Բայց, վա՛յ անոր, որ կը ներէ մանուկներու դահիճներուն,  
 Եւ վա՛յ անոր, որ կը ներէ քանաստեղծներու դահիճներուն,  
 Վա՛յ անոր, որ սեսնելով անոնց անմեղ նայածքներուն տեսնելու մը,  
 Իր մերկ եզուեցներով չի կառչիր այդ գիշատիչներու կեկորդին...

Եւ ամէն անգամ, որ այդ ճիւղներէն մէկը շանթահարուած  
 Փամփուշտներու անլրէպ տարափին տակ  
 Արեան նայադիքներու մէջ կը հաւաքէր իր ազիքները  
 Կամ իր ադոնտ շրթունքներով փողոցներու ալայատակը կը լիզէր,  
 Երկնային հրճուանք մը կ'արագացնէր սիրտիս զարկերը՝  
 Եւ թեթեւցած՝ ինչպէս մշակ մը աշնան հունձէն հտօք,  
 Կր թալէի հայարտ, աչքերս անցորդներու աչքերուն,  
 Որովհետեւ գիտէի, որ քիչ մը ճարտարացած էր  
 Ձեր ուկարներուն վրայ ճնշող հողը,  
 Եւ ճառագայթ մը աւելցած էր արդարութեան լոյսին  
 Եւ քիչ մը հրճուանք՝ մահատակուած մանուկներուն մտայլ նայուածքին մէջ:  
 Եղբայրներ՝, մի՛ վհատի՛ք, որովհետեւ այսօր, վաղը եւ միշտ  
 Ծնունդ պիտի տա՛ պահապան հրեշտակներու:  
 Ապրո՛ղ եղբայրներ՝, երէկ մե՛նք էինք արդարութեան ասպետները,  
 Այսօր դա՛ւք, եւ վաղը ձեր գաւակները պիտի ըլլան  
 Վրէժի եւ հաշուեյարդարի անզիզող Նեմեսիսները:  
 Տեսէ՛ք, ահա՛ ձեռքս, ահա՛ աջս, ձեռք մը՝ ձեր ձեռքերուն պէս,  
 Ջայն իբրեւ օրինակ կը թողում մեր լուսաւոր սերունդներուն»:

Այն ատեն բոլոր կմախսացած մեռելները վեր առին  
 Իրենց չորացած բազուկները եւ իւրաքանչիւրին ծայրը  
 Պողպատէ մատներով ձեռք մը կը լուսաւորէր խաւարին արգանդը:

ՆՈՒՊԱՐ ԶԱՐԽՈՒՄԵՆ



Յ. ՄԱՆՈՒԿԵԱՆ

Ի Համրոյր  
Արուօեան

Ամայքներուն,  
Ուր լերդացած արիւնի եւ աւազի  
Կը տիրէ  
Հոգեխառնութիւն մը մշտնջենական՝  
Դիւցազնութեան սրբավէմին  
Կը մատուցուի  
Դիւցազնալար պատարագ :

Տէր - Զօրն համակ  
Սազարբագօծ ծառաստան,  
Ուր վկաներն հայ հանճարին,  
Հայ հոգւոյն

Արթննայով  
Արեւարալից գիշերներու թմրիրներէն՝  
Կու գան այցի  
Երամներով հաւատաւոր  
Օրհնութեան հազար պլակ,  
Հազար նարօտ

Նսիրաքերելու  
Ի սէր վարքիդ,  
Ոգորումիդ արդար... :

Յաւերժընկա՛լ պատարագ,  
 Ուր կ'ընթեռնու  
 Վարուժանը դիւցազներգու՛  
 Վրէժիդ աւիւնովը կեանքագրուած՝  
 Նանաստակաց զհոսակէդ  
 Տեսիլք մը վկայութիւն:

Կը վերանայ  
 Նուիրախոհ պահն այս խորին,  
 Անպարտյր զեղումով եղջոյնի,  
 Վրիժախանձ աջիդ՝  
 Ի համբոյր արութեան...:

Կը բարձրանամ  
 Վկաներու նշխարարոյր շարքերէն  
 Ի համբոյր աջիդ,

Կամփիդ,  
 Արութեանդ՝  
 Բերկութեան բառեր բեզում,  
 Եւ կանչեր օրհնութեան:

Ու վրէժիդ խորհուրդին մէջ,  
 Շիրակեան,  
 Նաշտանգուած ամէն մէկ խոհ,  
 Մասունք դարձած ամէն մէկ իզձ,  
 Մէր ու երագ՝

Կ'ապրի՛մ,  
 Կը գգա՛ն,  
 Յաղթութեան փառքը գերագոյն:

Եւ կ'օրհնե՛նք քեզ  
 Խանդաղազեղ գեռութեամբ.  
 Կ'օրհնե՛նք ա՛ջդ վրիժագոր՝  
 Վաղորդայնէ վաղորդայն...:

ՅԱԿՈՒ ՄԱՆՈՒԿԵԱՆ



## ԱՌԻԾԱՍԻՐՏՆ ԱՐԹԱԻՐԻ ՄԱՍԻՆ



Արշաիր Երբակեանի անուանակոչութեան մասին տըր-  
 ւած վարի ազուր մանրամասնութիւնն ու Առիծասիրտին  
 հանդէպ արտասանուած յարգալիր խօսքերը ստաւագրող Տա-  
 մատ Թերլեմէզեան՝ առիծասիրտներում ստեղծած պատ-  
 մութեան մէջ իմէ եւս «սեւ օրտեր ու ճիկար» տաղած ծանօթ  
 անուն մըն է, իր կարգին առիծասիրտ մը, որ տակաւին ան-  
 պիտ-անմօրուս պատանի՝ Վանայ Այգեատունին մէջ օր ցե-  
 բեկով գետին փռեց իր մատնութեամբ շրջանը ազէտի մատ-  
 նած դաւանան Գաւան:

Սրտառուչ է ե՛ւ Արշաիրին հետ ունեցած Թերլեմէզեան-  
 թին ազգակամական կապը, ե՛ւ անհետացող հերոսը յարգե-  
 լու իր սեզմ ռնը:



*1890ական թուականներուն, Հայրս Պօլիս կը գտնուէր: Հոն էր նաև  
 Արշաիրի Հայրը, որոնք մօտիկ բարեկամներ են եղած: Երբ Արշաիրին Հայ-  
 րը կ'ամուսնանայ՝ Հայրս կ'ըլլայ զոյգին կնքահայրը:*

*Քանի մը տարի ետք, լոյս աշխարհ կ'իջնայ Արշաիրը: Եւ Հայրս, իր-  
 բեւ կնքահայր, մէկդի կը հրէ անտուածաշնչական երկարաւուճ Աբրահամ  
 Քրիստոսատուր անունը, զոր կ'ուզէին տալ նորածինին, մի պահ կը նայի  
 երեխայի զէմքին, հոն կը նշմարէ կայծակնային ճառագայթ մը եւ փոքրիկը  
 կ'անուանէ Արշաիր, որ պահուերէն կը նշանակէ առիծասիրտ:*

*Այդ օրէն արդէն կ'որոշուի Արշաիրի ապագայի գործունէութիւնը:  
 Յիշելով անմահ Պետրոս Դուրեանի ընտ մանքսի վերջին տունը՝*

Իսկ աննշան եթէ մնայ,  
 Երկրի մէկ խորշն հոգակոյտն իմ,  
 Եւ յիշատակս ալ քառամի,  
 Ո՛հ, այն ատեն ես կը մեռնիմ...

*կ'ըսենք:*

*Սիրելի Արշաիր, Հայ ազատագրական պայքարի ընթացքին զո՛ւն ալ  
 վրիժառուններուն մաս կազմեցիր՝ յառաջապահ Սողոմոնի, Մխաբի, Արամի,  
 Մաղիկեանի եւ բազո՛ւմ ուրիշների հետ, պատուհառելով ճիւղներ, տաղե-  
 լով անոնց սեւ սիրտն ու ճիկարը: Դուք չէք մոռցուիր: Հայ պատմութեան  
 կը պատկանիք:*

ՏԱՄԱՏ ԹԵՐԼԵՄԷԶԵԱՆ

## ՎԵՐՉԻՆ ՁԵՌՔԸ...

Մարդիկ ու անոնց կապուած գործեր կան, որոնց մասին եթէ ամէն օր խօսուի եւ գրուի՝ դժուար թէ գոհունակութենէ տարբեր արտայայտութիւն մը կարելի ըլլայ տեսնել ունկնդիրներու եւ ընթերցողներու ղէմքին վրայ:


Հայ անպատագրական պայքարին իմացեալ մահով ստեղծած պատմութիւնը լուազրուեցաւ հայ պիւնտրին, հայ ֆետայիին անպատմելի խոյանքներով: Բայց անոր էջերուն վեհութիւնը եկաւ մեզի Հ. Յ. Դաշնակցութեան Ցրդ Ընդհանուր Ժողովէն, ուր արիւնաքամ ժողովուրդի մը դահիճներուն մահավճիռը... Կարմիր Կնիքով տալէ ետք, Գերագոյն Մարմինը կ'ընտրէր նաեւ կայն գործադրութեան դնող ահաբեկիչներու կայծակ խումբ մը.-- Սողոմոն Թեհլիրեան, Միսաք Թորաքեան, Արամ Երկանեան, Ա. Շիրակեան եւ նոյնարիւն այլ ահաբեկիչներ՝ իրենց վստահուած ղեկաւորին մեքենաներու վրէժխնդիր զընդակներուն տակ Պերլինի, Բագուի եւ Հոսմի փողոցներուն մէջ ու Թիֆլիսի Չեկայի շէնքին առջեւ շան սատակ պիտի ընէին Թալաթ փաշան, Ջիւանշիրը, Սայիտ Հալիմ փաշան, Պեհաէտտին Շաքիրը, Ճեմալ Ալմին, Ճեմալ փաշան ու Թալաթի եւ Ճեմալի ոճրեղբայրներէն՝ էնվեր փաշան:

Դեպի գիտակցական մահ սուրացող արծիւներուն խոյանքները երեսակայութենէ դուրս սխրագործութիւններ էին: Գաղափարական մղումով կատարուած այս յանդգնութիւնը, ցեղային՝ առիաւէն եկող ժառանգութիւն մըն էր մեզի համար, որ իր տարողութեամբ ու ճակատագրով՝ անցած է մեր պատմութեան ամէնէն լուսաւոր թուականներու շարքին: Եթէ Ա. Մետրոպոլ լոյսին հրաշքը բերաւ հայ գրականութեան ու մշակոյթին, իր տառերու գիւտով եւ Կարմիր Վարդան տուաւ իբրեւ ազգ տելու պողպատեայ կամքին օրինակը ուխտապահներու նահատակութեամբ՝ մեր ահաբեկիչներն ալ, իրենց կարգին՝ եղան անիրաւուած հայ ժողովուրդին արժանապատուութիւնը փրկող եւ անոր ղէմ՝ արար աշխարհի անտարբեր այլին առջեւ գործադրուող անարդարութեանց վրէժը շարդարար հեղինակներու արեան ճապաղիքին մէջ լուծող օրինեալ ձեռքեր:

Արշալիր Շիրակեան վերջինն էր այդ ձեռքերուն, եւ անոր համար՝ նշխարի մը չափ սուրբ՝ իր ներկայութիւնը, որ պիտի շարունակուի այնքան ատեն, որքան ատեն որ կայ իրեն անմահութեան ճամբան ցոյց տուած հայ ժողովուրդը:

Որքան խօսուի ու գրուի Արշալիրի մասին՝ ո'չ միայն քիչ է, այլեւ՝ շատ քիչ: Մա'նաւանդ երբ մտաբերենք ներկայ օրերուն տխուր հեռանկարները, համոզուելէ ետք, որ հաւանաբար պակսին մեզի Արշալիրին ու անոնց նմաններուն մասին խօսելու հպարտաւոր պահերը:

ԱՇՈՏ ՆՈՐԲԱՆ



# ԻՎԱԿԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄ

Փ Ի Է Ռ Տ Է

## ԻՆՉ ՈՐ ԳԻՏԵՄ ՍՈՒԺԵՆԻՑԻՆԻ ՄԱՍԻՆ

Գիրքը կը կոչուի *«Ինչ որ դեռած Սոյճնիցիներ մասին»*։ Լայս տեսաւ Մայիսին եւ մեծ ազնուկ համեց ճրագայի մէջ։ Թէն համրածա՞նօք է այն բիրտ վերաբերումը, որ խորհրդային պատասխանատուները ցոյց կու տան իրենց մեծագոյն գրողներն մէկուն հանդէպ, եւ սակայն այս գիրքը նախ արժէ է իր հեղինակին՝ Փիեռ Տէի առնով։

Փիեռ Տէ, ազգեցիկ անդամներն մէկը ֆրանսական կամկուսին, 1953էն մինչեւ վերջին քիւր (Փետրուար 1971) խմբագրապետ *«Լէժը Ծրանէջ»*ի, որուն անօրէնն էր Լուի Արակոն, յանդգնութիւնը ունեցած է կատարելու յատակարարութիւնը այն շնիրներուն, որոնք *«Քաջկէղաւորներու տապալում»*ի հեղինակին դէմ գործուեցան Մտալինի, Երուշչէնի եւ Պրեժնեի ֆրեմլինին կողմէ։ Ենթաւնձ կատարուած բննադատութիւն մը, որ կը յայտնաբերէ ֆրանսական կամկուսի մտաւորականներուն դիրքորոշումը։

Տաղ տարի առաջ, շաղատալիցացումսի օրերուն, Արակոն եւ Տէ, հաշտութեամբ էլլա թրիպի կողմէ, մերժեցին Սոյճնիցիներ հարկորդային Միութեան մէջ լայս տեսած առաջին — եւ միակ — գիրքին «պաշտօնական» քարգմանութիւնը։ *«Իւսն Տեխնոլոգիկ կեանքին մէկ որը»* քարգմանուեցաւ Փիեռ Տէի կողմէ եւ լայս տեսաւ *«Լէժը Ծրանէջ»*ի մէջ, առաջ տարի շարունակ սեպտեմբեր ամսաբանքու գրաբեմնարկը վայելած Սոյճնիցիներ ներկայացնելով իր ամբողջական հարազատութեամբ։

Բայց հարկ եղաւ սպասել հինգ տարի, մինչեւ Չեխովալաֆիայ վրայ կատարուած արշաւանքը, որպէսզի հարկորդային Միութեան հանդէպ *«Լէժը Ծրանէջ»*ի ընդդիմադրութիւնը դառնայ բացարձակ։ Փիեռ

digitised by A.R.A.R.@

Տէ, որ *«Կատարականութիւնը»* գիրքին հեղինակ Արքիւր Լեւոնով անը-  
ճազն է, իր քերթը դարձուց մերքին ընդդիմադրութեան բնույթ: Այս դիր-  
ֆորանշան հետեւանով, քերթին վաճառումը արգիլուեցաւ Խորհրդային  
Միութեան մէջ եւ, ի վերջոյ — միւսական դժուարութիւններու պատը-  
ւակով — երատարակութիւնը դադարեցաւ:

Ամառազկային զինագիծով ընկերութեան դէմ իր ամբաստանագրին  
մէջ՝ Փիեռ Տէ Խօսէի ազատութեան հերոսի հովեր չ'առնէր: Կուսակ-  
ցութեան հանդէպ իր հաւատարմութիւնը, Օսյմիակ անոք սխալմբում եւ  
նճիւններում մէջ, բացատրուած է հազուադէպ անկեղծութեամբ մը:

Ինչպէս իր գիրքին, նաեւ *«Նուսփէլ Օպտերվաթէոր»*-ի շնորհուած  
հարցազրոյցի մը մէջ, զոր կը հրատարակեմք տօտրեւ, Փիեռ Տէ երեւում  
կու գայ իր հարագառ գիծերով: միշտ ընկերվարական, բայց ընզվզող  
այն անարդարութեանց հանդէպ, որոնք կը գործուին ընկերվարութեան  
անունով:

Տ. Ո.

— Հասարակութեան գիտցածէն ա-  
ւելի ի՞նչ գիտէք Սոլժենիցինի մասին:

*Փիեռ Տէ.* — «Ինչ որ գիտեմք» գործը  
արդիւնք է խորհրդածութեան մը, որ  
տասնըմէկ տարուան կեանք ունի: Գիրքը  
յատկացուած է զբաղէտ Սոլժենիցինի  
պայքարներուն: Բայց անոր կենսագրու-  
թիւնը չէ: Կենսագրութեան համար, դի-  
մեցի միա՛ն Սոլժենիցինի յարաբերու-  
թիւններուն, դանց առնելով այն բոլորը,  
որոնք կու գային կապկածելի, մա՛նա-

ւանդ ոստիկանական ազդիւրներէ: Նախ-  
կին տարագրին համար, որ ես էի — եւ  
որ մերժած էր հաւատալ, թէ կեդրոնաց-  
ման նամբարներ կրնան գոյութիւն ունե-  
ցած ըլլալ Խորհրդային Միութեան մէջ  
— Սոլժենիցին անփոխարինելի վկայ մըն  
էր: Բայց շուտով տեսայ, թէ ան նամ-  
բարներու գրող մը չէր, այլ մեծ գրող  
մը, որ կը խօսէր կեանքի ու մահուան  
իմաստին, նաեւ ընկերվարութեան իմա-  
տին մասին:

— Ե՞րբ փափաքր ունեցաք աւելի մօ-  
տէն ուսումնասիրելու անոր գործը:

*Փ. Տ.* Դեկտեմբեր 1962ին, երբ ու-  
նեցայ շուամ Տենիսովիչի կեանքին մէկ  
օրը» գործին յայտնութիւնը, երբ էլզա  
Թրիոլէ ինձմէ խնդրեց մաքրագրել  
հաղճեպով կատարուած առաջին թարգ-  
մանութիւն մը: Այդ օրերուն, երբ  
Սոլժենիցին անձանօթ էր տակաւին ու  
կը նկատուէր համբալ գրող մը, էլզա  
Թրիոլէ ըսաւ ինձի. «Գիտե՞ս, Փիեռ,  
ռուսական մեծ արձակիմ է այս: Համար-  
ձէ՞ք՝ Փրօսօփ եւ Յլօպէրի...»: Այնա-  
տանքիս ընթացքին տեսայ, որ ճիշդ է:  
Անդրադարձայ, որ Սոլժենիցին չէր կըր-  
նար չըլլալ փորձառու, արդէն իսկ իր  
արուեստին տէր զբաղէտ մը: Գրադէտ  
մը, որ ուղղակի կապուած էր ռուսական  
մեծ ասանդութեան, Թոլսթոյի եւ Տոս-



Փիեռ Տէ

Քոյեակի: Ասոր համար ալ, ուզեցի ամէն բան դիտնուիլ իր մասին: Միտածանակ, «Լէ Լէթըը Ֆրանսէզ» իմ աշխատանքիս մէջ, ստիպուեցայ զբաղել զանազան խնդիրներով, որոնք կը ստեղծէին իր գործին Ֆրանսայի մէջ հրատարակութեամբ:

— Բայց 1962ին, Սովետիցիս պաշտօնական գրողի հանգամանք ունէր գրեթէ:

Փ. Տ. — Եւան Տեմիսովիչի կեանքին մէկ օրը՝ հրատարակուեցաւ նոյնինքն Պրուչչիւի որոշումով: Հրատարակելու որոշումը պէտք է տրուէր կուսակցութեան առաջին քարտուզարին կողմէ: Ուստի, այդ օրերուն, դիրքին հրատարակութիւնը այստեղի ղեկավարման կողմէ նկատուեցաւ առաջնահերթ գործ մը Պորչուչիւի Միութեան պատիւին եւ մարկին համար: Բայց պէտք է գիտնաք, թէ 1962ը այն տարին է, երբ ձիւննալը եւ ապաստալիմացումը մեծ թափ ստացած էին: Կար գրական ծաղկում մը, կային արժէքաւոր ժապուէններ: Ֆրանսայի մէջ ընդունած էինք այս ազատականութիւնը հարգատարէն ներկայացնող գրողներու պատուիրակութիւն մը. Փաստացովսի, Նեկրասով, Վոզնեսենսկի... Անոնք ազատօրէն խօսած էին հասարակութեան եւ Ֆրանսայի լրագրողներու: Քիչ մը շատ ազատօրէն, որովհետեւ երբ Պորչուչիւի Միութիւն վերադարձան, հակադրուեցութիւնը եղաւ բուռն: Պրուչչիւ սաստեց գրողները ու նաեւ «Լէ Լէթըը Ֆրանսէզ», որ անոնց հետ հարցազրոյց ունենալու յանգանքը գործած էր: Բայց այդ ճառը հետեւանք շունեցաւ: Տվարդովսիի շարունակեց «Նովի Մի»-ի մէջ հրատարակել Սովետիցիս նորավէպերը, «Մաքրիմանյի տունը», «Քրէյթովկայի ամծանօթը», որոնք կը յայտնարժէին իր իսկական արժէքը, իսկական մեծութիւնը: Ու միտածանակ՝ իր իրապաշտութեան բնոյթը: Այդ նորավէպերուն մէջ, ստալինականութեան քննադատութիւնը իսկապէս հիմնական էր: Հոն կը տեսնուէր գիւղերու յետամնացութիւնը, ստալինեան ընկերութեան



Ա. ՍՈՎԵՆՍՅՈՒՆ

բարոյական այլաներումը: Ստալինականութիւնը հոն չէր ներկայացուէր իբրեւ ընկերավարութեան խաթարումը, այլ իբրեւ անարդար, յոգի ընկերութիւն մը, ուր ոչ մէկ տեղ ընկերավարութեան նշոյլը կը տեսնուէր: Երբորդ նորավէպ մը՝ «Ի մպաստ դասին», որ հրատարակուեցաւ 1963ին, ուղղակի կը յարձակէր կեղծաւորութեան եւ օրուան խորհրդային ընկերութեան, այսինքն՝ ապաստալիմացումի շրջանի եղծումին վրայ: Սովետիցիս յանկարծ կը յայտնուէր իբրեւ գրող մը, որ ի վիճակի էր ամբողջովին արտայայտելու իրականութիւնը, զայն հակադրելով սկզբնական շրջանի ընկերավարութեան, 1917ի Յեղափոխութեան իտեւայններուն:

— Նման հրատարակութիւններ ինչպէ՞ս արտօնուեցան:

Փ. Տ. — Անշուշտ Պրուչչիւի պաշտպանութիւնը կը գերը ունեցաւ: Բայց

Սոյժենիցին սկսած էր արդէն յարձակման ենթարկուիլ քննադատներու կողմէ, որոնք կը պաշտպանէին տեսակէտները այն վարչակարգին, որ յաջորդեց Խրուշչեւի: Բայց նոյնիսկ այդ տարին, 1964ին, Սոյժենիցին առաջարկուեցաւ դրականութեան Լեճինի Մրցանակին համար, ինչ որ կը համապատասխանէր կառավարական որոշումի մը: Բայց մէկ տարի ետք, Մինիստրիէի եւ Տանիէլի ձեռքակալութեան պահանջով, ստիկանութիւնը զբաւեց Սոյժենիցինի գրական արխիւները: — Խրուշչեւի յաջորդող վարչակարգը ըսիք:

Փ. Տ.— Այն ուղղութիւնը, որ Խրուշչեւ տուաւ խորհրդային քաղաքականութեան, կը համապատասխանէ ապաստարանացում կոչուածին, ստալինեան սխալներու սրբագրութեան: Անոր անկումէն ետք, քաղաքականութեան շատ յստակ շեղում մը կըսու հաստատումը տարբեր վարչակարգի մը, որ իրաւամբ նոր-ստալինականութիւն կը կոչուի: Այդ վարչակարգը կ'արտայայտուի մտաւորականներու դէմ խիստ պայքարով մը: Մինիստրիէի եւ Տանիէլի դէմ բացուած դատը խորհրդային արժէք ստացաւ: Ստալինի օրերուն պէտ սարսափ չի տիրեր, բայց մտաւորականներուն կ'արդիւն էր քննադատել ընկերութիւնը եւ, մանաւանդ, կուսակցութեան քաղաքականութիւնը: Այս վերաբերումին հետեւանք կը հանդիսանան օրինակելի գատերը, ինչպէս նաեւ գրաքննութեան զօրացումը: Նոյնպէս անոր հետեւանքն է Սոյժենիցինի գործին արգիւտումը 1966էն սկսեալ: Ի՞մ գործս կը պարունակէ այս նոր-ստալինականութեան գաղափարական նըշանակութեան մէկ վերլուծումը: Այսօր, այդ նոր-ստալինականութիւնը ունիլիքն երբեք բուռն է եւ մասնաւորաբար կը տիրէ Փրակայի մէջ: Սոյժենիցինի «Բաղցկեղաւորներու ստալինականութիւնը» մեկ մերկացումն է ամբողջ ընկերութիւն մը: Մերկացումն է նոյնինքն կուսակցութիւնը: 1965ին ի՞նչ մնացած էր խորհրդային կուսակցութեան. Բոսթոկոլով, ճամբարներէ փրկուած մարդը, որ այլ-

եւս ընկերավարութիւնը չի կրնար դատարանի իր ապրածին հրէշային բնոյթէն. Թուսանով, որ վարչակարգին պատճառով դարձած է մատնիչ մը եւ ճարպ կապած՝ իր գոհերուն ունեցածներով. Եւլուլուպին, մտաւորականը, որ իր ազատութիւնը պահպանելու համար, ամբողջ կեանքը անցուցած է դաշն ուրանալով:

— Ուրիմն ձեր գիրքը ճանաչուցի՞նք Սոյժենիցինի ընթերցումը մըն է:

Փ. Տ.— Անշուշտ: Նոյնիսկ ատոր մէկ կարեւոր մասը: Փորձեցի հաստատել իմ սեփական ընթերցումս, Դիմադրութեան սերունդի համայնալարի մը ընթերցումը: Սոյժենիցին կ'ապրի ու կը գրէ այն երկրին մէջ, որ իրազօրծեց անոյն ընկերավարական յեղափոխութիւնը: Կանոնաւոր կերպով հարցաքննեցի Սոյժենիցինը իր նկարագրած աշխարհին մասին: Սոյժենիցին անկախէր գրող մըն է: Մարդիկ մոռցած են այն իրողութիւնը, որ Սոյժենիցին բանտ նետուեցաւ բարեկամի մը գրած ըլլալով, թէ Ստալին կոնակ դարձուցած է լենինիցին: Միւս կողմէ, չեմ անտեսեր բողոք այն հարցումները, որոնք իր մասին կ'ուղղուին: Օրինակ, այն հարցումը, թէ Սոյժենիցին արդեօք յետադիմական գրող մըն է: Յոյս կու տամ, թէ իր ապրած աշխարհին մասին իր ըսածները յետադիմական ոչինչ ունին, ընդհակառակն, իր բաժները ամբողջութեամբ կը վերաբերին մեզի: Սոյժենիցին իր ուշադրութիւնը ուղղած է անցեալին եւ աւանդութիւններուն, որովհետեւ ընկերավարական աշխարհը աւերակ է, պէտք է զայն վերակառուցել, հիմ ունենալով առևտրական պատմութիւնը:

— Բայց Սոյժենիցին ի՞նչ աստացեալ է:

Փ. Տ.— Կը խօսիմ նաեւ այդ հարցին մասին, բայց ոչ թէ Սոյժենիցինի առեւտրականութեամբ, այլ բոլոր հոգեւորական ընկերավարական երկիրներուն մէջ, հակաիմաստական հայրամայնները տրւին այն արդիւնքը, որ հիմա ամէն մարդ գիտէ, թէ Աստուած դեր չունի պատահած շարքերուն մէջ: Ուստի, երկուս-

սարդութեան համար, եկեղեցիի մէջ ամուսնանալը կը հանդիսանայ դատումի իր անկախութիւնը արտայայտելու միջոց մը: Աւելին. իտէալ մը ունենալու պահանջը: Գուցէ նաեւ իսկական համարքի արտայայտութիւն մը: Պաշտօնական անաստուածութեան այս երկիրներուն մէջ, խղճի ազատութիւնը կը սկսի հաստատեցնել ըլլալու իրաւունքով, ինչպէս անաստուած ըլլալու իրաւունքով կը սկսի Ապանիոյ կամ Փորթուգալի մէջ:

— Բայց այդ չի՞ նշանակեր ինչորոշ աւարկայ դարձնել Եայնիգին Գեղափոխութիւնը:

Փ. Տ. — Կը նշանակէ ինչորոշ աւարկայ դարձնել Գեղափոխութեան այսօրուան պատկերը: 1973ին, պէտք է որ 1917ը կարգանք 1937ի ընդմէջէն, այլ նաեւ 1964-1965ի կամ 1968ի Փրակայի ընդմէջէն ու վերջապէս՝ այսօրուան քաղաքականութեան: Ասիկա անհրաժեշտ է: Այդպէս կ'ընեն իրենք՝ սովետները: Կը բաւէ կարգաւ Բոյ Մեռեալներ գիրքը ստալինականութեան մասին: Ինչպէ՞ս կարելի է Պրանսայի մէջ հիմնական հարցումներ չուղղել Գեղափոխութեան ճակատագրին մասին: Ասիկա ուղղակի կապ ունի մեզի հետ: Չէ՞ք կարծեք, որ մենք բարոյական մենք դրամագլուխ դրինք 1917ի Գեղափոխութեան մէջ:

— Ետն հարցումները կրնայի՞մք ձեռնարկել տասը տարի անոց:

Փ. Տ. — Անշուշտ ոչ: Նախ, տասը տարի անաջ, շատ հեռու էի զիսնալէ ա՛յն, ինչ որ գիտեմ այսօր: Գետոյ, կը հաւատայի թէ — Որուշչեւի օրերուն էր — Ոորհրդային Միութիւնը կը նոյնա-

նա ընկերփարութեան ազգային հետ: Այսօր այլեւս չեմ հաւատար: Այս դիրքը նաեւ իմ մտաւորական ինքնակենսագրութիւնս է:

— Կը կարծէ՞ք, թէ պէտք է ամենքս ըսել:

Փ. Տ. — Միշտ այդ եղած է տեսակէտս: Ես սխալներ գրեցի կուրորար, բայց ոչ՝ հաշիւով: Կը կարծեմ, թէ ճշմարտութիւնը յեղափոխական է, ու ամէն բանէ անաջ ճշմարտութիւնը՝ Գեղափոխութեան մասին: Գեղափոխութեան մասին ստելը քաղաքական սուտերուն վատագոյնն է, որովհետեւ կը վնասէ իսկապէս, ապագային:

— Կը իօսիք իրրել համայնակար: Կը կարծէ՞ք, թէ կը ցոյցնէ՞ք Փրանսական կամ կամկուսին կարծիքը:

Փ. Տ. — Վերջերս, Չեխոսլովաքիոյ ընկերփարական ընդդիմադրութեան մասին գրած մէկ յօդուածիս արեւմտի ինքի գրեմի տուին, թէ իրաւունք չունիմ յանձնառութեան տակ դնելու Փրանսական կոմկուսը: Բայց ոչ ոք կրնայ արգիլել, որ խօսիմ իրրել համայնակար: Հետզհետէ աւելի խորապէս կը հաւատամ, թէ մեր արեւմտեան ընկերփոխներուն ընկերփարական մէկ փոխակերպումը անհրաժեշտ է՝ դիմակալելու համար այն իշխանութիւնները, զորս ունինք մեր մոլորակին վրայ: Բայց ատիկա պէտք է ըլլայ, Չլրգ դարու ընկերփարութիւն մը, ի վիճակի՝ ապահովելու մարդուն ամբողջական ազատագրութիւնը, զոր կ'երազէր Մարքս: Սոյսնիցին այդ ընկերփարութեան հետ է:

ՄԱՐԳ ՆՇԱՆՆԱՆ

ՎԷՊ, ՍԵՌԱԿԱՆՈՒԹԻՒՆ  
Ե Ի Ժ Ա Մ Ա Ն Ա Կ



0.— Վէպը՝ Որբունիի «Հայածուածները» շարքին երրորդ հատորը՝ «Ասփարը», նոր լոյս տեսած Պոլիս, Հրատարակութիւն «Մարմարա»-ի: Շարքին երկու տասնին հատորներն են «Փարօր» (Փարիզ 1929), եւ «Թեկնածու» (Պէյրութ 1967): Այս երկու հատորներուն միջեւ՝ մօտ քառասուն տարուան փոս մը, որուն պէտք է անդրադառնալ, Որբունիի այսօրուան արտադրութիւնը կարենալ հասկնալու համար:

1.— Ասիկա կը պահանջէ սակայն, որ համակարգային անհրաժեշտ ընթերցումին ձեռնարկելէ առաջ, մեկնինք այդ գործերու մասին ընդհանուր նշումներէ, գաղափարներէ, որոնք յետոյ միայն պիտի տարբարւնանք, մանրամասն ընթերցումներէ ետք դառնան խնդրական եւ տեղափոխուին իրենց ընդունուած վայրերէն: Այս ճշգումը հոս՝ փարատելու կամ առաջուրէն շրջանցելու համար այն համոզումը, թէ կրնայ այսօր գրութիւն մը յայտնել «կարծիք մը» ուրիշ գրութեան մը մասին (ան ալ Որբունիի վէպին), ըսել տնոր շուրջ ճշմարտութիւններ կամ տպաւորութիւններ, առանց ըլլալու միաժամանակ անդրադարձում իր իսկ աշխատանքին վրայ: «Գրադատական» յօդուածը չի կրնար մնալ նոր լոյս տեսած գիրքի մը պարզ վերլուծումը, ոչ ալ թերութիւններու եւ յաջողութիւններու մասին վճիռներ արձակելու փորձ մը (ո՞ր իտէպալ նմոյշին համեմատելով): Այլ, միւս գրութեան (texte) հետ շրջման մէջ մտնելով, ահոր հետ խաղալով, որոնում մըն է գրութեան եւ ընթերցումի նոր գործողութեան (pratique) մը, հարցադրում եւ կազմալուծում՝ իր իսկ «գիտութեան», շնորհիւ «գրախօսուած» գիրքի ներքին աշխատանքին: Հոս՝ գրախօսականը եւ բնագիրը անխուսափելիօրէն կը միանան, կը խաղան, մէկը միւսով կարելի է վերջոյ մէկը միւսին հետ փոխարինելի (բնագիրը՝ գրախօսական մը արդէն, իր իսկ մասին, կամ կարելի գրախօսականներուն մասին):



Ինչո՞ւ Ռրբունիի վէպերուն ատճեւ «գրագատը» չի կրնար շարունակել հաստատական ըլլալ, փորձել գրութիւնը բռնել գաղափարներու եւ տպաւորութիւններու ցանցի մը մէջ: Դասական վէպն է (օրինակ՝ դեռ, եւ որոշ վերականգնմաներով, Շահնուրինը) որ կը ներէ, կը պարտադրէ իսկ, այդ կեցւածքը իրեն հանդէպ, եւ ասոր պատճառը այն է, որ ան միշտ իրմէ դուրս ձգած է իր մեկնարանութիւնը: Ուզած է ըլլալ «ուղղագիր», ճշմարիտ, լայն առումով իրապաշտ, յմտածելով երբեք ինքզինք իրբեւ գրութիւն, իրբեւ վէպ: Արդիագոյն վէպը (եթէ «վէպ» մակդիրը դեռ կը պատշաճի այս գրութիւններուն), ձերբազատուած՝ իրականութեան մը, առարկայականութեան մը յղելու այս մտահոգութենէն, կը վերադառնայ ինքն իր վրայ, կը կրկնէ ինքզինք եւ այսպէս կը կրծէ, կը քերթէ ներսէն գրութիւններու վրայ սովորական ամբողջատիրական գործողութիւններու կարելիութիւնը: Այստեղ, ուրիշ, բնագիրին աշխատանքն է, իրբեւ այդ, որ կը հարցադրէ գրախօսութիւնը: Գրախօսականի հաստատումները կրնան միայն տեղափոխուիլ, դանդաղ խտտորումով, մինչեւ գրութեան վերջին տողը: Ասկէ, անշուշտ, զժուարթութիւնը ընթերցումին: Երբ գրութիւնս, անցնելով բնագիրէն, կը ստիպուի անոր իսկ թելադրանքով, վերադառնալու ինքն իր վրայ, եւ տեղափոխելու, խտտորելու ինքզինք, այլեւս ես չեմ ո՛չ պատասխանատուն այս շարժումին, ո՛չ ալ զայն ղեկավարողը: Գրութիւններու խաղն է, որ կը բռնէ մեզ:

2.— Սկզբնական շրջանին, «Հալածումները» ուզած է հետեւիլ Հայ մարդու մը, կամ Հայ Մարդուն ոգիտականին: Գեանքը Հոս՝ հասկցուած իրբեւ ճամբորդութիւն մը, յամբ ներգրաւում նոր աշխարհի մը, գոց՝ նախ եւ որ հետզհետէ պիտի յայտնուի իր այլազանութեամբ եւ հարստութիւններով: Միեւնոյն ժամանակ, հերոս մը պիտի կողմաւորուի անցնելով զանազան փորձերէ, փորձառութիւններէ, մինչեւ որ Հասնի որոշ տիրութեան մը: Սկիզբը՝ («կիրքէն»)՝ «Հալածումները» կը ներկայանայ իրբեւ կազմաւորման վէպ մը, բայց միայն իրբեւ առաջադրանք. «Փորձը» ներկայացումն է գրուելիք վէպին, որ կրնայ իրապէս գրուիլ սկսիլ, երբ անցքը կատարուի աշխարհի եւ փորձառութեան հունէն: «Փորձը» առաջադրանքն է փորձառութեան եւ անոր վէպին (երկուքը միասնաբար, անբախտելի. փորձը՝ հասկցուող միայն գրուած-գրուելիք վէպէն, եւ նոյնիսկ իրբեւ վէպ), երկուքն ալ ապա-զայ: Պատմութիւնն է ուրիշ մէկու մը, որ դեռ չէ ծնած (\*), եւ կը տուայտի ձերբազատուելու համար մօրմէն, անցնուլէն, աշխարհ դալու համար սեռայինի եւ արհեստի կրկնակ ճամբով («երկուքը մեծալի մը երկու երեսները կը կազմեն», էջ 156(\*\*)): «Փորձը»ի վերջին էջերուն, հերոսը կը ձգէ իր ետին անցեալը, մայրը, եւ սեռ-գրամի կրկնակ զողութիւն մը-պղծում մը գործելէ հտք (ձերբազատումը՝ կարելի միայն բռնութեամբ, արցորիցի, կարգերը խախտող, բայց միաժամանակ սահմանուած անոնցմէ, Հոս սեռ-գրամ գոյզը, եւ պատրաստ՝ նոր կարգի մը յանդէլու. կողմաւորման վէպը կը հետեւի հեռոսի մը մինչեւ իր կարգուելը, սեռ-գրամը — անոնց յարաբերութիւնը —

(\*) Ռրբ. Եշտմենի Գ. Պըլտեանի «Յովակ Բուսկաններու Փրօմտեան» վէպը յօգւածէն, դասախօսուած Փորթի 1972ին եւ դեռ ամօրիպ:  
 (\*\*\*) Էջերու Եշտմենի վրէջ յոգւ «Առաջադր» Խտտորիցի:  
 digitised by A.R.A.R.®

կարգաւորող Համակարգը (մտնելը), կը մեկնէ ան դէպի Փարիզ, մայրաքաղաքը, գառնալու Համար նոր մարդ մը, մարդ մը պարզապէս :

Յ.— «Եւ եղիւ մարդ», որ լոյս կը աննէ 1964ին, «Հալածուածներ»ու շարքէն դուրս, կը լրացնէ ձեւով մը, իր անկարելի լրումին կը հասցնէ վերը յիշուած առաջադրանքը. անհատական-ովի.ոքեան կազմաւորման վէպը գրել-ապրել: «Փորձը»ին մէջ արդէն Հերոսը Սփիւռքի բնակիչ էր (որոշադրումը կատարուած է Սփիւռքի մէջ ապրելի փորձող անձի մը յատկանիշներով, մասնաւորապէս փորձերը՝ միջազգային հետ կապեր հաստատելու Համար): Սփիւռքի բնակիչ պարտադրաբար, բայց դեռ առանց պարունակութեան: Ի՞նչ պիտի ըլլայ բնակիչու ձեւը: Արմատապէս տարբեր նախկինն:

«Եւ եղիւ մարդ». մարդ մը հոս կը ծնի, անցեալի կապանքներէն դուրս, կը դառնայ տարեց վերջնապէս, առնելով սրուած մը (հայուհիի մը հետ ամուսնանալու անբեականակցելի որոշումը) եւ հեռանալով մօր եւ օտարուհիի (բացարձակ հարազատի եւ բացարձակ օտարի) կրկնակ եւ փոխադարձ քաշողութենէն: Ծնունդը հոս ազատագրում մըն է ամուսնանալու անկարելիութենէն: Անհատական խնդիր նախ, զոր կարելի է դիտել հողեկներուծումի տեսանկիւնէն: Բեւեռում՝ մօր տիպարին վրայ, որ կ'արդիւն սեռային մօտեցումը մայրը յիշեցնող կիներուն: Հողեկներուծական բուժումը. անցք մը մտնելութենէն, վերադառնալու Համար ներկային, անցնելով կրկին անդամ բեւեռման բոլոր Հանգրուաններէն եւ լուծելով այսպէս հողեկներուծական հանգոյցները: Ճամբորդութեան կամ կազմաւորումի ձեւ մը (ուր կրկնումը նոյնպէս խօսուած-գրուած է): Եւ Որբունիի հերոսին կամ հերոսներուն ողբասականը կարելի է կարգաւ իրրեւ սեռային ողբասական մը, մինչեւ տիրապետում՝ կաշկանդող մղումներուն վրայ, մինչեւ խորտակում՝ կապանքներուն, եւ լուծում՝ բեւեռումներուն (մինչեւ որ կարելի դառնայ դիտակից որոշումը, վախէն եւ անձկութենէն ազատագրումը):

Միայն անհատական խնդիր մը չէ սակայն առիկա: Յ. Բիւրքեանի իր «Սփիւռքահայ հոգեբանական վէպը եւ երթակայական ճշմարտութեան մը անբնութեանը» յօդուածին մէջ կը գրէ հետեւեալը. «Եւ եղիւ մարդ»ը հայ վէպ է, ամբողջ հաւաքականութեան մը կենսապայմանը քելադրող գործ է... գուտ անհատական հոգեբանութեան ասեմաններուն մէջ իսկ: Թովմասի մը սաղմնային կեանքին, սփական երկուսի ճիգելուն եւ բարդոյթներուն մէջէն, Որբունի կու տայ «Սփիւռք» անձնականացումը\*): Եւ նոյնպէս. «Հայաց պատմութիւնը արկէ՞ պիտի գայ մեզի, եթէ ոչ հայ ներանձնական մարդուն խորունկ հեռաւարտութիւններէ\*): Բայց ո՞ր Սփիւռքը, ո՞ր պատմութիւնը: «Կորուսումի» դատապարտուած, (կամ) «փրկութեան» ելքեր փնտռող հիւանդ խմբաւորումը, եւ անոր երկրնորանքնը: Ո՞չ անշուշտ: Թովմասի անկարողութիւնը. սեռայնորէն հայունիի մը մօտենալու անկարելիութիւն, աւրնչուած մօր եւ օտարուհիի զոյգ (զուգուած) ձգողութիւններուն: Սփիւռքի «հիւանդութիւնը»՝ յղուել «ձագումի» մը, երբ ամէն ծագում ակզբնականորէն օտար է (մայրն ու օտարուհին ջով քովի) եւ խորտակիչ (տուայտանքները, բարդոյթները Թովմասի): Հայաց պատմութիւնն է այդ խորտակումին պատմութիւնը (սարսափը՝ հայուհիներու մէջ սեռային երեւումէն): Այսպէս՝ կազմաւորման վէպը կը խօսի նաեւ Սփիւռքի կազմաւորման եւ ծը-

(\*) «Բազին» 1966 թ. 6: Ստորագծուած մեր կողմէ:

նունդի մասին, երբ թողման կ'ազատագրուի ծագումի մը մօտենալու պատ-  
րանքէն-փորձութենէն, և և միաժամանակ օտարի հրապոյրէն :

Պատմութիւնը եւ «խորունկ հեռաւորութիւնները» կազմաւորման վէպը  
իրը այդ կ'ենթադրէ այդ խորութիւնները : «Եւ եղիւ մարդ», իբրեւ այդ խո-  
րութիւններու թափանցումի փորձ, անհատական-սփիւռքեան վէպը գրելու-  
սպրելու առաջադրանքին իրագործումն է :

Վ.— Բայց խորը անմիջապէս մակերեսն է հոս (ամէնէն մակերեսայի-  
նը) : Հարագատ-օտար գաղափարաբանական հակադրութիւնն է (հակադրելը  
հաւասար է համակարգուած երկու բեւեռներէն մէկը մերժելու, այսինքն՝  
միաժամանակ անոր ձգտութեան մէջ ապրելու), որ կը գործէ հոս և կը դժուի  
Սփիւռքի ամբողջ տարածութեան : Եւ առաջին արդիւնքը այս մակերեսային  
անդրադարձներու խաղին՝ խորութեան տպաւորութիւն մը ձգելն է : Հոգեբա-  
նական խորութիւնները կը ճանչնան միայն Մայրը, սեռայինը, կամ «Մայր-  
Օտարուհի» անքակտելի զոյգը, որով ծագումը կ'ըլլայ խորտակիչ : Ծագումը  
ենթադրուած է միշտ հոս, թէեւ իբրեւ օտար, և ան կարելի կը դարձնէ անձ-  
նական պատմութիւնը իբրեւ հայոց պատմութիւն : Բայց ի՞նչ դեր կ'ընայ ու-  
նենալ հայուհին, իբրև իմաց, սեռային խորշանքներու կամ «մանկութեան ար-  
հայտը» յաճախանքի» երկարածաձուկն մէջ : յամենայնդէպս զ'է հոգեբա-  
նական (խորունկ, խորտակիչ) : Կէտ մը կայ ուրեմն, ուր հոգեբանական  
«խոր» իրականութիւն մը ըլլալէ կը դադրի «Մայր-Օտարուհի» զոյգը, ու կը  
զանաւայ պարզ արդիւնք մը, զի՞մ մը, զուտ հակադրութիւններով կազմուած  
համակարգի մը մէջ : Գիծեր, հակադրութիւններ, որոնք սկզբնականորէն սե-  
ռային եւ հոգեբանական (ենթակայական) չեն այս պարագային, այլ՝ զբը-  
ւած-ըսուած : Մակերեսը՝ խօսքերու, էջերու մակերեսն է (հոգեվերլուծական  
չորովոյթին մէջ ալ, խօսքերու մակերեսէն՝ խորութեան տպաւորութիւնը,  
յորձը՝ իրական, «ճշմարիտ» եղելութիւններու) : Եւ միակ կարելիութիւնը  
հոս հարցադրումն է հակադրութեան եւ անոր ենթադրած գաղափարաբանու-  
թեան : Այդ հարցադրումն է, որ կը կատարուի նաեւ «Եւ եղիւ մարդ»ի մէջ,  
և ուրեմն միայն կազմաւորման (անհատական-սփիւռքեան ենթա-կայական  
ճշմարտութիւն մը որոնող) վէպ մը չէ այլևս այս վէպը, այլ արդէն ու-  
րիշ բան :

Երեք մօտեցումները «Փորձաքնն միջուկ եւ եղիւ մարդ» երկարող  
ճամբուն. հերոսի-Սփիւռքի կազմաւորում, սեռային խորտակումէ մը բժշ-  
կում, գաղափարաբանութեան մը հարցադրում : Պէտք է հիմա երեքէն անցը-  
նել շրջադէմ մը, որով երբողը կը վերագտնայ առաջինին. աշխարհի մը  
բացուիլ, այդպէս իբրեւ մարդ կազմուիլ, կը նշանակէ նախ և առաջ հակա-  
դրութիւններու զանցումը. պէտք է հասկնալ, որ եթէ այսօր միայն կրնանք  
գաղափարաբանութեան մը մասին խօսիլ, Որբունիի վէպերուն ամբողջ յոր-  
ձանքին սկզբնատարրը այդ գաղափարաբանութեան մերժումն է (հարցադրո-  
ղին առաջին հակադրութիւնը), փորձը անկէ ազատագր(ու)ելու (հարցա-  
դրումը) : Առանցքը սակայն կը մնայ սեռայինը, որ կը պահէ իր մէջ ե՛ւ կազ-  
մաւորումի, ե՛ւ հարցադրումի փորձը-հարցը : Հայկական Հարցը սեռային  
հարց մըն է :

Ըսինք, որ սփիւռքեան-անհատական կազմաւորման վէպը չէ միայն  
«Եւ եղիւ մարդ»ը : Այս է պատճառը շարքէն զուրս գտնուելուն : Ձի լրացնելը  
միայն սկիզբի առաջադրանքը, կը յայտնէ ուրիշ բան, և կը տանի ուրիշ տեղ :  
Մակերեսի խաղը, որ կ'երեւի հոս, անկարելի կը դարձնէ կազմաւորման մը

պատմութիւնը: Բայց չարքը կը յամառի իր առաջադրանքին վրայ, կ'ուզէ շարունակել նոյն ուղղութեամբ: Իրմէ դուրս կը մզէ «Սև եղևածը, շարունակելու անկարելիութեան օպացոյցը, եւ կ'երկարածուէ ծրարիբը 1967ին լոյս տեսած երկրորդ Հատորին՝ «Թեկնածու»ին մէջ, որ ըլլալով Հանդերձ կարճ-մաւորման վէպի ծրարիբի պնդումը, կ'աւետէ արդէն «Ասփալթ»ի յայտ-նութիւնը:

5.— «Ասփալթ» կը ներկայանայ իբրեւ երկար մենախօսութիւն մը, գրուած երրորդ դէմքով: Չնչին բացուածք մը արդէն հոս նսին եւ անին միջև, աննշմարելի դեռ, քանի որ ամէն ինչ դիտուած է Մինասի աչքերով, եւ ըսուած են միայն իր իմացածն ու մտածածը: Մնաց որ, այս պզտիկ սա-հումը երկու դէմքերու կ'արդէն նսի մը տիրապետումը, եղելութիւններու եւ վերջիչումներու պատմումով, շարահետումով (ինչպէս դեռ «Սև եղևած»ին մէջ): Երկրորդ բացուածք մը, կապուած առաջինին. վէպին առաջին կէտը գրուած է անցեալ ժամանակով, երկրորդը՝ ներկայով: Մանրամասնութեան մը առջև շենք հոս երբեք: Թերեւս ամէնէն կարեւորը, ժամանակի հարցը եւ ժամանակի աշխատանքը Որբունիի վէպերուն մէջ: Կը բաւէ բնագիրը նախորդող երկու գրութիւնները կարդալ («Յառաջարանի մը տեղ» եւ «Երկու յօսէ») հասկնալու համար կարեւորութիւնը այս հարցին, մա՛նաւանդ Փրոուստի «Կարսուած ժամանակի որոնումը» վէպին ներգործօն ազդեցութեամբ: «Ժամանակի հարցը գրականութեան մէջ մեքենական կիրարկում չէ: Քմայք մը չէ: Ինչպէս նաեւ կարծուածին պէս երկրորդական կարեւորութիւն ներկայացնող եզր մը» (\*): Առաջին գրութեան երկու մտահոգութիւններն են 1. Թաւաղող ժամանակին դէմ իբրեւ յաղթանակ մը ներկայացնել «արուեստը», որ «ժամանակին խորքը» կը փորձէ «բերել մակերեսին, լծորդել ներկային, որ յաւիտենականութիւնն է, այսինքն՝ անմահութիւնը» (\*\*) եւ 2. «Թեկնածու»ի (ուրեմն «Ասփալթ»ի) կառոյցը (ոմանց արտաուայ թուող) բացատրել այս ժամանակի հարցով: Ենդիրը հոս «յաջորդականութեան ընկալեալ եւ բուժ սովորութեան խախտումն է Որբունիի վէպերուն մէջ, որոնք կը ներկայանան իբրեւ ժամանակի կոտորակներու խառնուրդ մը, ուր անհաստատ կը դառնայ դէպքերու յաջորդականութիւնը (երկրորդ գրութիւնը կը վերադառնայ նոյն թեմային. կը քննադատէ «ուղղադիր ժամանակի գրականութիւնը», որուն համար կարեւորը պատմումն է, եւ կարելի է ան, կարծես Հեղինակը տիրէր ժամանակին, դէպքերուն եւ բացարձակապէս գիտնար անոնց կարգը, հետեւանքներն ու ազդակները): «Յառաջարանի մը տեղ» կը միացնէ երկու թեմաները. կ'ուզէ բացատրել «ժամանակի հոսքի փշրումը» Որբունիի գործերուն մէջ իբրեւ արուեստի կարեւորագոյն իրադրո՞ւմը. հոսող ժամանակի դէմ յաղթանակը, Յաղթանակ, որ կը դառնայ այսպէս կրկնակ: Կ. Արուեստը այն է, որ անցեալը կը բերէ, կը լծորդէ ներկային եւ, յիշողութեան ճամբով, կորսուած ժամանակը կը վեր-գրուէ, կը փրկէ վերջապէս: Բ. Արուեստը այն է, որ ժամանակը կը փշրէ, կտոր-կտոր կ'ընէ: Անխուսափելի հատուածումը, քանի որ ժամանակին (վրայ) տիրապետութիւնը կը կայանայ մասամբ անցեալէն կտորներ փրկելու եւ ներկային բերելու լուրջորդի աշխատանքին մէջ:

Երկրորդ գրութիւնը կը սկսի խնդրական դարձնել ժամանակի (վրայ)

(\*) Այս մէջերումը՝ առաջին գրութեան, որում էրազումը կը պակտի:

սիրապետութիւնը, կը սկսի քննել մակագիծներու խաղը, խաղ՝ ժամանակի եւ տիրապետութեան միջեւ. «Այս վէպը պէտք է ընդունիլ իրրեւ խաղ մը» (էջ 18)։ Յաղթանակի զաղափարն է որ մասամբ կը ցնդի հոս։ Վէպը, ժամանակի հատուածումը, նման է «այն խաղին, ... փրծծըլ, որ կը կայանայ տուեալ պատկեր մը վերակազմելուն մէջ» (էջ 18)։ Վէպը այս պարսպադարձի՝ դժուար լուծելի «հանելուկ» մը, որ ընթերցողէն կը պահանջէ մասնակցութիւն եւ աշխատանք։ Բայց փրծծըլի խաղ մը միայն։ Ընկերու մը հոս. հատուածումը կու դայ ժամանակի ընդթէն իսկ, անոր վէպին մէջ ձեռքած հետքէն։ «Վէպը կը սկսի եւ ուզիզ գիծով իր վարձանքն կը դիմէ, մինչդեռ մեծ գիտնիք թէ ուզիզ գիծ գոյութիւն չունի» (էջ 20)։ Վէպը կրնայ ընթանալ միայն անվերջ մերտդարձով նոյն վայրկեանին, նոյն տպաւորութեան վրայ, քանի որ «Բանի կը փորձենք խորանալ...», ամէն բան կը քարքանայ...» (էջ 20), եւ պէտք է կրկնել նոյն բառերը, վերագտնալ նոյն կէտին, ամէն անգամ քիչ մը եւս խորացնելու համար զանոնք։ Այս անվերջ վերագործը, կրկնումը՝ սիմիոլաձեւ ժամանակի մը մէջ. «Իրական գիծը պարտաձեւ (սիմիոլ) է» (էջ 20)։ Սիմիոլը ժամանակի եւ անոր հետեւող վէպին, որ կը վերաբերի ենթակայութեան խորացումին, «խորունկ հեռաւորութիւններու» թափանցումի փորձով։

«Եւ դեռ գիծը գիծ չէ։ Գիծը կէտերու շարունակութիւն մըն է, մէկ կէտն միւր պարագայ միջոցներ կան» (էջ 20)։ Այս վերջին հատուածումն այ կը գտնէ ինչպէս նախորդը իր բացատրութիւնը հոգեբանական կամ, աւելի ճիշդ՝ յիշողութեան ծիրին մէջ։ Հեղինակը պէտք չէ փորձէ պարագաները լեցնել իր մեկնարանութեամբ, իր դաստիարակչական խօսքերով, պէտք չէ քանգէ պրութիւնը իր տրամաբանութեան մէջ։

Սիմիոլաձեւ կամ ընդհատուած գիծի այս մեկնարանութիւնները կ'ենթադրեն խորացումին տակ խորքը եւ հատուածումին համար՝ ամբողջութիւնը։ Խորքը միայն կարելի կը զարձնէ խորացումը, իմաստ մը կու տայ անոր, եւ հատուածումը՝ ամբողջութեան մը հատուածումը միայն կրնայ ըլլալ հոս։ Տիրողը յիշողութիւնն է դեռ եւ լեցուն, իմաստալից, անկորուստ ժամանակը, այդ ժամանակը ըլլայ ի վերջոյ ուղիղ, պարտաձեւ կամ կէտ-կիրտուած։ Յիշողութիւնը, նոյնիսկ եթէ թերի է, կ'ենթադրէ խորքը եւ ամբողջութիւնը յիշուելիքին, այսինքն՝ նախ մը (ենթակայի մը) կողմէ վերադրուելիք, վերակազմելիք իրողութիւն մը (ճամարութիւն մը)։

Պնդելով այս մեկնարանութիւններուն վրայ, երկու յառաջարանները կ'ուղեն կատարել անկարելին. պահել շարքը կազմաւորման վէպի գիծին մէջ։ Եւ այս մակարդակին միայն կարելի է հասնել, թէ ի՞նչ շափով պատմութեան հնարաւորութիւնը եւ «խորունկ հեռաւորութիւնները» կ'ենթադրեն մէկը միւրը. ժամանակն ու յիշողութիւնն են (հոս անհասական յիշողութեան մը մասին չէ խօսքը) պատմութեան հունը, եւ խորութիւն, ամբողջականութիւն (ենթակայի մը կողմէ վերակազմելիք) իրենց կարգին կը պատկանին յիշողութեան ժամանակին («Փրուստ օգտագործած էր յիշողութեան ժամանակը» կ'ըսէ Որբունի, էջ 21)։ Գերագոյն ճիշդը զանցելու-պահպանելու համար սկզբնական ուղղութիւնը կարելի է տեսնել փրծծըլ խաղի յիշատակութեան մէջ։ Վէպը կը փչրէ միայն իրականութիւնը, կը կտորէ ամբողջական պատկերը, կը ցրուէ զայն փրծծըլի զանազան կտորներուն վրայ ի պարտականութիւն ընթերցողին վերակազմելու պատկերը ամբողջութեամբ «փրծծըլ... որ կը կայանայ տուեալ պատկեր մը վերակազմելուն մէջ»։ Բայց խորութիւնը մէկ կողմէ, եւ միւս կողմէ հոս ամբողջականութիւնը իրրեւ այդ

(ամբողջական, սուենալ պատկերի մը գոյութիւնը, կարեւորութիւնը) չեն քըն-  
նըւիր: Յիշողութեան ժամանակն է, յիշողութիւնը ժամանակին մէջ, ուր կ'ու-  
ղէ երկարածողութիւն: ժամանակի (վրայ) տիրապետումը:

6.— Գրութիւնն է, որ կը տեղափոխէ մինչև հիմա գործածուած բո-  
լոր յղացքները (կազմաւորում, խորութիւն-ամբողջականութիւն, կամ փըծ-  
ծըլ, սփիռալ, կէտիխոմ): Որքանի յիշակերուն ամէնէն ակնյայտ յատկա-  
նիչը, անհուն ճիւղաւորումը մտածանքներու՝ խօսքի մը, նայուածքի, մտա-  
ծումի մը շուրջ: Երբ Մինաս կը սկսի խօսիլ Նիքոլին իր կազմաւորման վրայ  
մեծագոյն ազդեցութիւնը ունեցած կնոջ մը՝ Հորթանսի մասին, Նիքոլ կը  
պոռայ. «Լուսնէք»: Պարզ բառ մը, որ ունի անմիջապէս իր շարունակութիւ-  
նը. «Միտա կը տրորէք» (Նիքոլի հակումը արդէն Մինասի հանդէպ): Իսոյց  
«լուսնէք» էն ետք, ժամանակը կ'ընդհատի եւ ասանհակ էջերու վրայ կու գայ  
սեղադարձումը այդ բառին, անոր արտասանուելու ձեւին, պատճառած ծե-  
պին: Հնչում մը, եւ այդ հնչումին մէջ ամբողջ «ճշմարտութիւն մը» թաք-  
նուած. պէտք է քակել: Բանալ այդ վայրկեանը, էջերու վրայ տարածել  
զայն, բռնաբու երկայնքին: Հոգեբանական խորացում եւ ժամանակի ընդ-  
հատում միասնաբար: Խորացումը՝ բառերով, բառերէն, էջերու մակերեսին  
վրայ, եւ ժամանակէն գուրա: Կայ դեռ հոս անշուշտ յիշողութիւնը, հոգե-  
բանական երանգաւորումներու իրականութիւնը, որուն իմաստը պէտք է յամ-  
բօրէն թափանցել (պէտք է միայն նշել, որ այս կարեւոր վայրկեանը կ'առնէ  
իր ծնունդը կազմաւորման մասին խօսքէ մը եւ անոր պատճառած հակադրե-  
ցութենէն. հակադրեցութիւն՝ կազմաւորման դէմ):

Մակերեսն է, որ յայտնուեցաւ սակայն հոս անմիջապէս: Ընդհատուած  
ժամանակը, բառերու գիծը, քակելու անհրաժեշտութիւնը: Պատկերներ քով  
քովի, գծուած, գծուող եւ ստեղծող խորութիւնը. տեսարաններ ամբողջ կ'ե-  
րկին այսպէս պատտաններու վրայ նկարուած պատկերներու պէս, առանց  
խորքի: Մինաս սուլած կը տեսնէ Նիքոլն ու իր ջոյրը մերկ, երկարած կողք  
կողքի, լքուած թուրովին, Նիքոլի ձեռքը դեռ քրոջ պարտին վրայ, աճուկի  
ծալքին մէջ: Պատասխի վրայ գծուած տեսարան մը, նկար մը, որուն մասե-  
րը կը նկարա-գրութիւն մէկը միւսէն ետք, երկրայափական հարազատութեամբ  
— արունքներու, թեւերու գիրքերը, ուղղութիւնները — առանց ոչ մէկ մեկ-  
նութեան: Չեն ըսուիր բառերը, որ պիտի սրտադրէին ջոյրերու յարաբերու-  
թիւններու բնոյթը, շին ըսուիր մանաւանդ Մինասի զգացումները, հակադ-  
րեցութիւնները:

Մակերեսի այս խաղերուն հանդիպած էինք արդէն զաղափորաբանա-  
կան հակադրութեամբ (գծուող նորէն գրութիւններու մէջ-վրայ), որ կը  
կրկնէ Մայր-Օտարուհի հոգեբանական զորքը: Փրծծըլը նոյնպէս մակերեսի  
խաղ մըն է, պատկերներ — հարթ տարածութեան մը վրայ գծուած պարզ  
պատկերներ — կազմող-տարբադաղրող: ժամանակի (վրայ) տիրապետում.  
կ'ըսէինք: ժամանակի եւ տիրապետումի միջեւ մակերեսի, «վրայ»ի խաղն է  
հոս, որով նոյն ժամանակը կու գայ երկու անգամ, առաջինը՝ խորքին հա-  
մար, երկրորդը՝ մակերեսին համար: Ասկէ՝ կրկնումը, երկու ժամանակնե-  
րը. անցեալը (խորքը) գիրքին առաջին կէտին մէջ, ներկան (մակերեսը)  
երկրորդին: Պարզ խորացումի նպատակով չէ ուրեմն, որ էջ 139էն սկսեալ,  
զերքը կը վերսկսի, բառացիօրէն կրկնելով ինքզինք, եւ ժամանակի փոփո-  
խումով: Մակերեսի խաղն է ժամանակին եւ տիրապետութեան միջեւ, կամ  
աւելի ճիշդ՝ ժամանակին միջեւ: Տիրապետող-տիրապետուողը եսն է, յիշո-

դուրեման ժամանակի խորութեան եւ ամբողջականութեան երաշխաւորը (խորութիւնը կը պահանջէ խորացնող-խորհող մը, եւ ամբողջականութիւնը՝ վերակազմող մը)։ Մակերեսի խաղը խաղ է նաեւ ժամանակի եւ եսի՝ միջեւ, կամ պարզապէս եսին միջեւ, որով հար կը կորսնցնէ իր խորքը եւ կը սփռուի փրծծըլի խորանարդներուն վրայ։ Կը կորսուի ուրեմն Հերոսը, որուն փորձառութեան նկարագրութիւնն ըլլար վէպը, եւ անուշտ զերոսուած ժամանակը որոնող՝ Հեզիանակն ալ։ Պատմութիւնը եւ կազմաւորումը ուրեմն՝ արդիւնքներ միայն խաղին։

7.— Նշանակելի եւ նշանաւոր թաքուն ուղղութիւնն է սա՝ «Հալածաւածներու շարքին։ Կաղմաւորման վէպը սակայն իր լրումին Հասցնելու տառապարհներ վերջ չի գտներ ասով, ո՛չ ալ յիշողութեան ժամանակի (վրայ) տիրապետումը, իր խորութեամբ եւ ամբողջականութեամբ։ Կոտորակները կ'ենթադրեն զեւ ամբողջական պատկեր մը, ձտուեալը եւ «վերակազմելի»։ Բայց Որբունիի գրութիւններուն իսկ մակերեսի խաղը եկաւ խորութեան վըտատուութիւնը խանդարել։ Հիմա պիտի տեսնենք ինչպէ՛ս «Աստուծոյ» աւելի եւս նշանաւոր շարժումներով մը, ժեսթով մը, կու գայ խանդարել ամբողջական պատկեր մը վերակազմելու կարելիութիւնը, կարելիութեան կամեցողութիւնը։

Կրնանք մենք ալ փորձել պատկեր մը վերակազմել, փորձուիլ ասով։ Վերակազմել Մինասի պատմութիւնը, Մինասին, որ Հեոսացած Նիքոլէն այն օրունէն ի վեր, երբ կը հասկնայ անոր լիակազմ քրոջ հետ, կ'նոյ տղաքերի դիւշերը կը վերադառնայ ու յանձն կ'առնէ Հիւանդապահութեան պատասխանատուութիւնը։ Բայց, անհաստատ պատճառներով, Հոգեվար Նիքոլը կը ձգէ որ ամբողջ զիչերը դաւարուի ասույտանքներուն մէջ, առանց ոչ մէկ օգնութեան շարժումի։ Յետոյ՝ Նիքոլի մահը, Մինասի տարակոյսները, եւսլին։ Կը բաւէ այսքանը։ Կրնանք թերեւս կարտել վէպի էջերը, տեղափոխել կըտրոսները, քով քովի փակցնել, ամբողջական պատկերը վերակազմելու համար, որոշ բացատրութիւններ աւելցնելով ի Հարկին (օրինակ, տեղ մը Մինաս կը յիշէ Նիքոլին հետ կատարած իր հեծանիւով արշաները, Նիքոլի իրմէ անկախ զգացած սեռային գրգռումը, եւ իր հանդուրժող կամ ջղային անհասկացողութիւնը։ Ուրիշ տեղ, խուզարկուած, տակն ու վրայ դարձած տպարանի աղետարը տեսարանին տուել, Մինաս կը յաճախուի Մոնիքի հետ իր սեռային յարաբերութիւններուն կրկնուող, երկարաձգուող պատկերէն, որովհետեւ երբ կը տեսնէ նորէն ինքզինք հայածական, ինչպէ՛ս եղած է միշտ, իր մէջ Մոնիքի հիշն է, որ կ'արձակուի անվերջ հպարտութեամբ լեցնելով ամբողջ իր հոգիները։ «Ձիս կիս ըբիբ»։ ձիւք Փրանսուհիին, եւ ինք զարձաւ մարդ եւ չէ՛ այլեւս հայածական, հայածուած, հայկական անհաստնում ողբերգութեան, խեղճութեան մէջ կորսուած հայ պատանի)։

Երբ կորոնները քով քովի փակցնենք եւ իրականութեան, անցուցարձեռու, Մինասի հոգեբանական խորութիւններու եւ բարդութիւններու ամբողջական պատկերը վերակազմելու աշխատանքը լրացնենք, կը մնայ մեր ձեռքը մնացորդաց մը։ Կը մնան չգործածուած եւ անգործածելի կտրոսներ, զորս կարելի է ոչ մէկ տեղ գետեղել։ Ոչ թէ որովհետեւ ուրիշ բան կը պատմեն, պատմութեան զուրս են, կամ՝ անկարելի է մեղի անոնց տեղը որոշել։ Այդ պարագային, միշտ կարելի պիտի ըլլար յուսալ, որ աւելի խոր թափանցումով, ուրիշ մեկնարան մը կարենայ գանձել ի վերջոյ տեղաւորել։ Բայց Հոս տեղաւորելու անկարելիութիւնը բացարձակ է։ Որովհետեւ այդ կտրոս-

ներք աւելորդ են, կ'ըսեն նոյն բանը: Գիտենք, որ էջ 139էն սկսեալ վէպը տա-  
 ացիորէն կը կրկնէ նոյն բառերը, նոյն նախադասութիւնները: Այսպէս, էջ  
 41. «Հիւանդը... պտուսց: Կարծես վերջինն միշտ կ'արձակէր ընդմիջտ անէտա-  
 թեան մէջ քաւախիլէ առաջ: — Պիտի սպաննէ զիս, Մի՛նէ, պիտի սպաննէ:  
 Չ'ուզեր դուրս գալ, չ'ուզեր»: էջ 146. «Հիւանդը... կը պտուսց: Կարծես վեր-  
 ջինն միշտ կ'արձակէ ընդմիջտ անէտութեան ծոցը իյնալէ առաջ: — Պիտի սպան-  
 նէ, Մի՛նէ, պիտի սպաննէ զիս»: Կը նշմարուի զրեթէ տառացի կրկնութիւնը,  
 ժամանակի ընդհանուր փոփոխութեամբ եւ այլ շնչին փոփոխութիւններով  
 (Ինչուի, Թաւալելէ):

Այս կրկնումը կը շարունակուի ընդմիջումներով, յաւելումներով, մին-  
 չեւ էջ 161: Եւ անմիջապէս կը տարբերի հոգեբանական խորացումի կամ յի-  
 շուցութեան նոյն կէտին վրայ վերադարձի Որբունիի սովորական աշխատան-  
 քէն: Հոս յիշողութեան խաւերուն չէ, որ կը յղէ կրկնութիւնը, ես ժը չէ, որ  
 կը վերադառնայ անցեալի ժը վրայ, անկէ յաճախուած, չկրնալով զայն իր  
 հորիզոնէն վանել: Այլ պարզապէս գրութիւնն է, որ կը կրկնէ ինքզինք: Գրու-  
 թիւն ժը կը ներկայանայ, կրկնակ, կրկնուած, եւ աւելորդ կտրօնները կը  
 մնան մեր ձեռքը: Գրութիւնը կտոր-կտոր, կտտորակուած, բայց կտրօնները,  
 կտտորակները չեն յղեր պատկերի ժը ամբողջութեան, քանի որ աւելորդ  
 գրութիւն կայ «իրականութեան» նկատմամբ, ամբողջականութեան նկատ-  
 մամբ: Փրծծրլ խաղը խանդարուած է: Գրութիւնն է, որ հոս կը պարտադրէ  
 իր կանոնը եւ ոչ՝ յիշողութիւնը, յիշողութեան ժամանակը, եւս: Գրութիւնը  
 եւ ոչ՝ խոր-ամբողջական իրականութիւն ժը, փրծծրլ ամբողջական պատկեր  
 ժը: Հաստատումը հոս չի յղեր ամբողջականութեան (ժը):

Յ.— Կրկնումը ուրեմն՝ ո՛չ խորացումի, ո՛չ ամբողջացումի համար:  
 Կրկնումով՝ յիշողութեան ժամանակէն դուրս ենք: Չկայ ես ժը, որուն մէջ  
 արձանագրուի կրկնումը. ընդհակառակն, կրկնումն է, որ կարելի կը գործնէ  
 ետի միտնութիւնը, ինքնութիւնը(\*): Բայց անիկա է, որ նաեւ կարելի կը  
 դարձնէ կրկնակը, աշխատող սկիզբի եւ հարազատի մէջ-դէմ: Ակիզբը նախ՝  
 քանի որ սկիզբը կ'երեւի իբրեւ կրկնուած, յող՝ իրմէ առաջ արդէն «տեղի  
 ունեցած» ուրիշ սկիզբի ժը(\*\*): Եւ հարազատի, ծագումի դէմ: Հոս վերստին  
 «Ու եղև մարդ», ուր ծագումի հարցը ենթարկուած է աննախընթաց գործո-

(\*) Յախոնճակամ վերադարձը (Կիցլէի անվերջ-անսկիզբ նոյնի կրկնութիւնը) քա-  
 տան միասնութիւնն է, որ կու տայ ինքզինք տարածեմով իմ անճակամ միասնութիւնս,  
 անճակամ ինքնութիւնս, ետի ինքնութիւնք» (Տըլտոգ. «Տարբերութիւն եւ կրկնութիւն»),  
 Անուճեմը, որ կրճան էրելի այս բաժնի մէջ պատահական չէ: Որբունիի գործը կ'ընթա-  
 նայ զուգանեալաբար Փրծծուայի մէջ այս վերջին տարիներու զարգացած «արդիագոյն» մտա-  
 ծողութեան: Նոյն հարցերը — կրկնումը, հաստատումը — կ'երեւին հոս եւ հոն, օրգանակամ  
 անհրաժեշտութեամբ: Նաեւ Փրծծուայի գրականութեան մէջ («Փարիզի գլորցք») օտոմնա-  
 յին ձևով:

(\*\*) Հայը՝ սկիզբէն ինչ կանխուածը: Շահմարի գործին կարեւոր գծն էր՝ առիկա:  
 Առաջին անգամը գրութեան մէջ կը տրուի, կու տայ ինքզինք, իբրեւ արդէն տեղի ունեցած  
 արիշ անգամներու կրկնումը: Օրինակ՝ «Եւահրէի մէջ, Պետրոսի պատմութիւնը կը յայտ-  
 նուի իբրեւ պարզ կրկնութիւնը՝ իրմէ առաջ էկած հայտ մը (Պիպիի ծորը) պատմութեան  
 ներքինն հետ (տես էջ 255): Աւելի եւս ծանոթաց այս տեսակետով՝ «Պոխուլլեները» պատ-  
 մուածքը, լոյս տեսած «Մենք»ի երրորդ քիւնն մէջ:



զուգահեռ մը. սկիզբը՝ Մայր-Ոտարուհի քով քովի, կրկնուած, կրկնակ: Մազումը (յիշողութեան ժամանակին աւելցուած) այստեղ ոչ այլևս պարզ ծաղումը, խորքը յիշողութեան: Մազումը՝ կրկնակ, Հարազատ-օտար: Սկիզբը նորէն՝ կրկնութիւնը (ինչպէ՞ս նախադասութեան մը մէջ տարակել այս բարութիւնը, որ կը մօտեցնէ անհասարկ լինելը. սկիզբը՝ կրկնութիւնը նախադասութեան մը, որ ըլլայ բարոյութեան մը տարազը: Բութը կրնայ միայն հաստատել հատուածումը: Բութը, փակագիծը՝ ամբողջականութեան եւ խորութեան մէջ - դէմ հասուածումի եւ մոկերեսի խաղերը, որոնք ուրեմն գրութեանական, կամ նոյնիսկ տպագրական խաղեր են): Կրկնումը կը դնէ կրկնակը, օտարը Հարազատին մէջ: Այս է կրկնումի հարցին իսկական տարողութիւնը: Կրկնումի կեդրոնին՝ օտարը՝ խանգարող Հարազատը, պարզը, ծաղումը:

«Քանի որ կը սկսի կրկնելով, այդպիսի եզրութիւն մը ունի նախ պատմումի ձեւը: Իր առաջին անգամը տեղի կ'ունենայ քաղմաթիւ անգամներ... Այդ առաջին անգամը արդէն հասկէ չէ, հոս մը չունի, կ'ընդմիջէ ան պատկանելիութեան մեղաւորութիւնը, որ մեզ կը կայէ մեր բնակչութեան, մեր մշակոյթին, մեր պարզ ամասին... պէտք է մտածել որ օտարը միտուած է կրկնումին մէջ» (\*):

1. — Հիմա՝ «Ասփայթը»ի էջ 139էն մինչեւ 161 երկարող այս 23 էջերուն մէջ, վայր մը կայ, ուր յանկարծ երեւութապէս գրութիւնը կը դադարէ կրկնելէ: Արդարեւ էջ 49 եւ 149՝ կը կարդահը. « — Մինէ, ի՞նչ ունիս, հիւա՞մք ես: Մտեցիր, ինչո՞ւ ստէի վրայ կեցեր ես» (Հոգեվար Նիքոն է, որ հիմա կը հոգայ Մինասին վրայ): Եւ կայ ասկէ սկսեալ ճիշդագործ մը. էջ 149 «... Անասիման յուսահատութիւն մը իշխած է վրան... Յանկարծ կը հասկնայ...»: Կրկնումի կեդրոնին կը պոստիֆէ հոս: Եթէ կրկնումը հակառակ է իսկապէս այս գիրքին մէջ, եւ եթէ վերնագիրը կապ մը ունի այդ հակառակ հետ, ի՞նչ կրնայ երեւիլ էջ 49 այս հատուածին տեղ, եթէ ոչ — Ասփայթը: Եւ ի հարկէ. «Նայն յուսահատութիւնն էր, այն՝ որ ամիսներ առաջ ողորած էր զինքը, ինչպէս հայած ու մրացող ասփայթը...» եւ քիչ հետո (էջ 50). «... Հին նոգիւնքը զլիւն վար թափուող հայած ասփայթէ շապիկի մը նման»: Ասփայթը հանապարհ է, ասփայթը՝ նողկանքը: Մինչեւ՝ Մինասի, նողկանքէն մղուած: Ամիսներ առաջ, ինչո՞ւ այդ զանազան յուսահատութիւնը», եթէ ոչ Նիքոնի եւ քոթ յարաբերութիւնները հասկցած ըլլալէն: Եւ անմիջապէս՝ փախուտը: Ասփայթը (յուսահատութիւնը, փախուտը) կ'երբի երկու բոլորաւ մերձեցումին առընչութեամբ: Օրինակ, գիրքի վերջին էջին, երբ Մինաս ասփայթով ծեփուող ճամբուն վրայ կը տեսնէ Նիքոնը եւ Մանիքը, որոնք ձեռք ձեռքի, շքեղ հանդերձանքով եւ «հանդիսաւոր քայլուածքով» կը խրին հետզհետէ ասփայթին մէջ: Երկու քոյրերու մերձեցումէն՝ Մինասը դուրս, վտարուած: Եուսահատութիւնը հոգեբանական երեւոյթ չէ միայն հոս (եւ ասփայթը այդ երեւոյթին խորհրդանիշը չէ երբեք), եւ ուրեմն մերձեցումն ալ ուրիշ բան է քան լեսպանական յարաբերութիւն միայն:

(\*) Տե՛ս նաև «Սփայթ» (էջ 324): Այս ստորագր. Սուրբի «Թիւր» վեպին կազակներէն:

Նրկու ջուրեր հոս — Նոյնը կը միանայ Նոյնին, Հարազատը Հարազատին: Եւ գիտենք ինչպէս Փրանսահայ վէպին մէջ, Փրանսուհին բնորոշուած է իր-րեւ օտար: Հոս ուրեմն, օտար Հարազատներու մերձեցումով, կ'երեւի օտարին Հարազատը: Եւ այդ Հարազատին վտարուած է Միկաս: Կը դառնայ ան օտարին օտարը: Վտարումը՝ փախուստ, ճանապարհ: Միկասի Հարազատութիւնն է, որ կը ցնդի: Կը մնայ միայն օտարութենէ օտարութիւնը, Ասֆալթը, եւ այդ, ի հարկէ, չէ՛ ջնաւ հոգեբանական երեւոյթ:

Ըսինք, որ Հարազատ-օտարը (օտարը արգէն Հարազատին մէջ, կամ օտարին Հարազատը) կրկնումէն կը ծնի-կը մեռնի (Նիքոլը եւ իր ու Հայուն զաւակը, Նէնէթը եւ իր ու Հայուն զաւակը «Նախանջ»ի վերջին էջին: Ո՛չ միայն Հարազատի խանգարումը, այլ օտարի քայքայումը<sup>(\*)</sup> նաեւ): Եւ այս է կրկնումի Հարցին ամբողջ տարողութիւնը: Որքունիի գրութիւնը գար-մանայի ձեւով կը յարգէ-կը Հաստատէ այս օրէնքը — օտար-Հարազատը կըրկ-նումին մէջ միուած — տարով Ասֆալթն իսկ, օտարութենէ օտարութիւնը, իրրեւ կրկնութիւն, զննելով զայն կրկնումի կեդրոնը:

Վէպ (կազմաւորումը, հոգեբանականը), սեռականութիւն (ջուրերու միացումը), ժամանակ (սկիզբի, ծագումի, Հարազատի Հարցը), վէպ (կըրկ-նութիւն): Գրութիւններու խաղն է, որ կը բռնէ մեզ:

\* \* \*

«Օտարութեան» Հետ դէմ դէմի եկող, զայն ընկալելու պատրաստ, ստիպուած նոյնիսկ, ամբողջ սերունդ մը Հարկադրուեցաւ իրերու բերմամբ ապրելու-մտածելու օտար-հարազատը (օտարը Հարազատին մէջ, օտարին Հարազատը): Ուշագրաւը այն է, որ այս առընչութեամբ միշտ կրկնումը կ'երեւի:

ՄԱՐՔ ՆՇԱՆԵԱՆ

(\*) «Պուշուգլըները» պատմումովն մէջ հայ հրոսպետ մը կը ստիպէ բարձր ջուր եւ եզրայր մը միանալու իր խումբին առջեւ: Հոս նորէն օտար հարազատներու սեռային մոտեցումը, կապուած իսկ կրկնութեան (արարքը կը կատարուի կրկնութեամբ, առաջին անգամ իսկ, կամ կը կրկնէ, կը յագմապատկէ այդ առաջին անգամը): Հոս ալ օտարը կը բայ-բայուի (կմոչ տառապանքը): Կառուցային իմաստաւորութիւնը, որ կ'ըրեւի ամբողջ այս գրութիւններու միջեւ կ'արժէ ուսումնասիրել յուսի մօտէն:



ՄԱՐԹԻՆ ԷՍԼԻՆ

**ՍԱՄՈՒԷԼ ՊԵՔԷԹ**

ԱՆՁԻՆ ՓՆՏՈՏՈՒՔԸ

**Հ Ա Յ Ա Յ Ո Ւ Յ  
ՔՆԱՐ ՃԻՆՊԱՇԵԱՆ**

*Վլասիմիր ու Էսթրակոն կը խօսին  
անբնական: Ինչո՞ւ: Այդ մասին իրենց  
խօսք կը նշեն թատերգութեան թերեւս ա-  
մէնէն քնարական եւ հոյակապ ոճային  
կառոյց ունեցող մէկ պարբերութեան  
մէջ:*

- Վ.Ա.Ս.Մ.Ֆ.Ր. – ձիշոյ հս, մեծ յոգնիլ չենք  
գիտեր:
- Է.Ս.Թ.Ր.Ա.Կ.ՈՒՆ. – Այդպէս է, պիտի չմտա-  
ծենք:
- Վ.Ա.Ս.Մ.Ֆ.Ր. – Մենք ունինք այդ չճմե-  
ղամբը:
- Է.Ս.Թ.Ր.Ա.Կ.ՈՒՆ. – Այդպէս է, պիտի չլսենք:
- Վ.Ա.Ս.Մ.Ֆ.Ր. – Մենք ունինք մեր պատ-  
մանները:
- Է.Ս.Թ.Ր.Ա.Կ.ՈՒՆ. – Բոլոր մեռած ճայները:
- Վ.Ա.Ս.Մ.Ֆ.Ր. – Անոնք կ'աղմկեն թուարա-  
խումներու պէս:
- Է.Ս.Թ.Ր.Ա.Կ.ՈՒՆ. – Տերեւներու պէս:
- Վ.Ա.Ս.Մ.Ֆ.Ր. – Աւազի պէս:
- Է.Ս.Թ.Ր.Ա.Կ.ՈՒՆ. – Տերեւներու պէս:  
(Լուսփիւն)
- Վ.Ա.Ս.Մ.Ֆ.Ր. – Անոնք բոլորը միասին կը  
խօսին:
- Է.Ս.Թ.Ր.Ա.Կ.ՈՒՆ. – Իւրաքանչիւրը ինքնիրեն:  
(Լուսփիւն)

- Վ.Ա.Ս.Մ.Ֆ.Ր. – Աւելի ճիշդ՝ անոնք կը  
շշնջան:
- Է.Ս.Թ.Ր.Ա.Կ.ՈՒՆ. – Անոնք կը խշրտան:
- Վ.Ա.Ս.Մ.Ֆ.Ր. – Անոնք կը փոփաւան:
- Է.Ս.Թ.Ր.Ա.Կ.ՈՒՆ. – Անոնք կը խշրտան:  
(Լուսփիւն)
- Վ.Ա.Ս.Մ.Ֆ.Ր. – Ի՞նչ կ'ըսեն անոնք:
- Է.Ս.Թ.Ր.Ա.Կ.ՈՒՆ. – Անոնք կը խօսին իրենց  
կեանքին մասին:
- Վ.Ա.Ս.Մ.Ֆ.Ր. – Անոնց համար քաւարար  
չէ ապրած ըլլալը:
- Է.Ս.Թ.Ր.Ա.Կ.ՈՒՆ. – Անոնք պէտք է խօսին ի-  
րարու հետ այդ մասին:
- Վ.Ա.Ս.Մ.Ֆ.Ր. – Անոնց համար քաւարար  
չէ մեռած ըլլալը:
- Է.Ս.Թ.Ր.Ա.Կ.ՈՒՆ. – Բաւարար չէ:  
(Լուսփիւն)
- Վ.Ա.Ս.Մ.Ֆ.Ր. – Անոնք կ'աղմկեն փետուր-  
ներու պէս:
- Է.Ս.Թ.Ր.Ա.Կ.ՈՒՆ. – Տերեւներու պէս:
- Վ.Ա.Ս.Մ.Ֆ.Ր. – Մոխիրներու պէս:
- Է.Ս.Թ.Ր.Ա.Կ.ՈՒՆ. – Տերեւներու պէս:  
(Երկար լուսփիւն):

*Այս հատուածին մէջ, ուր իրան-  
տական միւզիկ հայերու խօսակցական ու-  
ճը յատկօրէն ընդօրինակուած է եւ վե-*

բաժնուած բանաստեղծութեան, կը պարունակէ Պէքէթի շատ մը գործերուն բանալի բառը: Վստահարար, այս խըզըրտոցները, փսիսուքները կը պատկանին անցեակին եւ անոնք այն ձայներն են, զորս մենք ունկնգրած ենք Պէքէթի գրականութեան ետարանութիւնը կազմող երեք վէպերուն մէջ: անոնք այն ձայներն են, որ կը պեղեն լինելութեան եւ անձին խորհուրդը մինչեւ տառապանքին ու ցաւին սահմանները: Վլատիմիր եւ Էսթրակոն կը փորձեն խուսափիլ այդ բոլորը լսելէ: Երկարատեւ լուսթիւնը, որ կը յաջորդէ իրենց վիճարանութեան, կ'ընդմիջուի զանձկագին» Վլատիմիրի կողմէ, որ կ'ազգայնէ. «Վերջապէս բան մը ըսէ», որմէ ետք՝ երկուքը վերադին կ'իյնան Կոտոյին սպասելու կացութեան մէջ:

Ազատագրման յոյսը կրնայ պարզապէս նշանակել ցաւէ ու տառապանքէ փախուստ, որ կը ծնի մարդկային կացութեան իրականութիւնը դիմագրաւելու արարքէն: Այստեղ նկատելի է իրապէս զարմանալի զուգահեռ մը Ժան-Փօլ Մարթիի գոյապաշտ փոխադրութեան եւ Պէքէթի ստեղծագործ նախագաղտնաբան միջեւ, այս վերջինը ոչ մէկ ատեն գոյապաշտ փոխադրութեան համընկնող դիտակցուած դազափորներ արտայայտած է: Եթէ Պէքէթի, ինչպէս նաեւ Մարթիի համար մարդը պարտականութիւն ունի դիմադրաւելու մարդկային կացութիւնը իրբեւ ծանօթութիւն, եւ տակաւին՝ եթէ մեր լինելութեան արժատին մէջ ոչնչութիւն կայ, ազատութիւն, եւ անհրաժեշտութիւն՝ անընդհատ մենք զմեզ ստեղծելու ընարտութիւններու յաջորդականութեան մը մէջ, այդ պարագային, Կոտոն կարելի է վերածել այն պատկերին, զոր Մարթը կը կոչէ «զէջ հաւասար»: «Գէշ հաւատքին առաջին արարքը կը կայանայ խուսափելու մէջ այն քանէն, որմէ մարդ չի կրնար խուսափիլ. խուսափելէ ինքն իր անձնէն»:

Հակառակ անոր, որ այս զուգահեռները կրնան լուսարանող թուիլ, այսու-

հանդերձ, մենք պէտք չէ շարունակենք Պէքէթի դիտելածները առնչել որեւէ փոխադրական գաղտնի: «Սպասելով կոտոյին» թատերգութեան յատուկ հարցատութիւնն է, որ զայն ընդունակ կը դարձնէ բազմաթիւ տարբեր տեսութիւններու: Կարելի է անոր առջ փոխադրական, կրօնահոգեբանական մեկնարանութիւններ, բայց այդ բոլորին հետ միատեմանակ ու աւելին՝ անիկա պոետան է ժամանակին, անհետ մեկնումին, գոյութեան խորհրդաւորութեան, փոփոխութեան ու կայունութեան իրարամերձ ընթացքին եւ անհրաժեշտութեան ու անհեթեթութեան փարատօքին: Անիկա կ'արտայայտէ այն՝ ինչ որ Ուաթ գզացած է տանուտէր պր. Նաթի եւ անոր կարուածին նկատմամբ... «Ոչինչ փոխուեցաւ պր. Նաթի հաստատութեան մէջ, որովհետեւ ոչինչ մնաց, ոչինչ եկաւ կամ գրեց, որովհետեւ ամէն բան կաւ գար ու կ'երթար միաժամանակ»: «Սպասելով կոտոյին» թատերախաղը դիտելու ընթացքին՝ մենք պիտի ապրինք Ուաթի սպաւորութիւնը պր. Նաթի աշխարհին նկատմամբ. «Բայց երբ մէկ կողմէ ան հազիւ կը զգայ այդ բաներուն անհեթեթութիւնը, իսկ միւս կողմէ՝ ամեն անկողմանցիկ անհեթեթութեան զգացումը (որովհետեւ հազաւորակ է, որ անհեթեթութեան զգացումը չյաջորդէ անհեթեթութեան զգացումին), ան կը զգայ անհեթեթութիւնը այն բաներուն, զորս այնքան անհրաժեշտ կը նկատէր (որովհետեւ հազաւորակ է, որ անհեթեթութեան զգացումը չյաջորդէ անհրաժեշտութեան զգացումին)»:

Մինչ «Սպասելով կոտոյին» թատերգութիւնը կը խօսի երկու հերոսներու մասին, որոնք ժամանակը կը հետապնդողն ոտտոտուն կացութեան մը մէջ եւ անվերջանալի խաղերով, Պէքէթի երկրորդ թատերգութիւնը իրբեւ նիւթ ունի «Աւարտախաղը» (Endgame), վերջին խաղը՝ մահուան ժամուն:

«Սպասելով կոտոյին» թատերգութեան դէպքերը տեղի կ'ունենան վախազդեցիկ, բայց ու՛րաւոր ճամբու մը վը-

րայ, «Աւարտախաղ»ը, ներքնասենեակի մը մէջ: «Սպասելով Կոտոյի» գործը կը բազկանայ երկու զուգընթաց շարժումներէ, որոնք կը հաւասարակշռեն դիրարմինը «Աւարտախաղ»ը ունի միայն մէկ արար, որ կը ցուցաբերէ մեքենակա-նութեան մը անկումը մինչեւ կասեցում: Այսուհանդերձ, «Աւարտախաղ»ն ալ, «Սպասելով Կոտոյի»ն թատերգութեան նման իր տիպարները կը ստեղծէ համազրուող զոյգերու գրութեամբ:

Անպաճոյճ սենեակի մը մէջ, որ ունի երկու փոքր պատուհաններ, կոյր ծեւրունի մը՝ Համ, նստած է անկիւնաւոր աթոռի մը վրայ: Համ անդամալոյծ է եւ բնաւ չի կրնար որտէր կանգնիլ: Անոր սպասաւորը՝ Քլով, անկարող է նստելու: Երկու մոխրի թիթեղներու մէջ, որոնք կոթան են պատին, կան Համի անտունք ծնողքը՝ Նէկ եւ Նէլ: Գուրսի աշխարհը մեռած է: Մեծ աղէտ մը, որմէ միայն չորս ղեկավարները ազատուած են կամ կը հաւատան ազատած ըլլալ, սպաննած է ամէն ապրող էակ:

Համ եւ Քլով ձեռով մը կը նմանին Բողոքի ու Լաքիին: Համ տէրն է, իսկ Քլով՝ ծառան: Համ անձնասէր է, զգայնոտ եւ բռնակալ: Քլով կ'ատէ Համը եւ կ'ուզէ ձերբազատուիլ անկէ, սակայն ստիպուած է հնազանդելու անոր հրամաններուն: «Կասարէ այս մէկը, կատարէ այդ մէկը եւ ես կ'ընեմ ասիկա, երբեք չեմ մերժեր, ինչո՞ւ»: Քլով քաջութիւնը պիտի ունենա՞յ ձգելու Համը: Ատիկա է թատերգութեան արամաթիք պրկուածութեան ազդիւրը: Եթէ Քլով հեռանայ Համի քովէն, այս վերջինը կը մեռնի, որովհետեւ Քլով զինք հոգացող միակ անձն է: Բայց Քլով ինքն ալ պիտի մեռնի, որովհետեւ ուրիշ ոչ ոք կայ աշխարհի վրայ եւ Համի կերակուրին պաշարը իրենց ուտելիքին վերջին մասն է: Եթէ Քլով յաջողի ձեռք ձգել հեռանալու կարողութիւնը՝ ո՛չ միայն պիտի սպաննէ Համը, այլև անձնասպանութիւն ըրած պիտի ըլլայ: Այս ձեռով ան պիտի յաջողի հո՞ն՝ ուր ինքնակոն ու Վլատիմիր այնքան յաճախ ձախողած էին:

Համ ինքզինք կը կարծէ գրագէտ մը, կամ աւելի՛ ճիշդ՝ հեղինակը պատմութեան մը, զոր կը գրէ պարբերութիւն առ պարբերութիւն, ամէն օր: Անիկա պատմութիւնն է ահաւոր աղէտի մը, որ պատճառ դարձաւ մեծ թիւով մարդոց մահուան: Թատերախաղը սկսած է ճիշդ այն օրը, երբ սոված մանուկի մը հայրը հոց կը խնդրէ Համէն՝ իր գաւազը կերակրելու համար: Ի վերջոյ հայրը կ'ազատէ Համին, որ իր տան մէջ ապաստան տայ պարտիկին, որ կըցած է դեռ ողջ մընալ: Այնպէս կը թուի, թէ այդ մահուակը կրնայ Քլովը ինք ըլլալ: Քլով Համի մօտ բերուած է, շատ փոքր տարիքին, եւ ինք չի յիշեր ասիկա: Համը հայր է իրեն համար, կամ ինչպէս ինք անձնապէս կ'ընդգծէ. «Բայց ինձի համար... ոչ մէկ հայր: Բայց Համի համար... ոչ մէկ տու՛ն»: «Աւարտախաղ» թատերգութեանը կը պարզէ հակառակ կացութիւն մը՝ ծոյրի «Խլիխիս» երկին: Առաջինին մէջ խորթ գաւազ մը կը ջանայ ձերբազատուիլ իր խորթ հօրմէն, մինչ երկրորդին մէջ՝ հայր մը իր կորուած գաւազը փոխարինող ուրիշ մը կը գտնէ:

Քլով աշխատած է Համէն բաժնուիլ իր ծնունդէն ի վեր, կամ ինչպէս ինք կ'ըսէ. «Այն օրէն, երբ տակաւին յակոտ մըն էի»: Համի ուտելուն կը ծանրանայ յանցանքի հսկայ բեռ մը: Ան կրնար ազատել մարդոց մեծ թիւ մը, որոնք օգնութիւն խնդրած էին իրմէ: «Անոնք կը սողային այդտեղ»: Հարեւանութիւններէ մէկը Մայր Փէկը, որ ատեն մը թորմ էր ինչպէս գաւազի ծաղիկ մը» եւ թերեւս Համի սիրուհին էր նաեւ, սպանուած է Համի վարպետութեան իսկ հետեւանքով: «Երբ պառաւ Մայր Փէկը քեզմէ՝ օճախի իր յարարին համար, եւ դուն անիծեցիր զիմք՝ ըսելով, որ դժոխք երբայ... դուն գիտես, թէ ինչ բանէ մեռաւ Մայր Փէկը, չէ՞, ան մթաթննէ մեռաւ»: Հիմա Համի տան պաշարը վերջանալու վրայ է. շաքարը, ծնողքին աշխարհ, նոյնիսկ ցաւ մեղմացնող Համի դեղահատը: Այսպէս ի վրայ ամէն բան կը վերջանայ, «Բան մը կը պատահի»:

Համ մանկունակ է. ան կը խաղայ երեք ութ ունեցող խաղալիք շան մը հետ. եւ ինքնակարեկցանքով լեցուած է: Քլով կը ծառայէ իրեն իր աչքերուն նըման: Կանոնաւոր ընդմիջումներով՝ անոր կը հրամայուի հսկել դուրսի աշխարհին բարձր պատուհաններէն: Աջակողմեան պատուհանը կը նայի ցամաքին, իսկ ձախակողմեանը՝ ծովուն: Բայց նոյնիսկ մակընթացութիւնը կանգ առած է:

Համը աղտոտ է, իսկ Քլով կարգուսարքի մոլեռանդ հետեւող մը:

Համի ծնողքը իրենց աւագով լեցուն թիթեղներուն մէջ աշխարհակորէն զգալուն տխարներ են: Անոնք իրենց սրբունքները կորսնցուցած են արկածի մը ընթացքին, զէպի Աէտան դացող ճամբուն վրայ, ձիերուն յծուած կառքով մը Արտէնի շուրջ — բոլորը դառնալու միջոցին: Անոնք կը յիշեն այն օրը, երբ թիալարելու զացին Քոմօ լճին վրայ — իրենց նշանաւոր օր մը ետք, Ապրիլ 1ին, յետմիջօրէին (բաղդատուած՝ «Քրէփի վերջին երիզը» անուն պատմութեան պարունակած սիրային տեսարանին): Նէկը կը պատմէ այդ ծիծաղելի պատմութիւնը, ու ամէն անգամ, որ կրկնէ զլուսնային առտիման, իր հարսը կը խնդայ:

Համ կ'ստէ իր ծնողքը: Նէլ գաղտնորէն կը ստիպէ Քլովին անօթի ձգել Համը: Նէկ, որ լսած է Համի պատմութեանը կը յանդիմանէ զինք. «Ջո՞վ կանչեցիր դուն, երբ վտիտ մանուկ մըն էիր ու կը վախճայիր մութէն: Մա՞յրդ: Ո՞չ. զիս»: Բայց անմիջապէս կ'անդրադառնայ, որ որքա՞ն անմասիրաբար արհամարհած է այդ կանչերը եւ կ'աւելցնէ. «Մենք ձգեցինք, որ դուն լսա: Յետոյ հետաքննի մտնող, որպէսզի կարենանք հանգիստ բնակալ... կը յուսամ, որ կուգայ օրը, երբ դուն իրապէս պիտի կ'ունենաս, որ լսեմ քեզ... Այո՛, կը յուսամ, որ կ'ապրի մինչեւ այն ատեն, լսելու համար կանչող ա՛յնպէս՝ ինչպէս, որ զիս կը կանչէիր, երբ վտիտ մանուկ մըն էիր, եւ կը վախճայիր մութէն, եւ ես քու միակ ապաւեճդ էի»:

Մինչ աւարտը կը մօտենայ, Համ կ'երեւակայէ այն՝ որ պիտի պատահի, երբ Քլով բաժնուի իրմէ: Ան արդէն կը համակերպի Նէկի արտաբանութիւն. «Այդ տեղ, ես պիտի ըլլամ եիմ ապաստանիմ մէջ, միմակ՝ լուսութեան, եւ... հանգարտութեան դէմ... Կանչած եմ հայրս եւ կանչած եմ... զաւակս»: Վերջին խօսքը ցոյց կու տայ, որ ան իսկապէս Քլովը կը նկատէ իր զաւակը:

Վերջին անգամի մը համար եւս, Քլով իր հեռագիտակով դուրս կը նայ պատուհաններէն: Կը տեսնէ անտօլոր բան մը: «Փոքր տղայ մը»: Բայց եւ այնպէս ամբողջովին որոշ չէ, թէ ան իսկապէս տեսած է կեանքի շարունակութեան այս տարօրինակ նշանը, «սուտկան ցախաւեղման մը»: Ձեւով մը, ասիկա թատերադրութեան հանգոյցն է: Համ կ'ըսէ. «Այ վերջացաւ, Քլով, մենք հասած ենք վախճանին: Այսուհետեւ պիտի չունիմ քեզի»: Թերեւս ան չի հաստատար, որ Քլով իրապէս կարող պիտի ըլլայ իրմէ բաժնուելու: Բայց Քլով վերջապէս որոշած է երթալ. «Կը քանամ խցիկիս դուռը եւ կ'երթամ: Ա՛յնքան ծառած է մարմինս, որ երբ աչքերս քանամ, կը տեսնեմ ոտներս եւ անոց միջեւ կտոր մը սեւ փաշի: Ինքզինքիս կ'ըսեմ, որ աշխարհը մարած է, թէեւ երբեք չտեսայ անոր կրակ առնելը... Դիւրին կ'ընթացայ... երբ իյնամ, ուրախութեամբ պիտի լամ»: Ու մինչ կայր Համ խորատուգւած է յիշատակներու եւ ինքնախոհացումի վերջին մենախօսութեան մը մէջ, Քլով կը վերերեւի մեկնելու կազմ ու պատրաստ վիճակով: Գիտուն ունի փանաճական գլխարկ մը, հագած է բուրդէ վերարկու եւ ձեռքին վրայ կը կրէ անձրեւանոց մը: Ան անշարժ մտիկ կ'ընէ Համի խօսքերուն: Երբ վարադոյրը կ'իջնէ, տակաւին բեմին վրայ է, նոյն դիրքին մէջ: Հետեւաբար սուկախ կը մնայ այն հարցը, թէ իրապէս պիտի մեկնե՞րար՞:

«Աւարտախաղ»ին վերջին պատկերը հետաքրքրական նմանողութիւն մը ունի տաղանդաւոր ասու թատերագիր Նիքոլա

Էլիբէրէնովի քիչ ծանօթ, սակայն մեծարժէք մէկ թատերգութեան՝ «Հնգրի Քատրոն»-ին, որ 1913ին թարգմանուած էր նաեւ անգլերէնի: Այս միարար թատերախաղը մենախօսութիւն մըն է, որ տեղի կ'ունենայ մարդուն մերաշխարհին մէջ եւ կը յայտնարեմէ անոր ետը կազմող զանազան բաժինները, շեշտելով այն խաչաձեւումն ու Հակասութիւնները, որոնք կը ստեղծուին մարդուն զգացական տնձին եւ տրամաբանող մտքին միջեւ: Հերոսը՝ Իւանով, նստած է սրճարան մը, եւ վէճի մէջ է անձամբ շարեւաբար ուրիշի, թէ պէ՞տք է ստեղծուիլ զիւրաքանչիւր արտաբանի երկուսին, թէ պէ՞տք է վերագոհանայ իր կեանքը: Անոր զգացումներու աշխարհը կը մղէ զինք առաջին մտածումին, մինչ տրամաբանութիւնը կ'աշխատի Համոզել զինք, թուելով այն մտորք բարոյական եւ նիւթական առաւելութիւնները, զորս պիտի ունենայ կեանքը Հետ մնալու պարագային: Մինչ անոնք կը Հասնին իրենց Հակադրութեան զգաթնակէտին, փամփուռ մը կը պայթի՝ ծակելով Իւանովի սիրտը: Իւանով անձնասպան եղած է: Երրորդ գէժը մը, որ մինչ այդ կը քնանար բեմին խորքը, ատրի կ'ըլլէ՝ ճամբորդական Հագուաներ Հագուած եւ ձեռքին պայտասակ մը: Ան Իւանովի անմահ մասն է, որ Հիմա կը Հեռանայ:

Մինչ բոլորովին անհաւանական է, որ Պէքէթ նոյնիսկ զազափար ունեցած ըլլայ այս մտքուած ուսական Հին թատերգութեան մասին, այսուհանդերձ երկու թատերախաղներուն նմանութիւնը ակնարհ է: Էլիբէրէնովի մենախօսութիւնը անխառն տրամաբանութեամբ կառուցուած գրութիւն մըն է, որ կ'աշխատի ցուցարեքի ֆապրէի Հանդիսատեսին այն ատենուան Համար նորայայտ Հոգեբանական Հանգոյց մը: Պէքէթի թատերգութիւնը կը բխի աւելի Հարագատ խորութիւններէ: Մինչ այդ կարծիքը, թէ՛ «Աւարտախաղ»-ն ալ, իր կարգին, կարելի է մենախօսութիւն մը Համարել, կարելի է տակաւին անդրադառնալ այդ ժամին: Թատերախաղին ընդգրկած միջոցը,

որ ունի միմիայն երկու նեղ պատուհաններ, որոնցմէ դուրս Քլով կը տեսնէ արտաքին աշխարհը, փոշիի թիթեղները, որոնց մէջ կը կայնին անդամալոյծ եւ անկար ծնողքը եւ Քլով իբրևուներ ունի փակելու այդ թիթեղները կափարելանքով, ամէն անգամ որ ծնողքին ներկայութիւնը անտանելի սկսի դառնալ, ապա նաեւ զգայուն եւ կոյր Համը, որուն Համար զգայարաններու դեր կը խաղայ Քլով: այս բոլորը, ի Հարկէ, կրնան ներկայացնել անհատ մը, իր ենթագիտակցութեան մէջ խցուած յիշատակներով եւ զգացական ու մտային ինքնութիւններով: Ասոնք ի մտի ունենալով կրնանք ըսել, որ Քլով ինքը մտածող մարդն է՝ ենթակայ զգացումներու, բնազդներու եւ արտաքիններու ինքնիշխան գերութեան, որմէ կ'ուզէ ձերբազատել ինքզինք եւ որուն սակայն դատապարտուած է այնքան ատեն, որ կենդանական մաս մը կը կրէ իր մէջ: Կրնանք ըսել ասուպին, որ դուրսի աշխարհի մահը՝ իրականութեան հետ ունեցած մեր կապերուն աստիճանական թուլացումն է, որ կը պատահի արտիներու ընթացքին եւ մահուան արարքին հետ զուգընթաց: Այդ պարագային «Աւարտախաղ»ը մենախօսութիւն մըն է, ուր կը նկարագրուի անհատականութեան տարալուծումը՝ մահուան ժամուն:

Միայն պիտի ըլլայ ենթադրել, թէ կարելի է յստակ պատասխան մը գտնել վերեւ յիշուած Հարցումներուն: «Աւարտախաղ»ը, ի Հարկէ, ճրագիր մը չէ՝ ներկայացնելու Համար նման խորհրդանշական պատկեր մը: Բայց նշաններ կան, ըստ որում թատերգութեան մէջ գոյութիւն ունի մենախօսութեան մը նիւթը: Համ կը նկարագրէ յիշատակ մը, որ զարմանալիօրէն յատկանշական է «Աւարտախաղ»ին մէջ պարզուող կացութեան առքնչութեամբ. «Ժամանակին կը քանչ-ճայի խենթ մը, որ կը կարծէր, թէ աշխարհի վերջը եկած է: Ան ճիշտից մըն էր — քանակազարծ մը... Ասվորապէս ունէի երթալ յիմարանց զինք այցելելու: Կը բռնէի ձեռքէն եւ կը տանէի»

պատուահանին մօտ: Դիտե՛: Հոն: Աճող  
ցորենները: Եւ հոն: Դիտե՛: Նաւարկումը  
տառեխի վտարներում: Այդ բալար գե-  
ղեցիւթիւնները...: Աճ ետ կը քաշէր իր  
ձեռքը եւ կը վերադառնար անկիւնը: Սար-  
սափած: Այն քայտը, որ ինք տեսած էր՝  
մոխիր էր միայն... Ինք առանձին կը մը-  
նար: Մոռցուած... Կը քուի, քէ պա-  
րագան... այնքան ալ... արտասովոր  
չէր»: Համի անձնական աշխարհը կը նը-  
մանի խենթ գծադրիչին ունեցած ցնորք-  
ներուն: Աւելին. ի՞նչ է շահեկանութիւ-  
նը այն թելադրանքին, որ հեղինակին  
կողմէ կը տրուի բեմադրիչին: «Դրան  
մօտ, Երեսը պատին դարձած նկար մը  
կայսել»: Այդ նկարը յիշատակ մըն է,  
ուրեմն: Կարելի՞ է ըսել, որ պատմու-  
թիւնը լուսաւոր այն երկվայրկեանն է  
մեռնող նկարիչին ենթադրականութեան,  
ա՛յն նկարիչին, որուն մահուան վկա-  
ներն ենք մենք՝ իր մտքի չուլիաներու ե-  
տին կայսած:

Պէճէթի այս թատերաւթիւնը կարե-  
լի է մեկնաբանել գոնազան մակարդակ-  
ներու վրայ: «Աւարտախաղ»ը կրնայ մէկ  
կողմէն համարուիլ մենախօսութիւն մը,  
մինչ միւս կողմէ կարելի է դայն դասել

իրրեւ բարոյագիտական թատերասաց՝  
հարուստ մարդու մը մահը նկարագրող:  
Յամենայնդէպս, այստեղ եւս կը նշմար-  
ւի հոգեբանական այն առանձին նկարա-  
դրը, որ յատուկ է Պէճէթի ստեղծած  
տիպարներուն: Փողոնն եւ Լաքին կը մէկ-  
նաբանուէին իրրեւ մարմին եւ մտածում:  
Վլատիմիրն ու Էսթրակոնը այնքան լրա-  
ցուցիչ են իրարու, որ կը թուին ըլլալ  
առանձին անհատականութեան մը երկու  
կէսերը, դիտակից եւ անդիտակից միտ-  
քը: Իւրաքանչիւրը այս երեք գոյգերէն.  
Փողոն - Լաքի, Վլատիմիր - Էսթրակոն,  
Համ - Քլոփ կապուած են իրարու ներքին  
անխզելիութեամբ մը. անոնք կ'ուզեն լր-  
քել զիրար, կը պատերազմին իրարու  
հետ, բայց եւ այնպէս կը մնան իրարմէ  
կախաւ: Առանց քու հետը, ստանց զե-  
զի դէմ (Nec tecum, nec sine te): Այս-  
պէս է յաճախ կացութիւնը մարդոց մի-  
ջեւ — օրինակ, ամուսնացած զոյգեր —  
բայց նոյն պատկերը կրնայ նաեւ զուցու-  
բերել առանձին անհատականութեան մը  
ներքին զոյութեանց կապակցութիւննե-  
րը, մասնաւորաբար այն ատեն, երբ այդ  
նոյն անհատականութիւնը ինքն իր մէջ  
պայքար մը կ'ապրի:

(Շար. 4)

ՄԱՐԹԻՆ ԷՍԼԻՆ



Ս. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ

Ն Շ Մ Ա Ր Ն Ե Ր  
ԱՐԱԲ ԳՐՈՂ ՆԵՐՈՒ  
ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ ԱՌԻԹՈՎ

I

Որքան դժուար է թերաճ երկիրներու մտաւորականներուն եւ արուեստագէտներուն կեանքը: Եթէ համայնավար աշխարհին մէջ մերթ ընդ մերթ կը փշեն ստալինեան միւնսթրիկները եւ այդ պատճառով գրողները կը նետուին հողերու մարաններու եւ ճամբարներու մէջ ու կը վերածուին երկրային քաւարաններու սահմանուած քաղաքացիներու, թերաճ երկիրներու մտաւորականներն ու արուեստագէտները պարզապէս քաղաքակրթուած քաւարանի բնակիչներ են:

Համայնավար երկիրներու մտաւորականութեան եւ այս վերջիններուն միջեւ կատարուած բազումականը մեզ կը հասցնէ այն եզրակացութեան, որ քաւարանը կը մնայ քաւարան՝ Չերմաշափը ինչ աստիճան ալ ցոյց տայ...

Ճիշդ է, որ թերաճ երկիրներու մէջ «պարոզ» մտաւորականներն ու արուեստագէտները ունին ձեռնարկ արդի ազատութիւններ, սակայն, խորքը կը մնայ նոյնը: Մտածումի կաշկանդուածը, երկրին բարոյական եւ ընկերային մակարդակի բարձրացման ի խնդիր «անկամէ» զրականութիւնը, մտաւորականին համար կը դռնան այն ահաւոր թշնամին, որ զինք կ'անդամահատէ շնչելու, շնչաւորելու եւ շնչաւորածը դրսևորելու արարքին ամէնէն էական հրամայականէն... սպառութենէն:

Արդարեւ, այլևս դոյութիւն չունին արուեստը արուեստին համար եւ արուեստը մարդուն համար հասկացողութիւնները: Գրական հրատարակը այսօր ողողուած է մարդուն տաշնապները, պարտութիւնները, խարկանքները, անկարելի յաղթանակներն ու աննկարագրելի անհեթեթութիւնները դրսևորող, մարդկային ներաշխարհի բազմազան, բարդ ու վճիռ կացութիւնները պարագրկող զրականութեամբ մը:

Ի՞նչ իտէյալի կը ձգտի այս զրակտաւորութիւնները ունին ձեռնարկ արդի ազատութիւններ, սակայն, խորքը կը մնայ նոյնը: Մտածումի կաշկանդուածը, երկրին բարոյական եւ ընկերային մակարդակի բարձրացման ի խնդիր «անկամէ» զրականութիւնը, մտաւորականին համար կը դռնան այն ահաւոր թշնամին, որ զինք կ'անդամահատէ շնչելու, շնչաւորելու եւ շնչաւորածը դրսևորելու արարքին ամէնէն էական հրամայականէն... սպառութենէն:

Ի՞նչ իտէյալի կը ձգտի այս զրակտաւորութիւնները ունին ձեռնարկ արդի ազատութիւններ, սակայն, խորքը կը մնայ նոյնը: Մտածումի կաշկանդուածը, երկրին բարոյական եւ ընկերային մակարդակի բարձրացման ի խնդիր «անկամէ» զրականութիւնը, մտաւորականին համար կը դռնան այն ահաւոր թշնամին, որ զինք կ'անդամահատէ շնչելու, շնչաւորելու եւ շնչաւորածը դրսևորելու արարքին ամէնէն էական հրամայականէն... սպառութենէն:



ՏՈՒՌՔ՝ ՍՈՒՆԷՅՍԻ ԸՏՐԻՍՍ՝— «Այդ պահում ես այ ցածր գահ-մատուրականն էի...»

նութիւնը, եթէ ոչ մարդուն մէջ պայ- քարկու, անկէ կացութիւններէն դուրս գալու եւ, մանաւանդ, «ամկատար տեմ- շեր»ու իրադարձման ի խնդիր անոր նե- րաշխարհին մէջ մարդկային արժէքնե- րուն եւ կարողութիւններուն ճանաչման ու բիրեղացման:

Իւրաքանչիւր դրող, գրող ու մարդ ըլլալն առաջ՝ անդամ է ազգի մը: Ան կը կոչուի հայ գրող, անգլիացի գրող, կամ արաբ գրող...

Մեկնելով այս իրողութենէն, զրողը մաս կը կազմէ մշակոյթի մը: Անոր վը- րայ աւելցող մէկ օղակն է ինք: Ժառան- գորդն է այդ մշակոյթին, որ ճշմարիտ գրողին գերագոյն եւ անկորնչելի հարս- տութիւնն է:

Ազդային որեւէ մշակոյթ նման է այն անջրպետին, ուր գոյութիւն ունին մեծ ու փոքր ներկայութիւններ: Այսինքն՝ ամբողջ եւ լուսուոր արբանեակներ: Ի- րաւ գրողին կը մնայ ընտրել լուսաւոր- ները, սերակէ գանձնք, իւրացնել գեղեց- կութիւնները, ապա անոնց վրայ դուժա- րել այլ քրկնակամարներէ, ուրիշ ազդե- րու անջրպետներէն քաղուած անձանօթ հարստութիւններ եւ մայր գուժարին վը- րայ բարգելով իր ինքնուրոյն ձայնը՝ դառնալ յաւելում:

Այս տեսանկիւնէն գիտած, իւրա- քանչիւր նոր գրող, դառնալու հա- մար ինքզինք արդարացնող իրաւ նոր գրողը, պարտաւոր է իր մշակոյթին հաշ-

ւոյն յաւելում արձանագրել եւ չքաւա- րորուել այդ մշակոյթի պահպանման հսկող պահակի պարտականութեամբ:

II

Մշակոյթի մը յաւերժութիւնը ապա- հովող եւ յաւելման աշխատանքին հա- մար նպատաւոր ենթահողը առաջացը- նող ամէնէն էական գործօնը՝ մտածելու եւ մտածածը ազատ կերպով գրեւորի- լու ազատութիւնն է:

Ճիշդ է, որ գրողին մտքին մէջ խը- լըրտող իւրաքանչիւր մտածում չի կըր- նար անպայման արդարացի ըլլալ: Գը- րող մը կրնայ նաեւ անարդար ըլլալ: Եզ- րակացութիւններն ու մտածումները՝ վի- ճելի: Կարօտ՝ քննարկման: Սակայն, ար- ժեւարել ինչորոշ առարկայ դարձնելով՝ գրողը արտայայտութեան միջոցներէ զրկելը եւ անոր մտածելու ազատութեան արգելք դնելու փորձերը արդար եղանակ- ներ չեն:

III

Շուրջ տարի մը առաջ, Պէյրութի մէջ Հրատարակուող «Էլ-Հաուստէս» շաբաթաթերթի սիւնակներուն լոյս տե- սաւ «Տաւը հարցումներ լիբանանցի գրողներէն Եզրիպտոսի գրողներուն» ընդ- հանուր խորագիրը կրող հարցադրոյց- յօդուածաշարքը:

Լիբանանի Գրողներու Միութեան գլխաւոր քարտուղար տեղթ. Մուհէյլ Ըտրիս, որ նաեւ Արտը Գրողներու Գաշ- նակցութեան օգնական քարտուղարն է, իր տասը հարցումներէն հետեւեալ հար- ցումը ուղղած է Արաբ Գրողներու Գաշ- նակցութեան գլխաւոր քարտուղար Եւ- սէֆ Մպահիին.

« — Զե՞ք կարծեր, որ այլեւս պէտք է որոնեմք արաբ գրողներու համա- գումարները իրենց դասակարգութեան դուրս բերող նոր եղանակներ, եւ այս- պէսով վերջ տանք այն ընթացիկ գործե- լակերպին, որ ցարդ կ'իշխէ միևնչեւ օրս կատարուած համագումարներում վրայ»:

Եզիպտոսի մշակոյթի այժմու նախարար Յուսէֆ Սպահին, օրին հետեւեալ բառերով պատասխանած էր իր օգնական քարտուղարին.— «Ինչո՞ւ համար տո՛քք. Սուէէյլ Ըտրիս, բայ՛նք համագումարներում մասնակցած ըլլալով հանդերձ նման առաջարկ մը չէ ներկայացուցած ցարդ»:

Սոյն յօդուածին հրատարակումէն շուրջ ինն ամիս անց, արուեստագէտները մեկուսացնելու միտող Եզիպտոսի այժմու նախագահին միջոցառումները պատճառ դարձան, որ Լիբանանի Գրողներու Միութեան գլխաւոր քարտուղարը ձեռնարկէ նոր պայքարի մը: Լիբանանի եւ լիբանանական արար ութսունէ աւելի գրողներու, մտաւորականներու, լրագրողներու եւ արուեստագէտներու ստորագրութիւնները կրող բողոքագիր հետագիր մը ուղարկուեցաւ նախագահ Անուար էլ Սաուսթին: Այսպէսով՝ Լիբանանի Գրողներու Միութեան գլխաւոր քարտուղարը կը հնչեցնէր առաջին ահազանգը:

Վերոյիշեալ հետագիրը ստորագրող արուեստագէտներուն մէջ ի միջի այլոց կային անունները՝ Նկարիչներ՝ Փօլ Կիրակոսեան, Արէֆ Բայէս, Թատերագիր-բեմադրիչներ՝ Ճէլալ Պուրի, Բեմոն ձապպարա, Անթուան Մուլթաթա, Լիբանանցի գրողներ՝ Ատոնիս, Լէյլա Պաւլպէթի, Սուհէյլ Ըտրիս, Ֆուատ էլ Պըշէն, Միշէլ Ասի, ու դեռ շարք մը արար ծանօթ բանաստեղծներ՝ Ապտըլ Ուահճապ էլ Պայեաթի, Մուհամմէտ էլ Ֆէյթթուրի, Մահմուտ Տարուիշ եւ ուրիշներ:

Արդարեւ, Եզիպտոսի մամլոյ սենտիքային հրատարակած հաղորդագրութեան խմբագրումին համար, որ բուն կերպով կը բողոքէր գրաֆնութեան դէմ, արար ազատ մտաւորականութիւնը ինքզինք դուռ դէմ յանդիման անսպասելի քայլերու:

Այս բողոքագիր հաղորդագրութիւնը մեկնակէտ ունենալով, 1973 Փետրուարին լոյս տեսած հրամանագրով մը նախադահ Սաուսթ մամուլի, ձայնասփիւռի, պատկերասփիւռի, Թատրոնի եւ այլ



Արար Գրողներու Դաշնակցութեան գլխաւոր քարտուղար ԵՍՍԻՍԷՖ ՍՊԱՀԻ

մարզերու մէջ աշխատող 89 արուեստագէտներ արտաքսեց Արար Ընկերվար կուսակցութենէն եւ գրկեց զանոնք արտասլառուելու ազատութենէն: Սաուսթի այս քայլը լիբանանցի եւ լիբանանական արար մտաւորականութեան մօտ առաջ բերած էր իսր ընդվզում ու Պէյրութի մէջ խմբագրուած բողոք-հետագիրը այդ մէկը արտասլառող ազդանշան կամաչ լոյսը եղաւ:

IV

Բողոք-հետագրի բանաձեւումէն մէկ ամիս ետք, 18էն 25 Մարտի ընթացքին Թունուզի մէջ զումարուեցաւ Արար Գրողներու Դաշնակցութեան իններորդ համագումարը: Արարական այլ երկիրներու գրողներու միութիւններուն շարքին՝ Լիբանանի Գրողներու Միութիւնը եւս մեկնեցաւ Թունուզ՝ շարունակելու համար Պէյրութի մէջ սկսած իմացական ազատութիւնը պաշտպանելու իր աշխատանքները:

Արդարեւ, Արար Գրողներու Դաշնակցութեան ծրագիր-կանոնագրի տասներորդ եւ տասներմէկերորդ կէտերու պաշտպանութեան լծուած լիբանանցի

գրողները ձեռնածալ չմեացին հոն, որովհետեւ ի յառաջագունէ յանձն առած էին՝

«Աշխատիլ հովանաւորել գրողը եւ պաշտպանել ազատ եւ պատուաւոր կեանք մը վարելու իր իրաւունքը», «աշխատիլ՝ պաշտպանելու համար գրողին ազգային, իմացական եւ համամարդկային հարցերու մասին արտայայտուելու եւ իր տեսակետները ամենայն ազատութեամբ դրսեւորելու իրաւունքը»:

*Լեբանահցի գրողները թունուզ գագին լուսահացի ընդհանուր սովէն տառապող իրենց եղբայրներուն հացութիւնը բարելաւելու երազներով խանդավառ:*

*Բայց պատահեցաւ անողտակին... ու տեղի ունեցաւ Հնամորէն բեմադրւած զատակերգութիւնը: Եւ արարական ստղանակահանութեան հուսատացող, յառաջագահ անուններ ընդգրկող Լեբանահի Գրողներու Միութեան պատուիրակութիւնը սալաքածի ենթարկելէ ետք Համազումարը՝ վերադարձաւ ընկճուած, յուսալքուած ու 28 Մարտին, չիրանահան մամուլին մէջ Հրատարակեց բացատրողական Հրատարականահորդաբութիւն մը, ուր դրօշակներ իր դասնութիւնը*

**Այսպէս՝**

«Ան ի պատասխան թաւուզի Գրողներու Միութեան կողմէ ստացուած հրաւերին, 17 Մարտին թաւուզ մեկնեցաւ Լիբանանի Գրողներու Միութիւնը ներկայացնող պատուիրակութիւնը, որ կը բաղկանար վեց անդամներէ, — Ահմէտ Ապու Սաատ, Փուատ Էլ իբրէն, տաճր. Միշէլ Ասի, Անթուան Մալքաֆա եւ տաճր. Սաւելյի Ըտրիս՝ պատուիրակութեան իբր նախագահ: Բացակայեցաւ տաճր. Խալիլ Էլ Հաուի՝ հիւանդութեան, եւ Ատանիս՝ ընտանեկան անակնկալ պատճառով:

«Համագումարի բացման հանդիսութենէն առաջ՝ Լիբանանի պատուիրակութեան անդամները շփման մէջ մտան համագումարին մասնակցող մէկէ աւելի արար գրողներու եւ մտաւորականներու

հետ, հաղորդելով ամենց, թէ պատուիրակութիւնը համագումարի բացման հանդիսութեան ընթացքին պիտի արծարծէ հալածանքի ենթարկուող գրողներու պարագան, զոր վնաս է պաշտպանել:

«Պատուիրակութիւնը ամենց մտազտաւ ջերմ ընդունելութիւն, որ եկաւ ամրապնդելու եւ խթանելու լիբանանցի գրողներու հաւատքն ու վնասկանութիւնը: Տակաւին հինգէ աւելի պատուիրակութիւններու նախագահներ վստահեցուցին, եւ վնասկան խօսք տալին մեր պատուիրակութեան նախագահ տաճր. Սաւելյի Ըտրիսին, երկրորդի եւ ի զինքուր գոհողութիւններու թիկունք կանգնիլ լիբանանեան պատուիրակութեան կողմէ ներկայացուած որեւէ առաջարկի, նայնիկ եթէ այս փայլը զիրենք առաջնորդէ համագումարէն փաշտելու ստիպումի մը: Ասոնց մէջ կը գտնուէր Պաղեստինցի Գրողներու եւ Լրագրողներու Միութեան նախագահը, որ սակայն, ցաւ ի սիրտ, հակասեց Պէյրութի մէջ ճշդորոշած իր կեցուածքին:

«Իր դիրքերը ամրապնդած Լիբանանի Գրողներու Միութեան նախագահը բացման հանդիսութեան ընթացքին արտադանց Եգիպտոսի, Պահլէյնի ու Մարտի մէջ իրենց իրաւունքներէն զրկուած, արտայայտուելու եւ հանրութեան հետ հաղորդակցութեան մէջ մտնելու բոլոր հնարաւորութիւններէն զրկուած գրչեղբայրներն ու Արաբ Գրողներու Դաշնակցութեան կարեւորագոյն սկզբունքները պաշտպանող բաւուր եւ կաւո իր խօսքը, ըստ որում՝

*«Այս մտածելակերպին եւ այս հոգեբանութեան համար պատիւ կը զգամ իբրեւ լիբանանեան պատուիրակութեան նախագահ, ինչպէս նաեւ իբր Արաբ Գրողներու Դաշնակցութեան օգնական ընդհանուր քարտուղար՝ Չերդ պատարժան Համազումարից առաջարկել վաւերացումը քապտուռն ուխտսին, որ կը բովանդակէ միայն մէկ կէտ: Արաբ Գրողներու Դաշնակցութիւնը, որ այսօր կը գումարէ իր իննհորդ Համազումար-*

րը, իր բուրբ ենթածիւղերով (ընդհանուր գործադիր ժարմին, բնդհանուր քարտուղարութիւն, եւ այլն) յանձն կ'առնէ կանխել եւ արգելք հանդիսանալ ժողովուրդու ազատութեան պահնէջ հանդիսացող որեւէ շարժումի՝ արարական որեւէ երկրի մէջ: Աւելին՝ գործի լծուելով, Արաբ Գրողներու Դաշնակցութիւնը պէտք է առնէ բուրբ այն անհրաժեշտ քայլերը, որոնք կը նպաստեն այսպիսի բռնակոտորութիւններու վերացման, ըլլո՛յ բողոքի ցոյցերով, ըլլա՛յ հացադուլ հռչակելով եւ կամ զօրակոչի ենթարկելով աշխարհի մտաւորականութիւնը՝ առ ի պաշտպանութիւն մտաւորականութեան ու մտաւորականի ազատութեան:

«Եւ մենք, Լիբանանի Գրողներու Միութեան հերկայացուցիչներս, կը խոստանանք ձեզի, որ պատրաստ ենք արաբ դրողին ազատութեան պաշտարին մինչեւ վերջին հանգրուանը՝ զոհարել մեր կտորիկն եւ առանձին երջանկութիւն է մեզի հրաւիրել Արաբ Գրողներու Դաշնակցութիւնը, որ յաջորդ համադամարդ տեղի ունենայ Լիբանանի մէջ՝ «Արաբական մտածողութեան ազատութիւնը» չըշահարանին ներքեւ: Ենթահակութիւն»:

«Լիբանանեան պատուիրակութեան խօսքը գանգաւն պատուիրակութիւններու անդամներուն կողմէ՝ ղնդունուեցաւ մեծ խանդավառութեամբ եւ ծափահարուեցաւ որեւէ խօսքէ աւելի: Տակաւին, համագումարին մասնակցողները գոհուեցան պատուիրակութեան ծափերով, ձեռքի պինդ սեղմումներով եւ ցերմ նախադասութիւններով կ'ազդումէին եւ շնորհակալութիւն կը յայտնէին լիբանանեան պատուիրակութեան անդամներուն՝ գնահատելով իրենց կորովի եւ պատասխանատու կեցումները, բացի Ոգիպտոսի, Մէտտական Արաբիայ եւ Քուէյթի պատուիրակութիւններէն, որոնք ցուցաբերեցին խոժոռադէմ ու թընամտական կեցումով»:

«Եւ սկսաւ մշտնափառ փոխակապութիւնը աւելանալ միջամտութիւններ, որոնց մասնակցեցան բունուզգի կարգ մը

պատասխանատուներ եւ արաբական կարգ մը դիւպլոմատներ, ամփոփելով իրենց խօսքը հետեւեալ նախադասութեան մէջ — արձանագրեցէք ձեր դիրքը, շատ բարի, այս մէկը բաւ է...»

«Հոս է որ սկսաւ կատակերգութիւնը...»

«Միջին լուծում»ի, խմամբական կայացողութիւններու սիրոյն եւ Արաբ Գրողներու Դաշնակցութեան ընդհանուր քարտուղար Սպահին «չընդգեցնելու, տրամադրութիւնները անվրդով պահելու» մտադրութեամբ՝ լիբանանեան «պատուոյ ուխտ»ը, որ կը բովանդակէր նաեւ երեք հեռագիրներ, ուղղուած՝ նախագահ Սատաթի, Պահրէյնի Էմիրին եւ Մարոքի արտաքին գործոց նախարարին, առաջարկուեցաւ փոխախօսութիւններու եւ մկրատումներու ենթարկել: Կարգ մը անդամներ դիմեցին դնփակ ֆուտարկութեան առաջարկին: Հոս միայն զգացինք, թէ լիբանանեան պատուիրակութիւնը ինչպէս է կատակերգութիւնը բեմադրող մասնագէտներու լարած քակարդին մէջ: Մոռցած էինք, թէ պատուիրակութիւնները «պաշտօնական» էին եւ լիբանանեան խօսքին առիթով ստեղծուած խանդավառութիւններն ու գորավիզ կանգնելու խստումները «պաշտօնականութեան» սահմաններէն անդին չէին անցներ: Որովհետեւ լիբանանեան պատուիրակութիւնը միակն էր, որ ուներ ազատորէն գործելու եւ իր մտածածը դրսեւորելու անկախութիւնը՝ ի վերջոյ մեր պատուիրակութիւնը միակն էր, որ ուզողակի կամ անուզողակի կերպով կ'ապաւած չէր պետութեան, կամ վարչաձեւին քաղաքականութիւնը արտայայտող մշակոյթի նախարարութեան...»

«Եւ ձայնոցեցաւ լիբանանեան առաջարկը, այո՛, «պատուոյ ուխտ» անպատի խորամանկութիւններու գործադրութեամբ չստացաւ վստահութեան ճուղէն...»

«Եւ հաս ոտի ելլելով, լիբանանեան պատուիրակութեան նախագահը բացազանչեց՝ «կը քաշուինք համադամարէն»: Սակայն, իր նարպիկ «բարեկամներ»ը

չբնականացնելն զինքն եւ փորձեցին համոզել, որ ընդունի այս «դեմակրատ» քրուականութիւնը: Ապա ան խօսք առնելով՝ ըստ, թէ իր վերջնական որոշումը պիտի յայտարարէ եզրափակիչ հանդիսութեան ընթացքին՝ պատուիրակութեան անդամներուն հետ խորհրդակցելէ ետք, որ խնդրեց Յայրապետին, որ արձանագրէ իր անունը եզրափակիչ հանդիսութեան ընթացքին արտայայտուիլ ուզողներու շարքին:

«Սակայն պատահեցաւ ճիշդ հակառակը: Կէսօրէ ետք գումարուող եզրափակիչ հանդիսութեան ընթացքին, երբ տոքթ. Սուհէյլ Լտրիս պահանջեց խօսելու իրաւունքը եւ յիշեցուց, որ առաւօտուն խոստացաւ խօսելու իրաւունք սույ իրեն: Նախագահը ըստ, թէ ընդհանուր քարտուղար Ծուսէֆ Սպահի կ'ըսէ զասիկա համազումարին իբր թող ռոտնակոխող արարք մըն է, որովհետեւ հարցը փակուած է»:

«Այս մտածումն յետ ըլլալը շեշտելէ ետք տոքթ. Սուհէյլ Լտրիս, իբր Արաբ Գրողներու Դաշնակցութեան օգնական քարտուղար պահանջեց արտայայտուելու իր առանձնաշնորհեալ իրաւունքը: Սակայն, համագումարի նախագահը յամանեցաւ արգելիք հանդիսանալ, մինչ ընդհանուր քարտուղարին շքերհը ո'չ սէլ բառ կ'արտասանէին...»

«Եւ հաս է, որ լիբանանեան պատուիրակութեան նախագահը յայտարարեց բարձրաձայն. «Կը քաշուինք համազումարէն, չէ՞ք կրնար մեզ լուսթեան դատարարել, ազատութիւնը չի լուր...»: Այս պոսթկուլէն ետք՝ լիբանանեան պատուիրակութեան հետ սրահէն դուրս ելան բանաստեղծ Ապտալա հայիֆէ (Պահրէյնի պատուիրակութեան նախագահ), բանաստեղծուի Մէլիքա Էլ-Ասիմի եւ գրագէտ Ապտալ Ճապպար Էլ Սահիմի (Մարաքի պատուիրակութեան անդամներ) ինչպէս նաեւ Թունուզի պատուիրակութեան Ճալալ Ազաճէ եւ Մահմուտ Էլ Թունուսի...»

*Այս բոլորէն ետք, կը մնայ ընդգծել*

*լիբանանեան նախաձեռնութիւնը: Յառաջագահ, ազգային, մախ կամ ալ քաղաքական զահազան վարդապետութիւններու թէ՛ համակիր եւ թէ՛ անդամակիր գրողները, Թունուզի մէջ արար մտաւորականութեան ներկայացուցիչ մտաւորականին վրայ գործադրուող Ֆիզիքական եւ Հոգեբանական բոլոր սեղմումները անտեսելու, մերժելու լիբանանեան ուզին:*

*Լիբանանը ներկայացուցած գրողները դիտակից են իրենց արուեստագէտի կոչումին: Արաբական դարթօնքի ճահակիրներէն եւ Լիբանանի Գրողներու Միութեան պատուիրակութեան նախագահ տոքթ. Սուհէյլ Լտրիս, Թունուզի հասնելէ առաջ վճարած էր իր մտաւորականի պարտքը: Սուհէյլ Լտրիսի խմբագրած ու հրատարակած «Էլ-Խուտ» ամսագիրը՝ Եգիպտոսի, Մարոքի եւ Պահրէյնի մտաւորականութեան հալածանքը քննադատած ըլլալու յանցանքով եւ կ'արգելուէր մուսուլմաններէ Եգիպտոս, Մարոք ու Պահրէյն:*

*Մէկէ աւելի դառն ճշմարտութիւններով լեցուն Հրամարական-Հազարդարուութիւնը կը լուսարանէ իր դիրքը հետեւեալ տողերով.*

« 1.— Նկատի ունենալով, որ Արաբ Գրողներու Դաշնակցութիւնը վերջնական ձեւով կը հաստատուէ արաբ պետութիւններու եմբակայ պաշտօնական հաստատութիւն մը, որ գործակցելով տիրող իշխանութեանց հետ ինքզինք կը վերածէ վարչամեթոտներու բնահանգիստեան եմբակայ այն գործիքին, որ իր այս դիմագիծին պատճառով, կը հակադրուի գրագէտին, կը դուրսցնէ ազատ մտածումի եւ արտայայտութեան բոլոր սիգնալները իրենց սաղմին սէջ խեղդելու աշխատանքներուն,

« 2.— Նկատի ունենալով, որ Արաբ Գրողներու Դաշնակցութեան կազմակերպած համագումարները այլեւս գրօսաշրջիկային ամբողջացած ձեռնարկներ են բոլոր անոնց համար, որոնք կը ցանկան կոկիկ յայտագիր, պտոյտներ, յոգնած

ջիղերու անդարրութիւն եւ... արաբ ասպնջական հիւրասիրութիւն,

«3.— Նկատի ունենալով, որ մէկէ անկի պատուիրակութիւններ յանձնառու ըլլալով իրենց երկրի իշխանութեան, — որովհետեւ «պաշտօնական» մշտնակեալ պատուիրակութիւններ են — իրենց անդամներուն մէջ տեղ տուած էին լրտեսներու, որոնց պարտականութիւնն էր պատուիրակութեան մաս կազմող ոչ-լարքային անդամներու կատարած ոչ-լատամբներուն մասին պատրաստել մանրամասն ամբաստանագրեր: Ճի՛շդ այս պատճառով, մեր կեցած էին սահմաններէն իսկ անդին անցնող համակիր այնպիսի անձեր, որոնց հետ մտնելն անվտանգութիւններ ունէին: լոնցին եւ զգուշացման մեզի հանդիպելէ, որովհետեւ կը սարսափէին գաղտնի գործակալութեանց հսկող այճերէն»:

*Մեկնելով այս դռն ճամբարութիւններէն, Լիբանանի Գրողներու Միութիւնը հրատարակեալ Արաբ Գրողներու Դաշնակցութենէն: Եւ հրատարակեալ Հարգազրուութեան Հետ Լիբանանի Գրողներու Միութիւնը յայտարարեց բարձրաձայն:*

«1.— Քաղաքական որեւէ վարդապետութեան պատկանող համակիր կամ ազատ ուրէ մտաւորականի պատրաստ ենք տրամադրել մեր կարելին: Անոր ապրուստը ապահովելու միջոցով օժանդակութիւնը չզրկանալու վճարակամութեամբ՝ պատրաստ ենք քաղցիկ ազատութեան ի խնդիր կատարուած պայճարիմ:

«2.— Լիբանանի Գրողներու Միութիւնը պատրաստ է երատարակել ուրէ արաբ մտաւորականի գեղարուեստական եւ իմացական այն բոլոր ստեղծագործութիւնները, որոնց հրատարակումը անկարելիութիւններու կը հանդիպի իր հայրենիքին մէջ, միակ այն պայմանով, որ գործը ունենայ գեղարուեստական բարձրորակ մակարդակ: Լիբանանի Գրողներու Միութիւնը որեւէ արգելք չի դնիր, որ մտաւորի միջոցով կամ գրեով հրատարակուող գործը ներկայաժամ ծածկանու-

նով մը՝ ի պահանջեալ հարկին, գիտնալ ուզել հեղինակին խնդրանքը: Լիբանանի Գրողներու Միութիւնը կը խոստանայ գաղտնի պահել յիշեալ հեղինակին անունը:

«3.— Մեկնելով իր նպատակներէն, Լիբանանի Գրողներու Միութիւնը կը յայտարարէ, որ ամէն ամբամ պիտի կազմակերպէ գրական հանդիպում մը «արաբ ազատ դրազէտներու հանդիպում» անուն տակ: Այս հանդիպումներուն պիտի հրաւիրուին արաբական աշխարհի մէջ իրենց անկախութեամբ եւ ազատ մտածելակերպով հանրածանօք գրագէտներն ու մտաւորականները: Առաջին հանդիպումը տեղի պիտի ունենայ այս տմասն»:

*Քաղաքական ճախ - ազգայնական Ատոնիսի ... շրջանակներու պատճառով քաղաքայինութիւնը միջէլ չունի՝ Բաբուն պատճառներ: Անկասկած:*

«Ազատութեան, ստեղծագործութեան եւ մտածումի» պարբերութիւնի» «Մաւալէֆ» սեփականատէրն ու խմբագրատէր Ատոնիս, իր եւ թերթի ազատ աշխատակիցներուն յանախ զլրար դրժող, կամ զարգացնող կարծիքներուն համար «Մաւալէֆ»ը զարգիւած պտուղ է նոյնիսկ Եղիպտոսի, Մուսանի, Լիպիոս, Իրաքի եւ յառաջդիմական, յեղափոխական կամ արքայական այլ երկրներուն մէջ, որովհետեւ Ատոնիս եւ «Մաւալէֆ»ը յանախ քննադատութեան նիւթ կը դարձնեն յեղափոխութեան անունով անունը ան ոչ-յեղափոխական քայլերը:

*Տիւ եւ դիշեր մտաւորական սանձարձակ ազատութիւն շեփոթող Ատոնիս չէր կրնար դեր մը վերցնել նման համադրման մը մէջ, երբ դիտէր, թէ արաբական զանազան գրողներու միութիւնները ենթակայ ըլլալով իրենց երկրի մշակութային նախարարութեանց, համադրմանը պիտի վերածէին ժայնադուած եւ ճճատրէն բեմադրուած կատակերգութեան մը:*

*Օրինակ մը, որ լուսադոյնս կը քաջատրէյայս պարագան:*

Եզրկտոսի պատուիրակութեան նախազանգը՝ Երեմիայի Սպանի, Քունուզէն հազիւ իր հայրենիքը վերադարձած, նախազանց Սատաթի որոշումով կը նշանակուէր մշակոյթի նախարար, իսկ պատուիրակութեան միւս անդամներէն ոմանք կ'արժանանային բարձր պաշտօններու:

Յեղափոխական Եզրկտոսը ներկայացնող պատուիրակութեան անդամներուն մէջ կային անցեալին, այսինքն՝ թաղաւոր Ծարուքի եւ արքունիքին պառզապապաշտ քերթողներէն անձեր:

Եզրկտոսի պատուիրակութեան մաս չէր կազմեր երիտասարդ եւ նորագոյն բանաստեղծութեան սերունդներէն նոյնիսկ մէկ ներկայացուցիչ:

Սալահ Ապտըլ Սապուրի եւ Սուհամմէտ Աֆիֆի Մաթարի նման արաբական ողջ աշխարհի տարածքին վստահութիւն եւ համբաւ վայելած զոյգ սերունդներէն ո՛չ մէկ ներկայացուցիչ ներկայ էր Քունուզ: Ընդհակառակն, Ծարուք թաղաւորի օրերէն մնացած, դասական լարերու վրայ տափակ ոտանաւորներ շարադրող անուններով խճող-

ւած էր Եզրկտոսի պատուիրակութիւնը...

Քաղաքական երեք տարբեր ուղիներ որդեգրած երկիրներու մէջ հալածուող արար եղբոր հարցը ի՞ր դատը հռչակելով, Լիբանանի Գրողներու Միութիւնը կու գայ հաստատելու, որ այս փոքրիկ երկրին մէջ Բամը սուրբ է սուկաւին...:

Այս փոքրիկ երկրին մտաւորականութեան համար ազատութիւնը վեր է ամէն վարչաձեւէ, որովհետեւ՝ ազատութիւնը ստեղծագործութիւն է:

Այս երկրին մէկ իրաւ զաւկին՝ Ունսի էլ շանի պատկերաւոր բացատրութեամբ — «Ազատութիւնը ամբողջութիւնն է: Ազատութիւնը քարցիմ մէկ կէտը չէ, վէպի մը հատուածը չէ, գրուի մը չէ օրէնսդրութեան մասնամիմ մէջ, համաձայնագի մը մէկ եղանակը չէ միայն: Այլ, ընդհակառակն, ի՛նքն է համաձայնագր, ամբողջական համաձայնագր...»

Յիրաւի, ողջոյնի տրժանի է անազատութիւններու դիմաց ազատ կերպով ծառայող լիբանանեան մտաւորականութիւնը...

ՍԱՐԳԻՍ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ






ՇՆՈՐ ՀԱԿԱԼՈՒԹԵԱՄԲ ՍՏԱՅԱՆՔ

•

- Հին էջեր, ՈՐՈՆՔ Մեխնիկ Զեյ ՈւՋԵՐ (յուշեր) Մամսե Գաբրիէլ-  
եան, Պէյրուք, 1973
- ԱՐԵՒԱԳԱԼ (քանաստեղծութիւն) Խոսրով Առոյեան, Պէյրուք, 1973
- ՄՐՏԲԱՑ ԵՈՍՏՈՎԱՆՈՒԹԻՒՆ (խորհրդածութիւններ), Սիմոն Հովիւ-  
եան, Պէյրուք, 1973
- ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՄԱՄԻԻՐԷԹ ԻԿԼ ԱԶԻԶԻ ԳԵՐՄԱՆ ՈՐԲԱՆՈՑՆԵՐՈՒ  
(յուշագրութիւն) Բ. Կ. Ժամկոչեան, Պէյրուք, 1973
- ՄՇՈՑ ԲԱՐԲԱՌԸ ԵՒ ԻՐ ԺՈՂՈՎՈՒՐԳԻՆ ԳԻՄԱՍՏՈՒԵՐԸ (ուսումնա-  
սիրութիւն) Սմբատ Շահնազարեան, Պէյրուք, 1972
- ԱՍՏ ՀԱՆԳՁԻ... (պատմութիւններ) Կարօ Բարսեղեան, Պէյրուք, 1973



ՏԱՐԵԿԱՆ ԲԱԺՆԵԳԻՆ

ԼԻՐԱՆԱՆ	25 Լ. ՌՄԿԻ
ԱՐՏԱՍԱՀՄԱՆ	10 ՏՈՒՍՐ
ՀԱՏԱՎԱՃԱՌ	2.50 Լ. ՌՄԿԻ

**پاكين**  
مجلة شهرية ، ادبية وفنية علمية  
مدير المسؤول  
السيد اوتين كارنيك قزنجيان

**PAKINE**  
REVUE MENSUELLE  
LITTÉRAIRE & ARTISTIQUE  
Propriétaire  
Dr. A. KAZANDJIAN

**Բ Ա Գ Ի Ն**  
ԱՄՍԱԳԻՐ  
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ  
ՆԱ ԵՐՈՒՆԵՍԻ

ՎԱՐԻՑ ԽՐԱԳԻՐ  
Կ. ՍԱՍՈՒՆԻ  
ԽՐԱԳԻՐ  
Գ. ՍՆԱԳՅԱՆ

Հեռագրային՝ 296898

Վարչությունի հասցե

G. SASSOUNI  
Rue Sélim Boustani  
Beyrouth - Liban